Հ. Վ. ԹՈՐՈՍՅԱՆ

# ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVI—XVIII ԴԴ.

ԵՐԵՎԱՆ 1991

Ակադեմիա

АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ИСТОРИИ

Г. В. ТОРОСЯН

# СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ КРЕСТЬЯНСТВА ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В XVI—XVIII ВВ.

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ
ЕРЕВАН 1991

9(479.25)
ДУБЛЕТ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Վ. ԹՈՐՈՍՅԱՆ

# ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVI—XVIII ԴԴ.

А II 82297

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1991

ԳՄԴ 63. 3 (2Հ) 43
Թ 822

*Տպագրվում է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու*
Ս. Խ. Ալեքսանյան

*Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Վ. Ա. Բայբուրդյանը և պատմական գիտությունների թեկնածու Վ. Հ. Փափազյանը*

Թորոսյան Հ. Վ.

Թ 822 *Արևելահայ գյուղացիության սոցիալ-տնտեսական դրությունը XVI—XVIII դդ. /[Պատ. խմբ. Ս. Խ. Ալեքսանյան]; Հայաստանի ԳԱ. Պատմ. ին-տ—Եր.: Հայաստանի ԳԱ հրատ., 1991—159 էջ.*

*Աշխատությունը նվիրված է հայ ժողովրդի արևելահայ հատվածի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության մի շարք կարևոր հարցերի լուսաբանմանը: Նորահայտ աղբյուրներով բացահայտված է հողային մասնավոր սեփականության բնույթը, լուսաբանված է եկեղեցական հողատիրության ու վանական տնտեսության պատմությունը, վեր են հանված ավատական հողային ռենտայի դրսևորման ձևերն ու առանձնահատկությունները: Ցույց է տրված, որ Արևելյան Հայաստանը գտնվելով օտար տիրապետության տակ, չի զրկվել տնտեսական իր ինքնուրույնությունից:*

*Նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:*

Թ $\frac{0503020913}{703\ (02)-91}$ 20—91 ԳՄԴ 63. 3 (2Հ) 43

© Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1991

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XVI դարի սկզբին Մերձավոր ու Միջին Արևելքի հզոր տերությունների սեֆյան Իրանի և օսմանյան Թուրքիայի միջև հակասությունների ծայրահեղ սրումը հանգեցրեց միմյանց հաջորդող թուրք-իրանական արյունահեղ պատերազմների։ Պատերազմների թատերաբեմը Հայաստանն էր։ Դրանք ուղեկցվում էին հայկական գյուղերի ու քաղաքների ավերմամբ, բնակչության կոտորածով ու գերեվարությամբ։ Առանց բացառության քայքայվում էին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը։ Հայ երկրագործի տնտեսությունը հետզհետե կորցնում էր իր նշանակությունը երկրի տնտեսական կյանքում։ Տիրանալով երկրագործական համեմատաբար բարձր կուլտուրա ունեցող այնպիսի մի երկրի, ինչպիսին Հայաստանն էր, իրանական ու թուրքական քոչվորական ցեղախմբերը տեղի արգավանդ հողերը օգտագործում էին հիմնականում որպես արոտավայրեր, քանի որ նվաճողների տնտեսական քաղաքականությունը բնութագրվում էր նրանով, որ վերջիններս բոլոր միջոցները գործադրում էին երկրի տնտեսական կառուցվածքը իրենց քոչվորական կյանքի պարզունակ կառուցվածքին համապատասխանեցնելուն։ «Քոչվոր ցեղերի մոտ,—գրում է Կ. Մարքսը,—հողը բնական մյուս պայմաններին համահավասար հանդես է գալիս իր նախնական անսահմանափակության մեջ, օրինակ, Ասիայի տափաստաններում և ասիական սարահարթերում։ Այդ հողն օգտագործվում է որպես արոտատեղի և այլն, այդ հողի վրա տարածվում են հոտերը, որոնցով իրենց հերթին գոյություն են պահպանում հովվական ժողովուրդները։ Այստեղ իբրև յուրացվում և վերարտադրվում է միայն հոտը և ոչ թե հո-

ղը, որը սակայն, յուրաքանչյուր իշխանում ժամանակավորապես օգտագործում են միատեղ»[1]: Նվաճողների տնտեսական քաղաքականության նպատակն էր առավելագույն չափով երկրից դուրս կորզել նյութական միջոցները՝ աշխատավոր մասսաների անզուսպ շահագործման, կեղեքման, կողոպուտի ու բռնագրավման միջոցով: Այդ նպատակին էր ուղղված նրանց վարչական, ագրարային ու հարկային քաղաքանությունը:

Հարկ է նշել, որ հայ բնակչության նկատմամբ Աբաս I վարած տեղահանման ու նրա մի մասի ոչնչացման քաղաքականությունը, պատերազմական իրադրությունից ելնելով, Իրանի համար մի կողմից ուներ տակտիկական նշանակություն, մյուս կողմից նա հետագայում զրկվելու էր Արևելյան Հայաստանի տարածքի տնտեսական պոտենցիալից: Ահա թե ինչու 1639 թ. Կասրե-Շիրինի հաշտության պայմանագրի կնքումից հետո, երբ ավարտվեցին պատերազմներն ու հաստատվեց համեմատաբար երկարատև խաղաղության մի ժամանակաշրջան, սեֆյան տիրակալները պետության տնտեսական շահերից ելնելով, սկսեցին օժանդակել արևելահայ աշխատավորության շինարարական ձեռնարկումներին: Սկսվում է վերականգնվել գյուղատնտեսությունը, աշխուժանում են արհեստները, առևտուրը ու տնտեսական կյանքի մյուս բնագավառները: Եվ չնայած XVIII դարի 20—30-ական թվականներին Արևելյան Հայաստանի տարածքը կրկին դարձավ թուրք-իրանական հակամարտությունների թատերաբեմ, այնուհանդերձ ողջ դարը մեր ժողովրդի պատմության մեջ նշանավորվեց այնպիսի երևույթներով, որոնք նոր մղում հաղորդեցին նրա թե՛ տնտեսական ու մշակութային և թե՛ քաղաքական զարգացմանը: Հայ ժողովուրդը կանգնեց ազգային ինքնաճանաչման ուղու վրա և սկսեց որոնել օտար լծից ազատագրման ուղիներ:

Թեև XVI—XVIII դդ. Արևելյան Հայաստանի քաղաքական պատմության, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը չի վրիպել հայ պատմագիտության երախտավորների ուշադրությունից, այ-

նուհանդերձ առանձին հարցեր կարոտ են լուսաբանման կամ նորովի լուսաբանման։ Եթե ժամանակի ագրարային հարաբերությունների էությունը բացահայտող ամենակարևոր պրոբլեմի՝ հողատիրությանը վերաբերող հարցերի քննարկումը գտնվել է մասնագետների ուշադրության կենտրոնում, ապա նույնը չի կարելի ասել այդ հարաբերությունները բնութագրող մյուս կողմերի՝ հողային ռենտայի դրսևորման ձևերի, գյուղական համայնքի ու գյուղացիության սոցիալական դրության մասին։ Մասնագետների ուշադրությունից դուրս է մնացել Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի պատմությունը, մինչդեռ տնտեսությունը, նրա զարգացման կոնկրետ օրինաչափությունները բացահայտելը այդ հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման հիմնական խնդիրն է։ Սխալ կլինի կարծել, թե Արևելյան Հայաստանը գտնվելով սեֆյան Իրանի տիրապետության տակ լիովին զրկվել է տնտեսական իր ինքնուրույնությունից և դարձել տիրապետողների վարչական ու տնտեսական սիստեմի դիմազուրկ կցորդ։ Նա ապրել է իր ինքնուրույն տնտեսական կյանքով։ Հետևապես հայ ժողովրդի արևելյան հատվածի պատմության մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքի ամբողջական ուսումնասիրության համար անհրաժեշտ է ի մի բերել տարիների ընթացքում կուտակված մեծ քանակության աղբյուրները, որոնք այսօր նոր կռվան են հանդիսանում մի շարք հարցերի համակողմանի քննարկման համար։

Սույն ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր ծառայել են առաջին հերթին հայկական մատենագրական երկերը։ Ժամանակագրական կարգով հայ մատենագիրներից առաջինը Գրիգոր Դարանաղցին է (կամ Կամախեցի), որի «Ժամանակագրութիւն»[2] աշխատությունը պարունակում է կարևորագույն փաստեր 1595—1640 թթ. քաղաքական իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև երկրի տնտեսական կյանքի մասին, մասնավորապես գյուղացիության իրավական դրության, հարկային համակարգի, ապրանքադրամական հարաբերությունների մասին և այլն։

Մատենագրական աղբյուրների մեջ մեծ արժեք է ներկայացնում Առաքել Դավրիժեցու աշխատությունը[3]։ 1651 թ. կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցու առաջարկությամբ Դավրիժեցին սկսել է շարադրել իր «Պատմութիւնը», որն ավարտել է 1662 թ.։ Դավրիժեցու աշխատության հիմնական ուղղությունը ևս երկրի քաղաքական կյանքի պատմության պատկերումն է։ Այն արժեքավոր տվյալներ է պարունակում թուրք-իրանական պատերազմների, դրանց ուղեկցող սովի ու ավերածությունների, ջալալիների շարժման մասին և այլն։ Մատենագրի ուշադրությունից դուրս չեն մնացել նաև երկրի տնտեսական կյանքին վերաբերող հարցերը։ Ավելին, աշխատության առանձին էջերում հեղինակը հանգամանորեն անդրադառնում է աշխարհիկ ու վանական տնտեսությունների աճի ու զարգացման պատմությանը, գյուղատնտեսության, արհեստի ու առևտրի հետ կապված հարցերին։

Դավրիժեցին ստուգապատում պատմիչ է։ Շատ բաների մասին նա գրում է որպես ականատես, իսկ ինչ վերաբերում է ուրիշներից լսած տեղեկություններին, ապա դրանց շատ զգույշ և քննադատորեն է մոտենում. «Եւ աւուրս յոլովս,—գրում է նա իր գրքի հիշատակարանում,—ի սմին դեգերելով և ի յոլով երկիրս և յաշխարհս շրջագայելով ի խնդիր զրուցաց պատմութեան, ոչ միայն ի քրիստոնէից, այլ և յայլոց ազանց հարցանելով և ամենեցունց զասացեալսն գրելով, և վասն զստուգութիւն բանին գտանելոյ, եղև զմի պատմութիւն, տասն անգամ և այլ աւելի կրկնելով գրեցի»[4]։

Կարևոր մատենագրական աղբյուրներից մեկն էլ Զաքարիա սարկավագ Քանաքեռցու «Պատմագրութիւն» աշխատությունն է[5]։ Զաքարիա Քանաքեռցին հաղորդում է մի շարք արժեքավոր տեղեկություններ երկրի վարչական կառուցվածքի ու ագրարային հարաբերությունների մասին։ Քանաքեռցու երկը միաժամանակ հարուստ նյութ է պարունակում գյուղական համայնքի ու Արարատյան նահանգի տնտեսական կյանքի մասին։ Նա հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև արհեստագործության ու առևտրի մասին։

Որպես սկզբնաղբյուր առանձնակի կարևորություն ունի

Զաքարիա Ագուլեցու աշխատությունը[6]։ Այն շատ արժեքավոր է ժամանակի թե քաղաքական պատմության և թե սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման համար։ Հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ագուլեցու հայտնած տեղեկությունները գյուղական համայնքի կառուցվածքի, նրանում եղած ներքին հակասությունների, համայնքից պետական հարկերի գանձման, տուրքերի վճարման, մասնատիրական հողային ռենտայի մասին և այլն։

Պակաս կարևորություն չունի նաև Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւն յաշխարհին Աղուանից» աշխատությունը[7], որտեղ հեղինակը զանազան առիթներով խոսում է բնակչության էթնիկական տեղաբաշխվածության, դրաղմունքի, հարկային համակարգի, արհեստավորական արտադրության ու առևտրի մասին։

Ժամանակի ավատական արտադրահարաբերությունների պատկերը արտացոլված է Աբրահամ Կրետացու երկում[8]։ Այստեղ մեծ քանակությամբ փաստական նյութ է կուտակված Արևելյան Հայաստանի ոչ միայն ագրարային հարաբերությունների, երկրի վարչատնտեսական կառուցվածքի, այլև տնտեսության առանձին ճյուղերի՝ մասնավորապես երկրագործության մասին։

Մատենագրական աղբյուրների մեջ թեմայի ուսումնասիրման առանցքն է կազմում Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատությունը[9]։ Այն հիմնականում բաժանվում է չորս մասի. ա) հայկական եկեղեցու ու նրա աթոռանիստ կենտրոնի պատմություն, բ) էջմիածնի վանքի տնտեսության պատմություն, գ) հայ եկեղեցուն իրանական ու թուրքական իշխանությունների կողմից տրված հրամանագրերի սեղմ շարադրում, դ) Արևելյան Հայաստանի մնացած եկեղեցիների ու վանքերի տնտեսության պատմության նկարագրություն։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սիմեոն Երևանցու հայտնած տեղեկությունները հողատիրության ձևերի, մասնավոր տիրույթների ձեռքբերման միջոցների, ավատական հողային ռենտայի տեսակների վերաբերյալ։ Շատ կարևոր են նաև ջրատիրական իրավունքի ու ջրօգտագործման

ձևերի, գյուղական համայնքի, գյուղացիության սոցիալական վիճակի, նրա ավատական կախման բնույթի վերաբերյալ հայտնած տեղեկությունները։

Հատկապես արժեքավոր են Սիմեոն Երևանցու վկայությունները Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի՝ մասնավորապես գյուղատնտեսական արտադրանքի աճի, ջրանցքների անցկացման, հացահատիկային, տեխնիկական ու այգեգործական կուլտուրաների մշակության, գյուղատնտեսական գործիքների, հողամշակության ձևերի, գյուղացիության անասնապահական զբաղմունքի մասին և այլն։

Արժեքավոր սկզբնաղբյուրներից մեկն էլ «Վաղարշապատեցի Յարութիւն Արարատեանի կեանքը»[10] անունը կրող ինքնակենսագրական բնույթի երկն է, որտեղ կան արժեքավոր շատ տեղեկություններ XVII—XVIII դարերի Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի, մասնավորապես գյուղատնտեսության ճյուղերի վերաբերյալ։

Պակաս կարևորություն չունեն Մ. Թաղիադյանցի ուղեգրությունները[11]։ Թեև դրանք հիմնականում վերաբերում են XIX դարի առաջին կեսին, այնուհանդերձ իբրև սկզբնաղբյուրներ մեծ արժեք են ներկայացնում Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի ուսումնասիրության համար։

Սույն ուսումնասիրության համար հիմնական աղբյուրներ են հայերեն ձեռագրերի հիշատակարաններն ու ժամանակագրությունները, որոնց հեղինակները լինելով նկարագրվող դեպքերի ժամանակակիցը, հաճախ նաև այդ դեպքերին ականատես, հաղորդում են ճշգրիտ տեղեկություններ մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ[12]։

Աղբյուրագիտական մեծ արժեք ունեն ՀՀ Մինիստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի «Կաթողիկոսական դիվան» ֆոնդում պահվող վավերագրերը[13], որոնք ըստ իրենց բնույթի բաժանվում են չորս խմբի։ Վավերագրերի առաջին խմբի մեջ մտնում են այն արձանագրությունները, որոնք դուրս էին գալիս մուսուլմանական բարձրագույն հոգևոր օրենսդրական խորհրդից (շար), կամ

էլ առանձին նոտարական գրասենյակներից։ Դրանք հիմնականում վերաբերում են անշարժ գույքի առուծախին, վարձակալմանը, նվիրատվությանը և այլն։ Վավերագրերի երկրորդ խմբում առանձնացվում են շահական արքունիքի գերատեսչություններից հայ հոգևոր հաստատություններին տրված առանձին հրովարտակները՝ վանքերի ու եկեղեցիների նախկին իրավունքները վերահաստատելու, վանական հողերից ու ստացված բերքից հարկեր գանձելու, վանքապատկան գյուղերի ցուցակները հաստատելու մասին և այլն։ Վավերագրերի երրորդ խմբում հիմնականում ընդգրկված են նույն բնույթի հրովարտակները՝ տրված տեղական գերատեսչական մարմիններից։ Եվ վերջապես մեծ թիվ են կազմում չորրորդ խմբի փաստաթղթերը, որոնք վերաբերում են վանքապատկան համայնքների բնակչությանը, այդ համայնքները եկեղեցական թեմերի մեջ հաստատելուն, վանական տնտեսությունների ելքին ու մուտքին և այլն։ Այստեղ միաժամանակ տեղեկություններ կան գյուղացիների հողօգտագործման իրավունքների, ջրատիրության ու ջրի օգտագործման կարգի, երկրագործական կուլտուրաների մշակության, անասնապահական զբաղմունքների և շատ այլ հարցերի մասին։

Իրենց պարունակած հարուստ ու հավաստի տեղեկություններով վստահելի սկզբնաղբյուրներից են նաև Մատենադարանի առանձին ձեռագրերը[14]։ Նրանց հաղորդած տեղեկությունները երկրի տնտեսական կյանքի մասին ավելի որոշակի ու կոնկրետ են և ուշադրության արժանի։

Օգտագործել ենք նաև առանձին վավերագրեր, որոնք պահվում են ՀՀ պետական պատմական արխիվի ֆոնդերում[15]։ Դրանք հիմնականում վերաբերում են տարբեր անձանց միջև հողային սեփականության ժառանգման առթիվ ծագած վեճերին, հողատարածությունների օտարմանը, գյուղական համայնքների միջև ջրօգտագործման շուրջ առաջացած տարաձայնություններին և այլն։

Որպես կոնկրետ նյութ պարունակող սկզբնաղբյուրներ գիտական մեծ արժեք են ներկայացնում վիմական արձանա-

գրությունները։ Ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքի գրեթե բոլոր բնագավառներին վերաբերող բազմակողմանի ու հարուստ փաստական նյութի պարունակությամբ դրանք չունեն իրենց հավասարը։ Այդ կապակցությամբ տեղին է հիշել Լեոյի հետևյալ խոսքերը. «Արձանագրությունները կյանքի վավերագրերն են։ Խորասուզվելով նրանց ուսումնասիրության մեջ, մենք տեսնում ենք, թե անցած գնացածը ինչ իրականություն ուներ առօրյա կյանքի մեջ։ Այնտեղ ժողովուրդն է իր իրավաբանական հասկացություններով, ժողովուրդը իբրև կալվածատեր, իբրև աշխատող, իբրև հարկատու հպատակ»[16]։ Վիմական արձանագրությունների մի մեծ մաս 1913 թ. Կարապետ Կոստանյանցի կողմից հրատարակվել է «Վիմական տարեգիր» վերնագրով[17]։ Վիմական ոչ քիչ թվով արձանագրություններ էլ հրատարակված են Ղ. Ալիշանի ուսումնասիրություններում[18], որոնցում արժեքավոր շատ տեղեկություններ կան քննարկվող ժամանակաշրջանի Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ։

Սույն ուսումնասիրության համար առանձնապես կարևոր նշանակություն ունեն օտար գրավոր սկզբնաղբյուրները, որոնցից առանձնանում են հատկապես պարսկերեն վավերագրերը։ Այդ վավերագրերի արժեքը նրանում է, որ դրանք անմիջականորեն և ստույգ կերպով արտացոլում են իրականությունը, արձանագրում կառավարության քաղաքականության մեջ տեղի ունեցած բոլոր փոփոխությունները, հուսալի են թվականների, անունների և ընդհանրապես փաստական նյութի տեսակետից։ Այդ վավերագրերի մի մասը ուսումնասիրվել ու հայերեն են թարգմանվել Ս. Ջալալյանցի, Հ. Շահխաթունյանցի, Հ. Տեր-Հովհանյանի, Մ. Սմբատյանցի, Մ. Բարխուդարեանցի և Հ. Աճառյանի կողմից[19]։ Պարսկերեն վավերագրերը ուսումնասիրված ու լայն չափով օգտագործված են Ի. Պետրուշևսկու ուսումնասիրություններում[20]։

Պարսկերեն աղբյուրների գիտական վերհանման գործում մեծ է Հ. Փափազյանի վաստակը։ Ընդարձակ առաջաբաններով ու հարուստ ծանոթագրություններով կազմած նրա «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը»[21] ժողովածուները

հարուստ նյութ են պարունակում XVI—XVII դդ. Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին։ Այստեղ գտնում ենք փաստաթղթեր՝ ինչպես առանձին անձնավորություններին, այնպես էլ հոգևոր հաստատություններին սեֆյան տիրակալների հողային առանձնաշնորհումները, ռենտա-հարկը գանձելու իրավունքի, երկրի հարկային համակարգի մասին և այլն։

Պարսկերեն կարևոր սկզբնաղբյուրներից մեկն էլ անգլերեն թարգմանությամբ Վ. Մինորսկու հրատարակած „Tadhkipat al-muluk" երկն է[22]։ Թեև այն հիմնականում վերաբերում է սեֆյան Իրանի վարչական սիստեմին, բայց և այնպես կան ընդարձակ վկայություններ թե ագրարային հարաբերությունների և թե տնտեսական կյանքի վերաբերյալ։

Սույն ուսումնասիրության համար պակաս կարևորություն չեն ներկայացնում թուրքական[23] ու վրացական[24] աղբյուրները, որոնց հաղորդած տեղեկությունները հողատիրության, հարկային համակարգի, բնակչության սոցիալական դրության, գյուղացիության զբաղմունքի առանձին ճյուղերի մասին լրացնում են հայկական աղբյուրներին ու հնարավորություն տալիս ավելի ընդգրկուն լուսաբանելու XVI—XVIII դարերի Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի զանազան կողմեր։

Աղբյուրագիտական մեծ արժեք են ներկայացնում եվրոպական ուղեգրողների, կաթոլիկ միսիոներների ու դիվանագետների գրառումները։ Առանձնանում են հատկապես Ժ. Շարդենի, Ժ. Տավերնիեի ու Ա. Օլեարիուսի երկերը[25], որոնցում մեծ քանակությամբ փաստական նյութ կա գյուղացիության զբաղմունքի, բնակչության սովորույթների, հավատի և բազմաթիվ այլ հարցերի մասին։

Աղբյուրագիտական արժեք են ներկայացնում նաև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո ցարական աստիճանավորների կողմից երկրի տեղագննման արդյունքներն ամփոփող փաստագրական ժողովածուներն ու առանձին հետազոտություններ[26], որոնցում կան ուշագրավ տեղեկություններ արևելահայ գյուղացիության զբաղմունքի հիմնա-

կան ճյուղերի, նրանց աշխարհագրական տեղաբաշխվածության, մշակվող կուլտուրաների տեսակների, գյուղատնտեսական գործիքների, ջրոռոգման համակարգի և բազմաթիվ այլ հարցերի մասին:

XVI—XVIII դարերի Արևելյան Հայաստանի ավատական հարաբերությունների պատմության ուսումնասիրության գործում զգալի ներդրում է կատարել նախախորհրդային հայ պատմագիտությունը:

Նախախորհրդային շրջանի հեղինակներից գիտահետազոտական բեղմնավոր աշխատանք է կատարել Ս. Եղիազարովը: Թեև գյուղական համայնքի պատմությանը նվիրված նրա ստվարածավալ մենագրությունում[27] մեծամասամբ արծարծվում են XIX դարին վերաբերող հարցեր, բայց և կարևոր դիտողություններ կան XVII—XVIII դարերի Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի մասին: Հատկապես ուշադրության է արժանի Ս. Եղիազարովի տեսակետը հողային սեփականության հարցի վերաբերյալ: Համադրելով խանական ժամանակաշրջանի հողային հարաբերությունների վերապրուկները միջնադարյան Եվրոպայի ու Ռուսաստանի հողային հարաբերությունների հետ, նա գտնում է, որ Արևելյան Հայաստանում թեկուզ մասնակիորեն գոյություն է ունեցել հողի մասնավոր սեփականություն: Անդրադառնալով գյուղական համայնքի պատմությանը, Ս. Եղիազարովը իրավացիորեն հանգում է այն տեսակետին, որ համայնքը այն հավաքական կազմակերպությունն էր, որի վրա էր դրված հարկերի ու տուրքերի ժամանակին գանձումը և որ այն հանդիսանում էր գյուղատնտեսական արտադրության կազմակերպման հիմնական օղակը:

Ուշ միջնադարյան Հայաստանի ագրարային հարաբերությունները, գյուղացիության սոցիալ-իրավական վիճակի հարցերը քննարկված են Հ. Մուսայելյանի «Անդրկովկասի հողային պայմանները»[28] աշխատությունում: Իրավացիորեն նշելով, որ ուշ միջնադարյան Հայաստանում երբեք եվրոպական տեսքով ճորտություն գոյություն չի ունեցել, հեղինակը հակված է եղել կարծելու, թե գոյություն է ունեցել

հողի ու թե մասնավոր, այլ պետական սեփականություն։

Հողատիրությանը վերաբերող հարցերում նույն կարծիքին է Լ. Տիգրանովը[29]։ Հիմք ընդունելով, որ Ղուրանը բացառում է հողի մասնավոր սեփականությունը, Լ. Տիգրանովը պնդում է, թե հողի օտարումը կռվան չի կարող ծառայել նրա մասնավոր սեփականատիրման գոյությունը հաստատելու համար։

Վաստակաշատ պատմաբան Լեոն նախախորհրդային շրջանում գրած «Հայոց պատմություն»[30] եռահատոր աշխատության վերջին մասում վեր է հանել Արևելյան Հայաստանի ծանր վիճակը թուրք-իրանական պատերազմների ժամանակաշրջանում, փաստագրական հարուստ տվյալներով լուսաբանել շահական Իրանի ագրարային քաղաքականության էությունը։ Անդրադառնալով հողային սեփականության հարցին Լեոն իրավացիորեն գտնում է, որ մահմեդական իրավունքը թեև սկզբունքով մասնավոր հողային սեփականություն չէր ճանաչում և պետությունն էր բոլոր հողերի տերը, բայց իրապես խլամ տիրապետությունն անկարող եղավ միանգամայն արմատախիլ անել այն հողային հարաբերությունները, որ նա գտնում էր իր նվաճած երկրներում։ Աշխատության առանձին էջերում անդրադառնալով գյուղացիության իրավական դրությանը, Լեոն լուսաբանում է նաև գյուղական համայնքի կառուցվածքին ու ջրառոգման համակարգին վերաբերող մանրամասնություններ։

Նախախորհրդային շրջանի ռուս և օտար ուսումնասիրողներից հիշատակության արժանի են Մ. Կուլաևի, Վ. Իվանենկոյի, Ս. Եսաձեի, Ի. Սեգալի, Ա. Հաքստհաուզենի և այլոց աշխատությունները[31], որոնցում թեև արծարծվում են XIX դարին վերաբերող հարցեր, բայց և կան ընդհանրացումներ նախորդ դարի վերաբերյալ։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության գործում մեծ ներդրում է կատարել խորհրդային պատմագիտությունը։

Խորհրդային պատմաբաններից առաջինը վաստակաշատ գիտնական Թ. Ավդալբեկյանն էր, որ առանձին ուսումնասիրության նյութ դարձրեց XVII—XVIII դարերի Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերություններին վերաբերող հարցերը[32]։ Առանձին նշանակություն տալով եկեղեցական հողատիրության ուսումնասիրությանը, հեղինակը մանրամասնորեն անդրադարձել է եկեղեցու հողային տիրույթների ընդարձակման պայմաններին, նվիրաբերված ու գնված հողատարածությունների տնօրինման կարգին, եկամտաբեր օբյեկտների ապահարկման կարգին և այլն։

Գյուղացիության ավատական կախվածության բնույթի վերլուծությանն է նվիրված ականավոր արևելագետ Վ. Բարտոլդի «Իրանում ֆեոդալիզմի հարցի շուրջը»[33] ուսումնասիրությունը, որում հեղինակը հանգում է այն ճիշտ տեսակետին, որ գյուղացիության ավատական կախումը իրանական տիրապետության սահմաններում պայմանավորված էր սոսկ հարկատվությամբ և որ նա անձնապես ազատ էր ու ինքնուրույն տնտեսություն էր վարում։

Քննարկվող ժամանակաշրջանի վանքային խոշոր տնտեսությանն ու Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններին առնչվող այլ հարցերի լուսաբանմանն է նվիրված Բ. Հարությունյանի մենագրությունը[34]։ Հեղինակը արխիվային վավերագրերի հիման վրա ցույց է տվել քաղաքական ու տնտեսական այն բարենպաստ պայմանների առկայությունը, որոնցում զարգացում ապրեց վանական տնտեսությունը։ Հարկ է նշել, որ մի շարք հարցերում հեղինակի տեսակետները ընդունելի չեն։ Այսպես, «Վարձու աշխատանքը Երևանի խանության մեջ XVIII դ. և XIX դ. առաջին քառորդում» հոդվածում[35], հեղինակը կարծում է, թե էջմիածնի վանական տնտեսությունում մեծ չափերի հասնող վարձու աշխատուժի օգտագործումը մատնացույց է անում ավատական կարգերի քայքայումը։

Եկեղեցական հողատիրության պատմության ուսումնասիրմանն է նվիրված Ս. Պողոսյանի «Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում XVII—XVIII դարերում

և էջմիածինը որպես խոշոր կալվածատեր»[36] աշխատությունը։ Պատմական ակնարկով ներկայացնելով XVI—XVII դարերի քաղաքական իրադրությունը, որի ֆոնի վրա պարզորոշ երևում են թուրք-իրանական պատերազմների հետևանքները հայ ժողովրդի արևելյան հատվածի տնտեսական կյանքի վրա, հեղինակը մատենագրական ու արխիվային նյութերով լուսաբանում է էջմիածնի վանքի հողային տարածությունների ու կալվածատիրական տնտեսության ընդարձակման պատմությունը։ Պետք է նշել, որ հետևելով Բ. Հարությունյանին, Ս. Պողոսյանը ևս կարծում է, թե էջմիածնի վանական տնտեսությունում լայն չափերով կիրառված վարձու աշխատուժի օգտագործումը քայքայում էր ավատական արտադրահարաբերությունները։

Հողային սեփականության իրավունքի հարցին է նվիրված իրավագետ-պատմաբան Ա. Եսայանի մենագրությունը[37], որտեղ հեղինակը հիմնավորապես հանգում է այն ճիշտ կարծիքին, որ XVII—XVIII դարերում Արևելյան Հայաստանում մուլքի տեսքով առկա է եղել հողի մասնավոր սեփականություն։

Քննարկվող ժամանակաշրջանի Արևելյան Հայաստանի ավատական հարաբերությունների պատմաքննական վերլուծությանն է նվիրված Ի. Պետրուշևսկու արժեքավոր մենագրությունը[38]։ Աշխատության մեջ աղբյուրագիտական լայն հիմքի վրա հանգամանորեն քննվում են հողային սեփականության ու ավատական ռենտային վերաբերող հարցերը։ Ցույց է տրված, որ մուլքը լայն իմաստով նախ հողային մասնավոր սեփականություն էր, նեղ իմաստով՝ հողային ռենտայի արտահայտման ձև։ Լուսաբանված են նաև գյուղացիության սոցիալ-տնտեսական դրության, շահագործման ձևերի ու մեթոդների հետ կապված հարցերը։ Սակայն գյուղացիության ավատական կախվածության հարցում հեղինակի կարծիքը մեկն է՝ նա ձգտում է ապացուցել, թե սեֆյան տիրապետության սահմաններում առկա են եղել ճորտատիրական հարաբերություններ և որ գյուղացիների ճորտացման ու նրանց հողին ամրացնելու պրոցեսը կապված է եղել դեռ

A 11/8229



ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

թաթար-մոնղոլական քոչվոր ցեղերի տիրապետության, քոչվորական ֆեոդալիզմի սոցիալ-իրավական հարաբերությունների և գործող նորմերի հետ։

Ի. Պետրուշևսկու արժեքավոր գործերից մեկն էլ «Հողագործությունը և ագրարային հարաբերությունները Իրանում XIII—XIV դդ.» ուսումնասիրությունն է[39]։ Թեև այն վերաբերում է մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանին, բայց և կան արժեքավոր ընդհանրացումներ ու փաստական տվյալներ նաև XVI—XVII դարերի սեֆյան տիրապետության տնտեսական կյանքի մասին։

«Հայ ժողովրդի ազատագրական շարժումները XVIII դարի առաջին քառորդում»[40] մենագրության հեղինակ Պ. Հարությունյանը լուսաբանել է XVII—XVIII դարերի Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի մի շարք հարցեր, վեր հանել հայ ժողովրդի ծանր դրությունը և այդ ֆոնի վրա ցույց տվել նրա ազատագրական ձգտումները։

Արևելյան Հայաստանի XVII—XVIII դարերի ագրարային հարաբերությունների պատմության ուսումնասիրմանն են նվիրված Ս. Մարկոսյանի աշխատությունները[41]։ Հեղինակը սկզբնաղբյուրների հետազոտման հիման վրա գալիս է այն հետևության, որ Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններն էությամբ ավատական լինելով հանդերձ, իրենց արտահայտության ձևերով լրիվին չեն համընկնում կլասիկ ֆեոդալիզմի արտահայտություններին։ Այս առումով նա իրավացիորեն հերքում է գյուղացիության հողին ամրացված լինելու մասին Ի. Պետրուշևսկու տեսակետը նշելով, թե նրա բերած փաստերը ոչ թե վերաբերում են ճորտի ու ճորտատիրոջ հարաբերությանը, այլ պետական իշխանության և հպատակների հարաբերությանը։ Սակայն այս ճիշտ հետևությունը Ս. Մարկոսյանը բացատրում է այն հանգամանքով, թե ճորտության բացակայությունը պայմանավորված էր հողի մասնավոր սեփականության բացակայությամբ։ Ժխտելով մուլքի, որպես մասնավոր հողատիրության արտահայտության ձևի իրողությունը, Ս. Մարկոսյանը սխալմամբ կարծում է, թե հողի օտարումը հաստատուն կռվան չի

կարող ծառայել հողի մասնավոր սեփականության գոյությունը հաստատելու համար: Նա մուլքը դիտում է միմիայն որպես հողային ռենտայի արտահայտության ձև:

Հանգամանորեն լուսաբանելով հայ ազատագրական մտքի դեգերումները XV—XVII դարերում, Աշ. Հովհաննիսյանը իր երկհատոր աշխատության երկրորդ գրքում[42] մանրամասնորեն վերլուծում է Արևելյան Հայաստանի ավատական հարաբերությունները, միաժամանակ կատարելով մատենագիտական-աղբյուրագիտական և ժամանակագրական-փաստական կարևոր ճշգրտումներ: Հանգամանորեն քննվում են հողատիրության բնույթի հարցերը: Ցույց է տրված, որ լայն տարածում ստացած մուլքադարական հողատիրության հետևանքով առաջանում է մուլքատերերի մի ստվար շերտ, որի սեփականությունը հանդիսացող մուլքը լայն չափով առուծախի առարկա է դառնում: Կոնկրետ փաստական նյութի վրա հեղինակը հանգամանորեն լուսաբանում է անմիջական արտադրողների իրավական ու տնտեսական դրությունը, վերլուծում գյուղացիության ավատական կախվածության բնորոշ գծերը:

Արևելյան Հայաստանի սեֆյան տիրապետության ժամանակաշրջանի ագրարային հարաբերությունների պատմաքննական վերլուծությանն է նվիրված Հ. Փափազյանի արժեքավոր մենագրությունը[43]: Հեղինակը հայկական արխիվային ու մատենագրական տվյալների հետ միասին օգտագործել ու շրջանառության մեջ է դրել օտար լեզուներով արժեքավոր շատ սկզբնաղբյուրներ, որով և ավելի խորացված է պարզաբանվում Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի այս կամ այն կողմի մեկնաբանությունը: Մենագրությունում հեղինակը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել է Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների էությունը, այն սերտորեն կապելով սեֆյան Իրանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ: Բացահայտված է հողային սեփականության բնույթը, լուսաբանված է եկեղեցական հողատիրության ու վանական կալվածատիրության պատմությունը, վեր են հանված երկրի հարկային հա-

մակարդի առանձնահատկությունները և այլն։ Գիտնականի գրչին են պատկանում նաև մի շարք արժեքավոր հոդվածներ, որոնցում լուսաբանված են Արևելյան Հայաստանի XVI—XVIII դդ. սոցիալ-տնտեսական կյանքի պատմության զանազան հարցեր[44]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Հայաստանի պատմության մի շարք հարցերի լուսաբանման գործում գիտահետազոտական մեծ աշխատանք է կատարել Մ. Զուլալյանը[45]։ Թեև նրա ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են Արևմտյան Հայաստանի պատմությանը, այնուհանդերձ լայն զուգահեռներ են անցկացված Արևելյան Հայաստանի թե՛ քաղաքական կյանքի և թե՛ սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ։

Հենվելով սկզբնաղբյուրների ու հայագիտական երկերի մանրակրկիտ հետազոտության վրա, Բ. Ուլուբաբյանը իր «Խաչենի իշխանությունը X—XVI դարերում»[46] մենագրության առանձին էջերում լուսաբանում է Հայոց արևելից կողմանց կաթողիկոսության կենտրոնատեղի՝ Գանձասարի վանքի կալվածատիրական տնտեսության պատմության հետ կապված մի շարք հարցեր։

Տալով թեմայի գիտական մշակման համառոտ պատմությունը, կամենում ենք նշել, որ աշխատությունը շարադրելիս օգտվել ենք նաև Ե. Շահազիզի, Հ. Թումանյանի, Գ. Շիրմազանի, Թ. Հակոբյանի, Վ. Բդոյանի, Վ. Բայբուրդյանի, Ֆ. Պողոսյանի, Վ. Գրիգորյանի, Ս. Ալեքսանյանի, Վ. Փափազյանի, Ն. Ֆիլրոզեի, Ն. Դ. Միկլուխո-Մակլայի, Ա. Ռահմանիի, Մ. Արունովայի ու Կ. Աշրաֆյանի, Ա. Նովոսելցևի ուսումնասիրություններից[47], ուր արծարծված են մեզ հետաքրքրող թեմայի հետ առնչություն ունեցող մասնակի մի շարք հարցեր։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՀՈՂԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

XVI—XVIII դարերի Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալ-տնտեսական դրության պատմության ուսումնասիրության համար անհրաժեշտ է առաջին հերթին քննարկել երկրում հաստատված ագրարային հարաբերությունների հիմքը կազմող հողային սեփականության հարցը, որի վերաբերյալ մինչև օրս էլ պատմական գրականության մեջ կան իրարամերժ երկու տեսակետներ։ Համաձայն առաջինի (Ի. Շոպեն, Մ. Կուլչա, Լ. Տիգրանով, Հ. Մուսայելյան, Ս. Մարկոսյան), Արևելյան Հայաստանում մուսուլմանական դինաստիաների տիրապետության ժամանակաշրջանում հողի սեփականության պետական-թագավորական գերագույն իրավունքն է իշխել։ Համաձայն երկրորդ տեսակետի (Ս. Եղիազարով, Ի. Պետրուշևսկի, Ն. Ցիլրուզե, Պ. Հարությունյան, Հ. Փափազյան) ժխտվում է հողի նկատմամբ պետության կամ թագավորի գերագույն սեփականատիրական իրավունքի գոյությունը։

Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների էությունը բացահայտող պատմական փաստաթղթերի գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն փաստարկումը, թե հողը պետության կամ թագավորի գերագույն սեփականությունն էր, գիտականորեն

հերքվում է։ Հողատիրության հարցերը մեկնաբանելիս առաջին հերթին պետք է ելնել տվյալ ժամանակաշրջանում հաստատված սոցիալ-տնտեսական հարաբերությունների օբյեկտիվ վերլուծությունից։ Այդ հարցերը չի կարելի բացատրել հենվելով միայն մուսուլմանական կրոնական դոգմաների վրա, որոնք, ինչպես ճիշտ նկատել է Վ. Մինորսկին «...յուրաքանչյուր երկրում այլ տեսք ունեին և մեզ հետաքրքրող հարցերի համար ոչ այլ ինչ էին, եթե ոչ միայն իրավական ծածկույթ, որ գալիս էին ծածկելու տեղում ընդունված կարգերը»[1]։ Դեռևս Հայաստանի արաբական տիրապետության ժամանակաշրջանի ագրարային հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ժամանակ էլ թագավորի հողի գերագույն սեփականատեր լինելը ըստ էության ձևական էր։ Իրականում ավատական վերնախավի ներկայացուցիչները հողեր էին ձեռք բերում ժառանգական կամ էլ պայմանական հողատիրության սկզբունքներով։ Ժամանակի ընթացքում պայմանական հողատիրությունն էլ վեր էր ածվում ժառանգականի և հողը դառնում էր ավատատիրոջ լիակատար սեփականությունը[2]։ Հողատիրության նույն բնույթի էվոլյուցիա էր տեղի ունենում Արևելյան Հայաստանում նաև XVI—XVIII դարերում։ Եվ չնայած սեֆյան տիրակալների գործադրած բոլոր ջանքերին՝ որքան հնարավոր է ընդարձակել պետական հողատիրության չափերը, դա նրանց միայն մասամբ հաջողվեց։ Բավական է նշել, որ ըստ շահ Աբաս I քարտուղար Իսքանդար Մունշիի տեղեկությունների ողջ իրանական տիրապետության սահմաններում 1576 թ. հաշվվում էր 114 ժառանգական խոշոր ավատատեր, ապա 1628 թ. դրանց թիվը պակասեց միայն 24-ով[3]։ Իսկ դա նշանակում էր, որ Աբաս I տոհմիկ ավատատերերի իշխանության ժառանգական բնույթը ժամանակավոր պաշտոնակատարությամբ փոխելու քաղաքականությունը չհաջողվեց։

Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում մասնավոր հողային սեփականության հիմնական ձևը մուլքն էր, որն ընկած էր պետական, արքունական, մասնա-

վոր սեփականատիրական, կրոնական հաստատություններին պատկանող ու համայնքապատկան հողատիրության տեսակների հիմքում։ Արաբական տիրապետությունից ժառանգություն մնացած այդ տերմինը նշանակում էր ոչ միայն հողատիրության նշված տեսակը, այլ նաև սեփականություն կազմող անշարժ գույքը, լիներ դա կալվածք, այգի, արտ թե տուն, ջրաղաց թե ոռոգման կառույց և այլն։

Իսկ ի՞նչ պայմաններ էին կանխորոշում հողի մասնավոր սեփականությունը և որո՞նք էին այդ սեփականության առկայությունը դրսևորող հիմնական գործոնները։ «Հողային սեփականությունը,—գրում է Կ. Մարքսը,—ենթադրում է որոշ անձերի մենաշնորհը տնօրինելու երկրագնդի այս կամ այն մասերն իբրև նրանց մասնավոր կամքի բացառիկ ոլորտներ։ ...Հենց իրավաբանական պատկերացումն ինքը ոչ մի ուրիշ բան չի նշանակում, քան այն, որ հողի սեփականատերը իր հողի հետ կարող է վարվել այնպես, ինչպես ամեն մի ապրանքատեր իր ապրանքի հետ»[4]։ Հետևապես, հողի մասնավոր սեփականություն լինելու չափանիշը նախ հողի վրա որոշ անձերի մենաշնորհն է, այդ անձերի կողմից հողն ըստ նրանց կամքի տնօրինելն է։ Այդ իրավունքն արտահայտվում էր հետևյալում. մուլքը լիակատար ժառանգական սեփականություն էր։ Ավատատերերը սովորաբար ունեցած ժառանգական կալվածքները կտակում էին իրենց որդիներին նշելով, որ նրանք այդ կալվածքները ստանում են որպես «ի վայելումն յետագայ որդւոց և զաւակաց իւրեանց»։ Այդ մասին է հավաստում, օրինակ, շահ Թահմասպի 1558 թ. հրովարտակը տրված Գեղարքունիքի մելիք՝ Մելիք բեկին, որտեղ մասնավորապես ասվում է. «...Որովհետև Մելիք-Բէկ քրիստոնեայն յայտնեաց, թե Ալթուն-Թախթ, Բուղիկարաք, Գիւրճիվէրան, Փոքր Ենկիջայ, Մեծ Ենկիջայ, Միրաբադ, Մաքար գիւղօրայքն, որք ի նահանգի ծովակին Գեօգչայի ժառանգութիւն նորա են սեպհական և ունի ի հաստատութիւն քանից իւրոց զգիրս օրինադրօղաց մերոց ի ձեռին իւրում. վասն որոյ մեք հաստատեցաք լինել ժառանգութիւն նորա որպէս էին, և ոչ ոք առանց իրաւանց օրինաց լինիցի ձեռնա-

մուխ սեպհական հողոյ նորայ»[5]: Շահական նույնանման հրովարտակով Վարանդայի տեր է հաստատվում մելիք Բաղին, հաստատվում են իրենց իրավունքներում Ներքին Խաչենի տերեր Հասան-Ջալալյանները, Ծարա նորաստեղծ իշխանության տերեր, Դոփյան Հասանի սերունդներից Ջհանշահյանք, Դիզակի ու Գյուլիստանի իշխողները և այլն[6]: Չպետք է կարծել, թե նկատի ունենալով մեծահարուստ հայ մելիքների դերը, հատկապես նրանց նկատմամբ էր կիրառվում ժառանգականության իրավունքը: Եվ իրոք, մինչև շահ Թահմասպի վերը հիշատակված հրովարտակը, մեզ չի հասել նման մեկ այլ վավերագիր, որը հիմք տար եզրակացնելու, թե մելիքական իրավունքը մուսուլման տիրակալների կողմից հաստատվել են ավելի վաղ ժամանակներից: Ինչպես ճիշտ նկատում է Բ. Ուլուբաբյանը, մելիքական իրավունքն սկզբնապես հաստատուն ու անփոփոխ մի երևույթ չէր, այլ փոխվում էր այս կամ այն տիրակալի կողմից, ենթարկվելով նրա կամքին ու հայկական աշխարհի նկատմամբ ունեցած վերաբերմունքին[7]: Արցախի ու Սյունիքի հայկական մելիքությունները պետական իշխանություններ չէին, այլ առանձին ավատական տներ, որոնց հաջողվել էր պահպանել իրենց տիրակալությունը այդ վայրերի ու նրանց բնակչության վրա: Այս տեսակետից հատկանշական է շահ Աբաս I Վարանդայի մելիք Բաղիին մելիքության մեջ հաստատելու հրովարտակը, որտեղ շահը կարգադրում է «անկախ մէլիք» ճանաչել նրան[8]: Հիշյալ մելիքին «անկախ» հայտարարելը բոլորովին էլ չէր նշանակում, թե նա ազատվում էր այսուհետև արքունիքի հանդեպ ամեն մի պարտականություն ստանձնելուց: Արցախի մելիքություններն որպես վարչա-քաղաքական միավորներ, մտնում էին Ղարաբաղի խանության մեջ և իրենց վարչական պարտավորություններով ենթարկվում Ղարաբաղի խանին: Ավելին, նրանք պարտավոր էին ժամանակին վճարել արքունի հարկը. «...զի մի հասցէ պակասութիւն արքունի հասութիցն»,—ասվում է վերը հիշատակված Գեղարքունիքի մելիք Մելիք բեկին իր ժառանգական իրավունքներում հաստատող շահ Թահմասպ

I հրովարտակում[9]։ Մելիք Բաղիի վերաբերյալ «անկախ» տերմինի գործածումը ավելի շատ պայմանավորված էր խոշոր հայրենատեր ավատատիրոջ ժառանգական իրավունքները հաստատելու ու սովորական գյուղական մելիքներից նրան զանազանելու իմաստով։

Սերնդից-սերունդ ժառանգաբար փոխանցված հողային սեփականության նկատմամբ իրավական հիմք չունեցող յուրացումները, անկախ այն բանից, թե ովքեր են կատարել այդ յուրացումները, ենթակա էին բողոքարկման։ Այդ մասին է վկայում հետևյալ փաստը. երևանցի խոջա Սեթի որդի խոջա Հակոբը դիմում է մուսուլմանական հոգևոր օրենսդրական դատական խորհրդին Երևանի խանության Յայջի, Նորագեղ և Գյոլքանդի գյուղերի մուլքերի նկատմամբ իր սեփականատիրական իրավունքները վերականգնելու խնդրանքով։ Բանն այն էր, որ 1636 թ. շահ Սեֆիի կարգադրությամբ բռնագրավվել ու պետական սեփականություն էին հայտարարվել անհավատարմության մեջ մեղադրված Երևանի Թահմասպկուլի-խանի կալվածները, ի թիվս վերը հիշատակված գյուղերի, որոնց սեփականատիրական իրավունքը զարտուղի ճանապարհներով յուրացրել էր հիշյալ խանը։ Մանրակրկիտ ստուգումներից հետո, համոզվելով խոջա Հակոբի բողոքի հիմնավորությունում, շահ Աբաս II 1648 թ. հատուկ հրովարտակով վավերացնում է հիշյալ խոջայի ժառանգական իրավունքները թվարկված գյուղերի մուլքերի նկատմամբ[10]։ Այս առումով արժանահիշատակ է նաև հետևյալ օրինակը. 1709 թ. Գեղարքունիքի մելիք Շահնազար II դիմում է շահ Սուլթան-Հուսեյնին. «...գիւղն Գեօդչայի՝ կոչեցեալն Ղանդուլեղդարայ ի՝ բնէ ժառանգական կալուածք են իմ ի Միրզաջան հօր եղբօր որդւոյ իմ է. որ այժմ յԱսպահան կայ ի ծառայութեան շահին և արդ հինգ ամ է, յորմէ հետէ Մեհդի խան բէգն զվկողութեամբ տիրալ է, խնդրեմք բստ իրաւանց մեր բստ հինգ ամեայ եկամտին ստասջիք. և զնոսա՝ ի վնասակարութենէ արգելջիք»[11]։ Շահը համոզվելով մելիք Շահնազարի ներկայացրած թղթերի իսկության մեջ վերահաստատում է նրա իրավունքները հիշյալ գյուղե-

րի վրա: Ինչպես տեսնում ենք սեփականատիրական իրավունքի անձեռնմխելիության հարցում նույնիսկ տիրակալները նախանձախնդրություն էին ցուցաբերում: Ինչ վերաբերում է բարձրաստիճան անձնավորության ունեցվածքի հարքունիս գրավմանը, ապա դա կատարվում էր միայն այն ժամանակ, երբ վերջինս մեղադրվում էր պետական դավաճանության մեջ: Նման բռնագրավումներն էլ կատարվում էին միայն սեփականատիրոջ դատական իրավազրկումից հետո: Այդ դեպքում, ինչպես նկատում է Հ. Փափազյանը, շահը մարմնավորում էր և պետական գերագույն իշխանությունը և արդարադատության բարձրագույն ինստանցիան[12]:

Չնայած սեփականատիրական իրավունքի անձեռնմխելիությանը, չէր բացառվում նաև բռնագրավումների ճանապարհով հողային սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորությունը: Իրենց կալվածքները գյուղական համայնքի հաշվին կատարած հողային բռնագրավումների, ինչպես նաև իշխողների բռնություններից ու կամայականություններից բնակության վայրը փոխած գյուղացիների ունեցվածքը սեփականելու ճանապարհով ընդարձակեցին հատկապես հոգևոր հաստատությունները: Այսպես, մի կալվածագրից տեղեկանում ենք, որ 1621 թ. Խաչենի Քարագլուխ գյուղի համայնքը հոժարակամ Գանձասարի վանքին է զիջել Կոռալան կոչված հանդամասը[13]: Հավանաբար գյուղի բնակչության ու վանքի միաբանության միջև այդ հողամասի շուրջը վեճ է տեղի ունեցել և հասկանալի է, որ գյուղացիությունը ի վիճակի չէր կասեցնելու գյուղական համայնքի հաշվին իր հողային տարածություններն ընդարձակելու հոգևոր ավատատերերի ձգտումը, ուստի հոժարակամ Գանձասարին է զիջում նշված հանդամասը: Ձեռագրերից մեկն էլ տեղեկացնում է, որ Ապարանի գավառի Կթանից գյուղի բնակչության մի մասը իշխողների կամայականություններից հուսալքված «...կու թողուն զտունն, զարտն ու զայգին և զայլ ապրանքն ու փախին»: Փորձելով օգտվել նպաստավոր իրադրությունից, Ապարանի ս. Նշան վանքի միաբանությունը ամեն կերպ աշխատում է իրեն վերապահել այդ կալ-

վածքների սեփականումն ու օգտագործումը՝ անեծք կարդալով այն մարդկանց հասցեին, ովքեր տեր կկանգնեն գյուղից փախածների մուլքերին[14]։

Բռնագրավումներին համարժեք մասնավոր հողասեփականության իրավունքի ստացման ուղիներից մեկն էլ նվաճումներն էին, երբ մոբիլիզացվում էր երկրի հողային ֆոնդը ու կենտրոնացվում արքունիքի կամ պետության տրամադրության տակ։ Դրան մեծապես նպաստեց շահ Աբաս I բնակչության մասսայական գաղթեցման քաղաքականությունը, որի հետևանքով երկրի մշակելի հողային տարածությունները փաստորեն մնացին անտեր։ Այդ մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին. «Եւ յաւուրսն յայնոսիկ,—գրում է պատմագիրը,—ի խորհուրդ չարեաց Շահաբասն կոչեաց զԴավիթ կաթողիկոսն և զՄելիքսէթ կաթողիկոսն առաջի իւր և ասաց. սուրբութիւն է թագաւորաց և կարդ նաև յայտնի է ձեզ, թե որպէս երկիրս յառաջն օսմանցւոց էր, և այժմ մեր եղև, սոյնպէս և ամենայն ինչք և ստացուածք նոցա՝ որ անտէր մնացեալ են, պարտի լինիլ արքունական, այսինքն միրիմալի»[15]։

Արքունական (խաս) հողերը սեֆյան Իրանի կենտրոնական բերքատու վայրերն էին։ Այստեղ էին կենտրոնացված նաև առևտրական հիմնական ձեռնարկությունները, որոնց արդյունքներից արքունի գանձարան էին հոսում հսկայական եկամուտներ։ Օրինակ, Իսքանդար Մունշիի վկայությամբ շահ Աբաս I թագավորության 21-րդ տարում արքունի կալվածքները գնահատվել են ավելի քան 100000 թուման, իսկ այդ վայրերից ստացվող տարեկան միջին եկամուտը կազմել է 7000 թուման[16]։

Արևելյան Հայաստանում արքունական կալվածքների մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Զաքարիա Ագուլեցին։ Ըստ այդ տեղեկությունների խաս էին համարվում Ագուլիս, Մեղրի, Շոռոթ, Լեհրամ և Աստապատ գյուղաքաղաքները[17]։ Ճիշտ է, վարչական հարցերում խաս կոչված այդ վայրերն ենթարկվում էին Երևանի խանին, սակայն բացարկվում էին տեղական պաշտոնյաների իրավա-

սուԹյունից։ Հարկային պարտավորություններով կապված լինելով անմիջապես արքունիքին, նրանք ենթարկվում էին շահի կամ նշանակված արքունի գործակալների անմիջական տնօրինությանը։ Նույնիսկ վերջիններիս կամայականությունների դեմ բողոքելով, հաճախ այդ վայրերի բնակիչները կարողանում էին իրենց բողոքները տեղ հասցնել։ Ինչպես վկայում է Զաքարիա Ագուլեցին, 1654 թ. իր իրավունքներից զրկվեց Ագուլիսի ոստիկանապետ Ուղուրլու-բեկը, որի կամայականությունների դեմ բողոքել էր տեղի բնակչությունը[18]։

Արքունական հողերից գանձվող հարկերի ու տուրքերի մի մասը ժամանակավոր վարձակալության իրավունքով (ղաբԹ) տրվում էր ազնվականությանը՝ զինվորական ու պետական ծառայության դիմաց։ Ըստ որում, վարձակալման այդ իրավունքը տրվում էր պայմանական կարգով։ Վարձակալողը կարող էր դրանից օգտվել այնքան ժամանակ, քանի դեռ նա կատարում էր արքունիքի հանդեպ իր վասալական պարտավորությունները։ Ինչպես տեղեկանում ենք Զաքարիա Ագուլեցու օրագրությունից, վերը հիշատակված խաս բնակավայրերը երկար ժամանակ գտնվել են Ադրբեջանի վեզիր Միրզա Իբրահիմի ղաբԹում։ 1675 թ. մեկ տարով այն տրվել է Երևանի Սաֆիկուլի-խանին, իսկ հաջորդ տարին 1000 Թումանով կրկին վերադարձվել է Միրզա Իբրահիմին[19]։ 1677 թ. այն տրվում է ագուլեցի Իսախան բեկին. «1677-ումն,—կարդում ենք օրագրությունում,—Աքուլիս էր աքուլեցի Մուսաբեկի տղայ Իսախան-բեկի զաֆտումն։ Ոչ միայն Աքուլիս, այլև Ե(5)խաս գեղն, որ Մեղրի, Աքուլիս, Շոռոթ, Լեհրամ, Աստապատ, այս Ե գեղն շահն տվելայ Իսախան բեկի զաֆտն»[20]։

Պետական (դիվանի) հողերը այն նյութական բազան էին, որոնցից ստացվող եկամտով պահվում էր պետական ապարատը։ Դրա մի մասը անվերապահորեն գտնվում էր պետական գանձարանի տրամադրության տակ և ստացված ողջ եկամուտը մտնում էր այնտեղ։ Պետական հողերի մյուս մասի օգտագործումը որպես նվիրատվություն վարձակալու-

թյան իրավունքներով տրվում էր գերազանցապես զինվորական ծառայության մեջ աչքի ընկած անձնավորություններին[21] սոյուրղալի և թիուլի տեսքով։

Մոնղոլական ծագում ունեցող սոյուրղալ տերմինը, որ նշանակում էր նվիրատվություն, պարգևում, ցմահ օգտագործում, հետմոնղոլական շրջանում դարձավ ավատային տիրապետություն՝ ձեռք բերելով ժառանգական ու մշտական բնույթ։ Ինչպես վկայում է Աբդ ար-Ռեզակ Սամարղանդին Կարա-Յուսուֆի որդի Իսքանդարի օրոք (1420—1437) Կարա-կոյունլուների արքունիքում էր ծառայում Ռուստամ Օրբելյանը վարելով մեծ վեզիրի ու արքունի խորհրդականի պաշտոնը։ Ունեցած ծառայությունների դիմաց, Ռուստամը Իսքանդարից սոյուրղալներ էր ստացել Սյունիքում, ինչպես նաև Արագածոտն ու Կոտայք գավառներում[22]։ Ժառանգական իրավունքի հետ միաժամանակ սոյուրղալ արտոնությունը արքունական ու պետական հարկերից ազատում էր գրեթե ամբողջությամբ։ Փաստորեն, ինչպես նկատում է Վ. Մինորսկին. «Իր մշտական ու ժառանգաբար անցնելու բնույթով սոյուրղալ տերիտորիաները իրենցից ներկայացնում էին անկախ ու ինքնիշխան տիրույթներ երկրի ներսում»[23]։ Հետագա XVI—XVII դարերում բավականին փոփոխություններ կատարվեցին սոյուրղալ հողային ինստիտուտի մեջ։ Պարգևական հողատիրության թիուլային համատարած սիստեմի հաստատումով սոյուրղալը վերածվեց թիուլային ընդհանուր սիստեմից բխող ավատական պարգևատվությունների տեսակի։ Համաձայն «Թազկիրաթ ալ-մուլուքի», XVII դարում սեֆյան Իրանում սոյուրղալ ունեցողների ողջ եկամուտը կազմում էր 367778800 դինար, իսկ թիուլ ունեցողներինը մոտ տասն անգամ ավելի[24]։

Թիուլը սկզբնապես ծագել է որպես պետական հարկ, որը պետության կողմից տրվում էր այս կամ այն պաշտոնական անձնավորությանը՝ մատուցած ծառայության դիմաց։ Թիուլի տերերի (թիուլդարներ) իրավունքները հողի և գյուղացիների նկատմամբ սահմանափակ էին։ Նրանք չէին վարում իրենց տնտեսությունը, չէին խառնվում գյուղացիների

տնտեսական գործերին: Նման իրավունքով, օրինակ, 1682 թ. 54909 դինար ընդհանուր գումարով Բորչալուի հաքիմին տրված է եղել Սիսիանի գավառի Դաստակերտ գյուղը[25]: Մեկ այլ վավերագիր տեղեկացնում է, որ ոմն Ջալ-բեկի տրված է եղել Գեղարքունիքի գավառի Հասանքյանդի և Կարմունջ գյուղերի թիուլի իրավունքը 88450 դինար ընդհանուր գումարով[26]:

Թիուլներ տրվում էին ոչ միայն աշխարհիկ ազդեցիկ անձնավորություններին, այլ նաև հոգևոր դասի առանձին բարձրաստիճան անձնավորությունների: Ինչպես վկայում են աղբյուրները, նման իրավունք տրվել է նույնիսկ այլակրոն հոգևորականության ազդեցիկ ներկայացուցիչների: Օրինակ, ինչպես տեղեկացնում է Առաքել Դավրիժեցին, 1629 թ. Դավիթ Վաղարշապատեցի կաթողիկոսը դիմում է շահ Աբաս I կաթողիկոսական աթոռից իր հրաժարումը հաստատելու խնդրանքով: Շահը թույլտվության հետ մեկտեղ նրան է նվիրում մի գյուղ Ջղախոռ գավառում. «...զի կերիցէ զմուտս գեղջն այնմիկ և աղօթեսցէ վասն կենաց թագաւորին» պայմանով[27]: Դժվար չէ նկատել, որ այս նվիրատվության հիմքում ընկած է թիուլին հատուկ պայման, այսինքն՝ հողային հարկի կամ նրա մի մասի պարգևում:

Աղբյուրները վկայում են, որ նվիրատվության ֆոնդում կարող էին լինել ոչ միայն պետական, այլև սեփականատիրական որևէ գյուղից կամ մի քանի գյուղերից գանձվող ողջ պետական հարկերը կամ այդ հարկերի մի մասը: Այսպես, 1650 թ. շահական հրովարտակներից մեկը տեղեկացնում է, որ Էջմիածնի վանքապատկան Վաղարշապատ գյուղից գանձվող եկամտահարկը թիուլի իրավունքով հատկացվել է Երևանի Քեյխոսրով խանին[28]: Իսկ շահ Աբաս II 1646 թ. ոմն Աբասկուլի սուլթանի տրված հրովարտակից պարզվում է, որ Քաշաթաղի մելիք Հայկազյաններին պատկանած չորս գյուղերից գանձվող գլխահարկը 4 թուման 5640 դինար ընդհանուր գումարով հատկացված է եղել հիշյալ սուլթանին իբրև թիուլ[29]: Նման դեպքում ծագում է իրավունքների մի բարդ համագումար: Բանն այն է, որ հանդես գալով իբրև

վարձատրության ձև, թիուլն իր բնույթով պայմանական կալվածատիրություն էր։ Այն ընդհատվում կամ մեկ ուրիշին էր փոխանցվում թիուլի տիրոջ մահվան կամ պաշտոնից ազատվելու դեպքում։ «Չնայած այդ իշխանների որդիները,— գրում է Ադամ Օլեարիուսը,—հավակնում էին ժառանգելու իրենց հայրերի ունեցվածքը, այնուամենայնիվ նրանց համար չէր պահպանվում հայրերի ոչ իշխանական տիտղոսը և ոչ էլ իրավունքները, եթե նրանք իրենց բարեմասնություններով դրան արժանի չէին կամ շահը չէր հանձնում նրանց այդ իրավունքը հատուկ ողորմածությամբ»[30]։ Հատկապես, եթե պետությունը սեփականատիրական գյուղերից պետական հարկերի գանձման իր իրավունքը նվիրում էր մեկ ուրիշին, ռենտան, այսպիսով կենտրոնանում էր երկու մարդու ձեռքում, սակայն տարբեր իրավունքներով։ Մեկը՝ անձամբ մասնատիրական հողի սեփականատերն էր, որին ռենտայի մեծ մասն էր բաժին հասնում և որն էլ նրա ցանկությամբ ազատորեն տնօրինվում էր, մյուսը՝ հանդես էր գալիս պետական գանձարան անցնող ռենտա-հարկի ժամանակավոր օգտագործող։ Դա նշանակում է, որ թիուլի տերերի քաղաքական բարձր դիրքը որևէ չափով հողի նկատմամբ սեփականատիրական իրավունք չի ընձեռել նրանց։

Չպետք է կարծել, թե նվիրատվությունները իրենց հիմքում մշտապես ունեցել են թիուլային իրավունքի նախապայման։ Չէր բացառվում, որ շահը կալվածք կարող էր նվիրել իրեն ծառայող և մոտ մարդկանց լիակատար ժառանգական սեփականության իրավունքով։ Նման պայմանով հողեր նվիրվում էին գլխավորապես հին հայկական խոշոր ավատական տների սերունդներին. Մելիք-Շահնազարյաններին՝ Գեղարքունիքում, Հասան-Ջալալյաններին՝ խաչենում, Զաքարյանների և Օրբելյանների հաջորդներին՝ Լոռիում ու Սյունիքում և այլն։ Որպես այդպիսին հատկանշական է շահ Աբաս I 1604 թ. հրովարտակը տրված Գեղարքունիքի մելիք Շահնազարի որդի Քամալին, որում մասնավորապես ասվում է. «Հրաման արքայական եղև... Գեղարքունեցի մելիք Շահնազարի որդի Քեամալին, որ ընդ թշնամեաց հետ պատե-

ռազմեալ և քաջութիւնս արարեալ ի սկիզբն կոյս կենդանակերպի սկզբում, Ջար-Ջիբիլի (Ծար գավառ) Ղարասախալ գիւղի թագավորական հարկը գիւղով միասին իբրև ժառանգութիւն պարգևեցաք Քեամալին, ըստ յայտարարութեան արքունի գործակալաց...»[31]։

Նվիրատվության ճանապարհով իրենց հողային տարածությունների չափերը է՛լ ավելի ընդարձակեցին հոգևոր հաստատությունները։ Նվիրատվությունները ամենից հաճախ կատարվում էին հայ խոշոր աշխարհիկ ավատատերերի կողմից։ Վերջիններս քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով, իրենց հողային կալվածները հափշտակումից փրկելու նպատակով նվիրում էին սեփական տիրույթ, սահմաններում գտնվող վանքերին ու եկեղեցիներին, միաժամանակ նկատի ունենալով, որ եկեղեցական հողերը համարվելով վակֆ, անձեռնմխելի էին ու պետականորեն ապահոված։ Վակֆային իրավունքի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Սիմեոն Երևանցին։ Նկարագրելով կաթողիկոս Գրիգոր Մակվեցու կողմից 1431 թ. էջմիածնի վանքին Վաղարշապատ գյուղի նվիրատվության օրինակը, նա գրում է. «Եւ Գրիգոր կաթողիկոս գրեցուցանէ ի յերիս ղապալայոջսն եւ թէ Գրիգոր խալիֆայն առնու զգեօղս զայս և վախըֆ տա էջմիածնի Աթոռոյն։ Քանզի որովհետև յամենայն յազգս օրէն է, զի վախըֆն ոչ վաճառի և ոչ յետս դառնայ, վասն այսօրիկ այսպէս գրեցուցանէ, զի մի ոք իշխեսցէ յետոյ վաճառել և գնել»[32]։ Ուրեմն, վակֆային նվիրատվության հիմնական նախապայմանը այն էր, որ նվիրված հողը պետք է լիներ նվիրողի «հալալ ինչքը», այսինքն ժառանգված կամ գանձագին տիրույթը, հակառակ դեպքում գործարքը օրինական չէր համարվի։ Այս տեսակետից հատկանշական է Մաստարա գյուղի օրինակը։ Ինչպես տեղեկացնում է Սիմեոն Երևանցին, հիշյալ գյուղի սեփականության 2,5 դանգը (սատակ)[33] 12000 դինարով 1656 թ. ոմն Ոսկանի որդի Թարխանը նախ գնում է, վեր ածում այն իր «հալալ ինչքի» և նոր միայն վակֆային իրավունքով նվիրում էջմիածնի վանքին[34]։ Նույն կերպ է վարվում նաև մակվեցի

տմն Վարդում, որն 1694 թ. Մակվի Թադեոս առաքյալի վանքին է նվիրում իր գանձագին մուլքերը[35]։ Բերված տեղեկությունները միաժամանակ վկայում են, որ մուլքը նաև օտարելի սեփականություն էր, առանց որևէ սահմանափակումների։ Օտարվող հողերն ստացող ավատատերերն այժմ իրենք էին դառնում այդ հողերի բացարձակ տնօրենը։ Նրանց իրավունք էր վերապահվում ձեռք բերած գանձագին մուլքերը «ուտել և վայելել, պահել և ունել, գնոյ տալ և գրավական գնել և զինչ կամք են՝ առնել մինչև յաւիտեանս ժամանակաց»[36]։

Միաժամանակ վակֆային իրավունքի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ նման կալվածքները ազատվում էին պետական հարկերից, այսինքն ստանում էին մուաֆության (աղբյուրներում նաև մաղաֆության կամ թարխանության) իրավունք։ Հայ իրականության մեջ մուաֆության իրավունքի մասին հիշատակություններ կան ավելի վաղ ժամանակներից։ Այսպես, ինչպես վկայում է արձանագրություններից մեկը, 1210 թ. Սարգիս Զաքարյանի Զաքարե որդին Հաղպատի վանքին է նվիրում իր հայրենի Աշոցք և Հալալաշեն գյուղերը «...ամենայն սահմանաւք, ոնց բնական եղեալ է հողով և ջրով, խոտամարգերով, լերամբ և դաշտիւ ազատ և թարխան յամենայն հարկէ»[37]։ Ինչպես տեղեկանում ենք շահ Աբաս II 1644 թ., ինչպես նաև Երևանի Քելխոսրով խանի 1649 թ. էջմիածնի վակֆային իրավունքները հաստատող հրովարտակներից, վանքը միայն Վաղարշապատում ունեցել է թվով տասը տարբեր չափերի առանձին հողակտորներ ու հինգ այգիներ, Օշականում՝ երկու, Զորագյուղում, Նորքում, Շիրաբադում և Աշտարակում մեկական այգիներ, որոնք ազատվում էին պետական հարկերից[38]։ Իհարկե, էջմիածնի վանական տնտեսությունն ուներ հողային այլ տիրույթներ ևս, սակայն այն հանգամանքը, որ հիշյալ հրովարտակներում թվարկված են միայն որոշակի քանակի տնտեսական օբյեկտներ, ապացույց է այն բանի, որ մնացածներն իբրև գանձագին մուլք, ապահարկ դառնալու իրավունք չեն ունեցել։ Հակոբ Ջուղայեցու կաթո-

ղիկոսության տարիներին (1655—1680) էջմիածնի վանքը տիրել է 23 գյուղերի սեփականության իրավունքին, որոնցից Վաղարշապատի, Նորագեղի, Բոխենիսի, Քիրաչլուի՝ 6, Եղվարդի՝ 4, 5, Մաստարայի՝ 2,5 և Օշականի 0,5 դանգ մուլքերին որպես վակֆ, իսկ մնացած գյուղերին՝ դանձագին մուլքի իրավունքով[39]։ Ծանր պարտքերի տակ ընկնելով Հակոբ Ջուղայեցին մեծահարուստ որոշ անձանց գրավ է դրել վանքապատկան շատ կալվածքներ, որոնք կաթողիկոսի մահից հետո, երբ լրացել է պարտքերի հատուցման ժամկետը, յուրացվել են պարտատերերի կողմից[40]։ Աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ տվյալ դեպքում իբրև գրավ յուրացվել են կաթողիկոսության ոչ թե վակֆային կալվածները, այլ գնված դանձագին մուլքերը։ Հետևապես այն փաստը, որ XVII դարի վերջին Հակոբ Ջուղայեցու ձեռքով գնած դանձագին մուլքերը համարյա ամբողջությամբ դուրս էին եկել էջմիածնի վանքի տնօրինությունից վկայում է, որ ի տարբերություն վակֆային կալվածների այն դանձագին մուլքերը, որոնք իրավական ձևակերպմամբ չէին հաստատված իբրև վակֆ, ենթակա էին ամեն կարգի օտարման, ինչպես նաև նրանց նկատմամբ չէր կիրառվում մուաֆության իրավունքը։ Որոշ վկայություններ հիմք են տալիս եզրակացնելու, որ վակֆային կալվածները տրվել են միայն կապալով, ընդ որում կարճ ժամանակով։ Դա է հավաստում շարիաթական դատարանում 1648 թ. հաստատված մի կալվածագիր, որում տեղեկացվում է, որ Սպահանում բնակվող երևանցի խոջա Հակոբը Հովհաննավանք գյուղում ունեցած իր հողային տարածությունները վակֆային իրավունքովընծայում է տեղի ս. Կարապետի վանքին այն պայմանով, որ «...ոչ մինը չվաճառին և ոչ էլ թե կապալաւ տան երկար միջոցաւ»[41]։

Հարկ է նշել, որ մուաֆության իրավունքը միօրինակ երևույթ չէր։ Պետական հարկերից ու տուրքերից լրիվ ազատված լինելը տալիս էր ամբողջական մուաֆության իրավունք, այսինքն, ինչպես նշվում է «Ջամբռում», «Հայրապետն և միաբանք ոչ տայցեն զկերպիւ իւիք հարկս մարմնաւոր տե-

րանց՝ որպէս տան աշխարհականք։ Անդք, այգիք և կալք սորին ոչ չափիցին, անասունք և գրաստքն ոչ ի թիւ արկցին, ջրաղացք և այլք այսպիսիք ոչ գրիցին մուտը և ելք սորին, ոչ տայցեն զմաքս, և ոչ տալ զգլխահարկս, զհնգորդս, զտասանորդս, զտնախարճս, զանասնախարճս և զմիջքախարճս»[42]։ Նման իրավունքներ ունեին տեղի մուսուլմանական հոգևոր հաստատությունները, ինչպես նաև Էջմիածնի վանքի միաբանությունը։ Մյուսները այդ իրավունքը ունեին սերմանելիքի որոշակի քանակի շրջանակում, որից շատ ցանելու համար ավելորդի համար պետք է վճարեին, այսինքն ունեին սահմանափակ մուաֆության իրավունք։ Տեղի մուսուլման իշխողները փորձել են Էջմիածնին ամեն կերպ պարտադրել մուաֆության հենց այդ իրավունքը. «Իսկ չարն Մահմատ-Ղուլի,—գրում է Սիմեոն Երևանցին,—որ ի խան էր երկրիս Երևանու, կամեցաւ հնգորդ առնուլ ի ցանելոց հասիցն սրբոյ Աթոռոյս»[43]։ Երևանի Նաջաֆկուլի խանի նման ոտնձգության դեմ շահ Աբաս II բողոքում է Հակոբ Ջուղայեցին. «...մեկ դութանի տեղ հալիւ կարեմք սերմանել, ի նմանէ ևս կամին զհարկս առնուլ»[44]։ Եվ վերջապես մուաֆության երրորդ տեսակին պատկանում էին այն հաստատությունները, որոնք այլ հարկեր վճարելու պարտականությունից ազատված էին, բայց ռենտայի ապահարկության իրավունք չունեին։ Նման հոգևոր հաստատությունները, ինչպես նշվում է «Ջամբռում», գլխահարկի և այլ հարկերի կողմից «մաղաֆ» են, բայց հնուց սովորություն ունեն տարին 17 թուման 500 դինար արժողությամբ գումար կաթողիկոսի ձեռքով վճարել պետությանը, իսկ ցանքսը որքան ցանեն, ջրաղաց, այգի և այլ այսպիսիք որքան ունենան նրանց հարկը տալիս են սահմանված կարգի համաձայն[45]։

Հողասեփականության մուլք իրավունքի ձեռքբերման ուղիները հիշեցնում են հին հայկական «հայրենիք» հողատիրության տեսակը։ Ինչպես իրավացիորեն նշում է Հ. Փափազյանը, գոյություն ունի միայն որոշակի տերմինաբանական տարբերություն հայրենիք և մուլք բառերի միջև, քանի որ առաջին տերմինը ընդգծում է ավատական մասնավոր

սեփականության ծագումը տոհմական, վոտչինային հողատիրությունից, մինչդեռ երկրորդը բխում է այդ հասկացության ծագումը բացատրող աղբյուրների բազմազանությունից[46]։ Նշենք, որ քննարկվող ժամանակաշրջանում էլ մուլք բառի հետ միաժամանակ, որպես նրան համարժեք գործածվել է և հայրենիք տերմինը։ Կալվածագրում (գրված 1661 թ.), որը հաստատում է Քարվանսարա գյուղի երեք սատակ մուլքը Սաղմոսավանքին պատկանելը, ասվում է. «Ես Ոսկան վարդապետս, յորժամ էի ի վանքս Սաղմոսաց, զՔարվանսարայ ի երեք սատակ մուլքն կերի, որքան էր անդ, քանզի սատակ և կես մուլքն Ալի-բեկին և տեր Շմաւոնի հայրենիք է, որք եւուն Սաղմոսաւանուցս վախմ»[47]։ Տվյալ դեպքում «հայրենիք է» արտահայտությունը նշանակում է մասնավոր հողատիրություն, որի սեփականության իրավունքը՝ մուլքը օտարվել է Ոսկան վարդապետին։ Հետևապես Սաղմոսավանքը ստացել է Քարվանսարա գյուղի տիրապետման ու տնօրինման իրավունքը։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում հողային սեփականատիրական իրավունքն իր մեջ պարփակում էր նաև ջրային իրավունքը, այսինքն մուլք էր համարվում նաև ջրատիրությունը։ Ս. Եղիազարովը իր հանրահայտ աշխատությունում գործածելով «եթե ջուր տանելն անհրաժեշտ է, ապա այն կարելի է տանել եկեղեցու միջից» տարածված ասացվածքը փորձում է հիմնավորել, թե ոռոգելի ջրի նկատմամբ մուլքադարը չի ունեցել մասնավոր սեփականատիրոջ իրավունք, որ իր հողից ջուր անցկացնելու համար հողատերը իրավունք չուներ հատուցում պահանջելու[48]։ Համաձայնելով Ս. Եղիազարովի տեսակետին Լեոն գրում է. «Ջրի ճամփան անտես էր անում և մասնավոր սեփականության իրավունքը»[49]։

Ջրերը օգտագործման տեսակետից բաժանվում էին երկու խմբի. բնական ջրեր և հանած ջրեր։ Առաջին խմբին էին պատկանում գետերը, լճերն ու լճակները, աղբյուրները և այլն։ Երկրորդ խմբի մեջ էին մտնում ջրհորները, արհեստական առուները, քանքանները և այլն։ Այդ երկու խմբե

ջրերի նկատմամբ տարբեր իրավահարաբերություններ էին ծագում: Եթե բնական հոսող ջրերից անխտիր օգտվելու իրավունք ունեին տվյալ վայրի բոլոր բնակիչները, ապա հանած ջրերը, որոնց ջուրը չէր հոսում կալվածատիրոջ հողերի սահմաններից դուրս, ենթարկվում էր նրա բացարձակ տիրապետության իրավունքին: «Որևէ ջրից ոռոգման նպատակով օգտվելու իրավունքը,—գրում է Հ. Փափազյանը,—դիտվել է որպես սեփականություն կամ մուլք և որպես այդպիսին ժառանգվել է սերնդից-սերունդ, կամ ենթարկվել տարբեր կարգի օտարման»[50]: Ջրի առուծախին վերաբերող կալվածագրերից մեկում կարդում ենք. «Թվին ՌՃԼ (1681) ես՝ Սիմոնի որդի Մալխաս և ես՝ իւր մայր Նունուֆարս, մեք մեր կամաւն ծախեցինք մեր մին գլուխ ջուրս ս. Նախավկայի առաջնորդ Յոհան վարդապետին տասն և վեց հազար դիանի»[51]: Նույն բնույթի մեկ այլ վավերագրում ասվում է. «Զորութիւն գրոյս այս է. Թուին ՌՄԻԳ (1774) հոկտեմբեր ամսոյ Ժ(10). Ես՝ Մահտեսի Ղազարի որդի Աստուածատուրս իմ յօժար կամաւս ծախեցի Մակարի գահրէզէն երկու գլուխ ջուր, և ջրի օրն է ուրբաթ, ս. Նախավկայի առաջնորդ Գրիգոր վարդապետին ութն Ռ(8000) դիան փող»[52]: Իսկ ագուլեցի ամն Խոջենց Մեհրաբի որդի Թումանին պատկանող այգու վաճառքին վերաբերող 1670 թ. գրված մի կալվածագրում ասվում է, որ վաճառվում է ամբողջ մի կտոր խաղողի այգի իր ջրի իրավունքով[53]: Ուշագրավ է, որ և 1681 և 1774 թթ. կալվածագրերում գործարք կատարողները միաժամանակ շեշտում են, որ «...ոչ ում խօսք և կամ իլաղայ չկա և չունի. ոչ ազգաց և ոչ բարեկամաց, ոչ ով բանասօղ կամ պատճառ բերօղ չլինի»: Ուրեմն, հիշյալ անձնավորությունները իրենց միջոցներով անցկացնելով ոռոգման ուղի, այն վեր են ածել մուլքի, այսինքն ջրին տիրել են լիակատար տիրության իրավունքով, իսկ դրա մեկ կամ երկու բաժինը վաճառելուց հետո կորցրել են այդ իրավունքը:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### 1. ԱՎԱՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՆ ԵՎ ՆՐԱ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ավատական հասարակության արտադրական հարաբերությունների հիմքը հողի նկատմամբ ավատատիրոջ սեփականությունն էր։ Ավատատիրոջ սեփական տնտեսությունը նրա հողի մի մասն էր կազմում։ Հողի մյուս մասը նա օգտագործելու էր տալիս գյուղացիներին։ Ժառանգաբար օգտվելով իր հողաբաժնից, գյուղացին պարտավոր էր աշխատել կալվածատիրոջ համար, կալվածատիրոջը տալու իր հավելյալ արդյունքը բնամթերային կամ դրամական ձևով։ Ուրեմն, գյուղացու աշխատաժամանակը բաժանվում էր անհրաժեշտ ու հավելյալ ժամանակի, որից անհրաժեշտ ժամանակի ընթացքում նա ստեղծում էր իր սեփական գոյության համար անհրաժեշտ արդյունք, իսկ հավելյալ ժամանակի ընթացքում նա ստեղծում էր այն հավելյալ արդյունքը, որը յուրացնում էր ավատատերը։ Ավատատիրոջ տնտեսության մեջ աշխատող գյուղացիների հավելյալ աշխատանքը կամ այն հավելյալ արդյունքը, որ ստեղծում էր գյուղացին իր տնտեսությունում և որը յուրացնում էր ավատատերը, կազմում էր ավատական հողային ռենտան։

Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում մուլք էր կոչվում ոչ միայն հողային սեփականությունը, այլև հողատերերի կողմից այդ սեփականությունից օգտվելու իրավունքը, այսինքն ոչ միայն անմիջական օգտագործման

տակ գտնվող հողի մասնավոր սեփականությունն էր կոչվում մուլք, այլև այդ սեփականության յուրացման տնտեսական ձևը կամ ռենտան: Պետական և մասնավոր սեփականատիրական հողերում գյուղացին հողի օգտագործման համար սեփականատիրոջը վճարում էր ռենտա: Պետությանը վճարվող հողային ռենտայի մասը կոչվում էր «բահրաչե-ե դիվանի» (դիվանական բահրա), իսկ կալվածատիրոջը հատկացվող մասը՝ «բահրաչե-ե մալիքանե» (կալվածատիրական բահրա): Պետությանը վճարվող հողային ռենտայի մասը կազմում էր բնամթերքի 1/5 մասը, իսկ կալվածատիրոջը՝ 1/10: Այդ մասին Սիմեոն Երևանցին վկայում է հետևյալը. «Զի որպես է սովորութիւն երկրիս որք ի յամենայն գեօղորայս զոր ինչ սերմանեն՝ ի հնգէն մեկ զհնգորդ տան յարքունիս, որ բահրայ ասի, և ի տասնէն մեկ զտասնորդ տան մլքատեառն՝ որ մուլք ասի»[1]: Հետևապես, պետությանը և կալվածատիրոջը վճարվելիք ռենտան կազմում էր ամբողջ բերքի մոտ 1/3 մասը: Մուլքի բնորոշումը իր երկրորդական նշանակությամբ Սիմեոն Երևանցին հիշատակում է նաև այլ առիթներով: Այսպես, նկարագրելով այն հանգամանքները, որոնց պայմաններում Վաղարշապատ գյուղի մուլքը անցել է էջմիածնի վանքին, նա գրում է. «Արդ այս Գրիգոր կաթողիկոսն, որ նստաւ հրամանագրով Ջահան-շահ թագաւորին Դաւրիժու ի ՊՂԲ (1443) թուոջն ներում ի սուրբ Աթոռս էջմիածնին, գնէ զշեշդանք մուլքն գեղջս այսմիկ (որ է տասնորդ)»[2]: Իսկ Օշական գյուղի վերաբերյալ նա գրում է. «Յաղագս 30շական կոչեցեալ գեղջն, որոյ վեր դանկ մուլքն այսինքն տասանորդն է սրբոյ Աթոռոյս»[3]: Մուլքը որպես հողագործ գյուղացիության կողմից պետությանն ու կալվածատերերին վճարվող հողային ռենտա, հիշատակվում է նաև այլ կարգի աղբյուրներում: Այսպես, Տաթևի վանքի եկամտացանկերը պատկերող վավերագրում ասվում է. «Տաթեւու վանքին պահրէքն, որէ մուլքն»[4]: Իսկ նույն վավերագրում Տաշու-Մալդաշ գյուղի տասանորդի վերաբերյալ մասնավորապես ասվում է. «Մալդաշու մուլքն ժ (10) են մեկը տան»[5]: Այսպիսով, մուլքը իր սոցիալ-տնտեսական իմաս-

տով միաժամանակ գյուղացիությունից քամվող հողային ռենտան էր։

Կային գյուղեր, որոնք սեփականատիրոջը վճարում էին կրկնակի մուլք։ Նման գյուղերից Սիմեոն Երևանցին հիշատակում է Օշականն ու Ցրանկանոցը։ Ինչպես տեղեկանում ենք «Ջամբռից», մինչև 1681 թ. Էջմիածնի միաբանությանը հաջողվում է ամբողջովին ձեռք բերել ու վանքի տնօրինմանը հանձնել Օշական գյուղի սեփականության իրավունքը։ Մոտ քառասուն տարի օշականցիք վճարում են վանքին մեկ մուլք։ Հետագայում, տարերային աղետների ու անբերրիության պատճառած վնասների հետևանքով, չկարողանալով վճարել պետական հարկերն ու տուրքերը, գյուղացիները Աստվածատուր կաթողիկոսից 150 թուման փող են խնդրում՝ պարտավորվելով, որ գումարը ստանալուց հետո վանքին կվճարեն կրկնակի մուլք, այսինքն 2/10։ «Արդ այժմ այսքան դրամ տուր մեզ և մենք այսուհետև երկու մուլք տացուք քեզ, որ լինի ի հնգեն մեկ և ի տասնեն երկու մուլք»[6]։ Ինչպես տեսնում ենք պետական բահրան՝ «հնգորդը» մնում է անփոփոխ, ավելանում է միայն կալվածատիրական բահրան։ Նույն պատճառաբանությամբ Աբրահամ Մշեցի կաթողիկոսին են դիմում նաև Ցրանկանոց գյուղի համայնքը[7]։ Իրավացի չեն Թ. Ավդալբեկյանն ու Պ. Հարությունյանը, երբ գտնում են, թե հիշյալ գյուղերի համայնքները երկրորդ մուլք կարող էին վճարել այն անհատին կամ հաստատությանը, որը կտար նրանց իրենց խնդրած գումարը[8]։ Նման դեպքում, ինչպես դժվար չէ նկատել միևնույն գյուղի սեփականության ամբողջական իրավունքը պետք է որ կենտրոնանար երկու տարբեր անձնավորությունների կամ հաստատությունների ձեռքում։ Ճիշտ է, մուլքն իբրև ռենտա ուներ տրոհման հատկություն, սակայն դա չի նշանակում, թե գյուղի ամբողջական սեփականությունը 1/10 չափով ռենտա ստանալու իրավունքով կարող էր մասնատվել։ Մուլքն իբրև տասանորդ հանդես է գալիս հողն օգտագործելու դեպքում։ Դա նշանակում է, որ որևէ վայրի սեփականության ամբողջությունը այն տնօրինելու ու տիրապետելու իրավուն-

քով կենտրոնացված է եղել մեկ անձնավորության ձեռքում և հենց այդ իրավունքն է, որ տիրոջ ցանկությամբ ազատորեն օտարվել է, այսինքն օտարվել է ոչ թե հողը, այլ այդ հողից կամ ամբողջությամբ կամ էլ մասնակի ռենտա գանձելու իրավունքը։ Տվյալ դեպքում Օշական ու Ֆրանկանոց գյուղերի սեփականության ամբողջական իրավունքը գտնվել է էջմիածնի վանքի տնօրինման տակ, այսինքն միայն վանքն էր իրավասու այդ համայնքներից ռենտա գանձելու։ Այնպես որ, չպետք է կարծել, թե էջմիածնին դիմելը բացատրվում է նրանով, որ Օշական ու Ֆրանկանոց գյուղերի բնակիչները գերադասում էին իբրև մեկ անգամ ծանոթի, նրա հետ գործ ունենալ, քան մի պատահական մուլքատիրոջ հետ։ Կրկնակի մուլք վճարում էին նաև Տաթևի վանքապատկան որոշ գյուղեր։ Արդեն հիշատակված Տաթևի վանքի եկամտացանկերում ասվում է, որ Դաստակերտ ու Ղարաքիլիսա գյուղերը վանքին որպես մուլք վճարում էին «10-նէն 2-ը»[9]։ Պետք է նկատի ունենալ, որ չնայած կրկնակի մուլք վճարելու դեպքում թե՛ առաջին և թե՛ երկրորդ մուլքերը միևնույն անունն ունեին ու միևնույն չափը, այնուհանդերձ նրանց մեջ կար էական տարբերություն։ Եթե առաջին մուլքը հանդես գալով իբրև հողն օգտագործելու դիմաց կալվածատիրոջը վճարվող ռենտա ուներ մշտական բնույթ, ապա երկրորդը՝ պայմանավորված հիմնականում ավանդավորված դրամագլխի դիմաց կատարվող գանձումներով, իբրև երկկողմանի համաձայնության արդյունք, ուներ ժամանակավոր բնույթ։ Այդ տեսակետից հատկանշական է հենց նույն Ֆրանկանոց գյուղի օրինակը։ Ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին, 1760 թ. Երևանի Հուսեյն Ալի խանը դիմում է կաթողիկոս Հակոբ Շամախեցուն առ այն, որ ինքը կարող է Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից առանձին հայ ընտանիքներ վերաբնակեցնել դատարկված Ֆրանկանոց գյուղում («Արդ գեօղս այս ի բառնիլ Թագաւորութեանն պարսից և ի վրդովիլն երկրի Երևանու ամայացաւ ի բնակչաց իւպառ՝ որպէս և այլք բազումք»)[10] պայմանով, որ իրեն հատկացվի այդ գյուղի սեփականության երեք գան-

գի ռենտայի գանձման իրավունքը։ Ստանալով կաթողիկոսի համաձայնությունը, խանը գյուղի տնտեսության վերականգնումից հետո, մոտ ութ տարի միայնակ տնօրինում է գանձվող ռենտային ամբողջությամբ։ Եվ միայն 1768 թ. հենց իրեն՝ Սիմեոն Երևանցուն հաջողվում է մեծ ջանքերի գնով «...զերծ դանկ մուլք գեղջս այսորիկ ի յԱթոռս դարձուցանել»[11]։ Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսք չկա Ֆրանկանոց գյուղի երբեմնի կրկնակի մուլք վճարելու պարտականության մասին։ Հավանաբար գյուղի համայնքն մինչ այդ արդեն վճարել էր պարտքը, ուստի և ազատվել երկրորդ մուլք տալու ծանր պարտականությունից։

Հողից օգտվելու դիմաց պարտավոր էին ռենտա վճարել նաև թիուլային հողերի վրա նստած գյուղացիները։ Ինչպես իրավացիորեն գտնում է Հ. Փափազյանը, երբ գյուղն իր ամբողջ հարկային պարտավորություններով պատասխանատու էր դառնում միայն այս կամ այն թիուլդարին և այդ վիճակը շարունակվում էր մի քանի տասնյակ տարիներ, իսկ երբեմն էլ թիուլդարի մահվանից հետո փոխանցվում նրա ժառանգներից որևէ մեկին, այդ դեպքում ահա թիուլդարի և նրա հարկատու գյուղացիների միջև ստեղծվում էին հողատիրոջ և հողը վարձակալող գյուղացու փոխհարաբերություններ և շատ հաճախ այդ փոխհարաբերությունները ավելի ամուր էին, քան մուլքադարի և նրա գյուղացիների փոխհարաբերությունները[12]։ Այս դեպքում արդեն գյուղացին պարտավոր էր թիուլի տիրոջը վճարել իր համախառն բերքի 1/3, այսինքն թիուլը իր մեծությամբ հավասար էր կալվածատիրոջն ու պետությանը վճարվող ռենտայի բաժնի գումարին։ Տարբերությունը միայն կայանում էր նրանում, որ կալվածատիրականի դեպքում ռենտան տրոհվում էր երկու մասի (կալվածատիրոջը 1/10, պետությանը՝ 1/5), ապա այստեղ այն չէր տրոհվում։ Այսպիսով, թե մուլքը և թե թիուլը տնտեսական իմաստով հողային ռենտայի տարբեր արտահայտություններն էին։

Ինչպես հայտնի է, ավատական հողային ռենտան իր զարգացման ընթացքում անցել է երեք փուլ՝ աշխատավճար,

բնավճար և դրամական։ Հողային ռենտայի հիշյալ երեք տեսակներն էլ գոյություն են ունեցել միջնադարյան Հայաստանում և արտացոլել են գյուղացիության շահագործման ձևերն ու աստիճանը։ Սակայն, չպետք է կարծել, թե ռենտայի տեսակները Հայաստանում հանդես են եկել իրենց զուտ տեսքով։ Ճիշտ է, ֆեոդալական արտադրաեղանակի էությունը բոլոր երկրներում էլ դրսևորվում է այդ հասարակարգի դասակարգային հարաբերությունների ձևով, սակայն դա չի խանգարում, ինչպես նկատել է Կ. Մարքսը, որ այդ հարաբերությունները տարբեր երկրներում տարբեր հանգամանքների ու պայմանների հետևանքով ունենան որոշակի առանձնահատուկ ձևեր, դրսևորվեն տարբեր աստիճաններով[13]։ Ինչպես վկայում են աղբյուրները, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում տակավին գերիշխող էր հողային ռենտայի բնատուրքային ձևը։ Այսպես, 1692 թվականից մեզ են հասել Երեմիա վարդապետի տեղեկությունները «հուլավար» կոչված այն տուրքերի մասին, որը եկեղեցու (Տաթևի վանք) անմիջական սեփականությունը կազմող հողերի վրա նստած գյուղացիներից գանձվող հողային ռենտան էր։ Համաձայն այդ տեղեկությունների Տաթև գյուղի համայնքը վճարում էր 24 բեռ (1 բեռը=շուրջ 100—120 կգ) ցորեն, 4 լիտր (1 լիտրը=Երևանում 4,8 կգ, Շիրակում 8 կգ, Նախիջևանում 3,5 կգ) մեղր, Սվարի գյուղը՝ 15 բեռ 3 մարղան (1 մարղանը=մոտ 35—40 կգ ) ցորեն, Աղանց գյուղը՝ 9 բեռ 1 մարղան ցորեն, Տանձատափը՝ 6 բեռ 5 մարղան ցորեն, Շնհերը՝ 25 բեռ ցորեն, 3 լիտր մեղր, 6 մարղան հոն և ընկույզ, Հալիձորը՝ 8 բեռ 5 մարղան ցորեն, 1 լիտր մեղր, 3,5 մարղան հոն և ընկույզ, Բնունիքը՝ 24 բեռ ցորեն[14]։ Բերված վկայությունները ցույց են տալիս, որ «հուլավարը» ոչ թե հարկ էր, այլ ավատատիրոջ սեփականությունը հանդիսացող հողի վրա աշխատող գյուղացու ստեղծած հավելյալ աշխատանքն էր, որ ստանում էր ավատատերը բնեղեն տեսքով։ Դա երևում է նաև ձեռագրի վերնագրից. «Հուլավարն գիւղօրէից տասանորդք այսք են»։ Ավատական հողային սեփականու-

թյան գոյության պայմաններում գյուղացին սեփականատիրոջը հարկ չի վճարում, քանի որ հարկը որպես տնտեսական կատեգորիա բացառապես առնչվել է պետության հետ։ Հետևապես «հուլավարը» տասանորդի ձևով գանձվող հողային ռենտան էր կամ մուլքը։

Թեև քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում ավատական հողային ռենտայի տիրապետող ձևը բնավճարայինն էր, դրա կողքին գոյություն է ունեցել և աշխատավճարային ռենտա։ Աշխատավճարումների կամ կոռային աշխատանքի չափերի մասին կան որոշակի մատենագրական տեղեկություններ։ Դրանք ցույց են տալիս, որ աշխատավճար ռենտան պարտադիր աշխատանքային պարտավորություն էր, որ իշխողների կողմից դրվում էր գյուղացիների վրա պետության կարիքների համար զանազան տիպի կառուցումներ կատարելու պայմանով։ Այսպես, Զաքարիա Քանաքեռցին տեղեկացնում է, որ Երևանի Ամիր-գունա խանը իր կառավարության տարիներին (1605—1625) «...ձեռն էարկ շինութեան և մարդաշատութեան։ Նախ սկսաւ շինել զբերդն և ապա ապարանս և չայգիս և զբուրաստանս և զպարտէզս, և հանել զառուս զառավելուլ զջուրսն։ Այլև ի տեղիս-տեղիս թեթևացոյց զհարկն և եբարց զծանր լուծ ի պարանոցէ ռամկաց։ Բայց զի բազմացոյց զսուրխայն, այսինքն կոռն»[15]։ Բերված վկայությունից չպետք է կարծել, թե խանն իրոք թեթևացրել է հարկերը։ Նա պարզապես իրեն հանձնված կուսակալությունում աշխատավոր բնակչության թվաքանակի ավելացման նպատակով նախանձախնդրություն է ցուցաբերել, որի հետևանքով Հայաստանի տարբեր շրջաններից հազարավոր հայ ընտանիքներ գաղթեցին Երևանի խանություն։

Կոռի կապակցությամբ Արևելյան Հայաստանում կատարվել է մարդահամար, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվել գյուղացիներից առողջներին ընտրելու վրա։ Այդ մասին ընդարձակ վկայություն ունի Զաքարիա Քանաքեռցին. Երբ մի անգամ,—հայտնում է պատմագիրը,—մարդահամար կատարող Ասլան աղան եկել է Քանաքեռ, նրան է

ներկայացել նաև իր հայր Մկրտիչը՝ շալակին ունենալով կաղ Զաքարիային։ Երբ աղան տեսել է նրան փոքր, կաղ ոտքերով, բարկացել է և ասել. առողջ որդիներիդ պահել ես ու անդամալույծներին ես բերել։ Եվ հրամայել է երեսի վրա վայր գցել նրան, ջրաողող անել և գլխին ու ոտքերին մեկական մարդ նստեցնելով այնքան ծեծել, մինչև նա անշնչացել է[16]։

Ինչ վերաբերում է գյուղացու կողմից կատարած կոռային աշխատանքի չափին, ապա այն կախված էր գյուղատնտեսական արտադրության զարգացման մակարդակից, նրա տեխնիկական պատվանդանից, ինչպես նաև գյուղացու աշխատանքի արտադրողականության աստիճանից։ Եթե նկատի ունենանք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում տարածված չէր ավատական տնտեսությունը (այն հիմնականում վանական-եկեղեցական էր), այսինքն նստակյաց ավատական տնտեսություն վարող ավատատերերի թիվը մեծ չէր, ապա պարզ է, որ աշխատավճարումների հիմնական մասը կատարվել է պետության կարգադրությամբ և քիչ է կապված եղել գյուղատնտեսության հետ։ Հետևապես, այստեղ տարածված է եղել աշխատավճարումների սկզբնական ձևը՝ բիգարը, երբ հողագործ գյուղացիները պարտադիր ձրի աշխատանք էին կատարում ճանապարհների, կամուրջների, բերդերի, պալատների ու ջրանցքների կառուցումների վրա, ինչպես նաև ռազմական արշավանքների ժամանակ։ Չի բացառվում նաև այն, որ որոշ ավատական տնտեսություններում կիրառվել է վարձու աշխատանք։ Այսպես, Զաքարիա Ագուլեցին, որը ոչ միայն ժամանակի նշանավոր առևտրականներից էր, այլև ընդարձակ հողամասերի տնօրեն, տեղեկացնում է, թե իր տնտեսությունում օգտագործել է նաև վարձու աշխատուժ. «Տնգուեթք ամեն նոր տնգեցի, նոր շինեցի, շատ չարչարանք քաշեցի այս այքուս վերայ Ե(5) տարի, որ մինչ ԲՌ(2000) մշակ բանացրի»,—գրում է նա[17]։ Վարձու աշխատանքին մեծ տեղ էր հատկացված հատկապես էջմիածնի վանական տնտեսությունում։ Պետք է նշել, որ այդ հանգամանքը որոշ

տարակարծություններ է առաջացրել ուսումնասիրողների շրջանում։ Այսպես, Ս. Պողոսյանի կարծիքով XVII—XVIII դարերում էջմիածնի վանքապատկան տնտեսությունը խարսխված է եղել վարձու աշխատանքի վրա և դա իբր տանում էր դեպի ավատական հարաբերությունների քայքայում ու կապիտալիզմի սաղմերի սկզբնավորում[18]։ Անժխտելի է, որ էջմիածնի կալվածատիրական տնտեսությունում կիրառվել է վարձու աշխատանք, սակայն աշխատանքի այդ ձևը նախ չի հանդիսացել տիրապետող և ոչ էլ ապացուցում է ավատական կարգերի քայքայումը։ Ինչպես վկայում են վանքի «Ելից-մտից» մատյանները, այստեղ կիրառվել է ժամանակավոր, սեզոնային մշակների աշխատանքը, որոնք իրենց կատարածի դիմաց ստացել են սնունդ և դրամական վարձատրություն[19]։ Սակայն դա ևս չի նշանակում, թե գյուղացին իրավասու էր սեփականատիրոջ համար աշխատավճարումներ կատարելու պարտականություններից հրաժարվելու։ Ինչպես վկայում են, օրինակ Տաթևի վանքի եկամտացանկերը, Տաթև գյուղի բնակիչները պարտավոր էին վանքի համար մեկ օր վար անել, իսկ երկու օր հունձ, Տանձատափի բնակիչները՝ մեկ օր վար անել, երեք օր հնձել, մեկ օր խոտ հարել և այլն[20]։ Որպես սեփականատեր, էջմիածնի վանքը ևս իր մուլքադարական գյուղերից իրավասու էր աշխատավճարային ռենտա պահանջելու։ Ու չնայած այն հանգամանքին, որ քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում կոռային աշխատանքը մեծ չափերի չէր հասնում, էջմիածինն իր բնույթով, ինչպես իրավացիորեն նշում է Հ. Թումանյանը, որպես հայ եկեղեցու կենտրոն հնարավորություն ուներ պարտադիր կոռից բացի օգտվել նաև կամավոր կոռից, երբ գյուղացիները «հոգու փրկության» համար կամովին կոռ էին կատարում[21]։

Ավատական ռենտայի վերոհիշյալ երկու տեսակներից բացի, XVI—XVIII դարերում Արևելյան Հայաստանում որոշ կիրառություն է ստացել և դրամական ռենտան։ Կ. Մարքսը խոսելով դրամական ռենտայի մասին, նշում է նրա առաջացման հետևյալ պայմանները. «Արդյունքներով ռենտայի

փոխարկումը դրամականի, որն սկզբում կատարվում է տեղ-տեղ, հետո էլ ավելի կամ թե պակաս չափով մտնում է ազգային մասշտաբին, այդ փոխարկումն ենթադրում է առևտրի, քաղաքային արդյունաբերության ու սրա հետ էլ փողային շրջանառության արդեն զգալի զարգացում[22]։ Թեև դրամական ռենտայի առաջացումն ու տարածումը ապահովող Կ. Մարքսի կողմից նշված պայմանները Արևելյան Հայաստանում արդեն XVII դարի կեսերից աստիճանաբար ստեղծվում էին, այնուհանդերձ այն չհասավ ազգային մասշտաբի։ Երկրի տնտեսական կյանքի զարգացումը ամբողջությամբ վերցրած տենդենց ուներ բնատնտեսական հարաբերություններն ամրացնելու, քան այն քայքայելու։ Դրամական ռենտան այստեղ կիրառություն գտավ լոկ այն չափով, ինչ չափով որ քաղաքային կյանքի զարգացման, առևտրի ու փոխանակության ծավալման կապակցությամբ ավատատերերի մոտ փողի պահանջ էր առաջանում։ Այս էր այն չափանիշը, որը պայմանավորում էր բնավճար ռենտայի որոշ մասի փոխարկումը դրամականի, ընդ որում այդ փոխարկումը կատարվել է ոչ թե ուղղակի ձևով, այլ անուղղակի, այսինքն օգտագործվել է փողի, որպես ընդհանրական համարժեքի ֆունկցիան ու անհրաժեշտության դեպքում բնավճար ռենտան գանձվել է փողով։ Այս առումով հատկանշական է Օշական և Ցրանկանոց գյուղերի օրինակը։ Ինչպես գիտենք այդ գյուղերը «...յաւելի պահանջմանց հարկաց այլազգեաց» իրենց մուլքադար էջմիածնի վանական տնտեսությունից համապատասխանաբար 150 և 40 թուման փող էին վերցրել այսուհետև վանքին կրկնակի մուլք վճարելու պայմանով։ Տվյալ դեպքում կատարվում է միակողմանի փողի առևտուր, որից սակայն վանքի միաբանությունը ոչնչով չէր տուժում, քանի որ ստացվելիք կրկնակի բնամթերային ռենտան արժեքով շատ անգամ տվածից ավելին էր։ Դրան զուգահեռ կատարվում էր և հակառակ պրոցեսը, երբ հոգևոր հաստատությունը գյուղական համայնքին է զիջում գանձվող բնամթերային ռենտայի որոշ մասը, որի դիմաց պահանջում է վճարել դրամով։ Այս տեսակետից

ուշադրավ է հետևյալ օրինակը. 1656 թ. Ընձենու Բերդ գյուղի համայնքը դիմում է կաթողիկոս Հակոբ Ջուղայեցուն առ այն, որ եթե Դարաշամբի ս. Նախավկայի վանքի ստակ ու կես մուլքը իրենց օգտագործման տրվի, ապա պատրաստ են դրա դիմաց վանքին տարեկան վճարելու 12000 դինար փող[23]:

Ավատական հողային ռենտայի տարբեր տեսակները հաճախ հանդես էին գալիս միաժամանակ, նրանցից մեկի (ամենից շատ բնամթերային ռենտայի) գերակշռության պայմաններով: Ինչպես երևում է Երեմիա վարդապետի «Հուլավար» կոչված տուրքերի մասին եղած տեղեկանքներից, Տանձատափ գյուղի համայնքը օրինակ, որպես ռենտա պարտավոր էր Տաթևի վանքին վճարելու. Զ(6) բեռն և Ե(5) մարդան ցորեն և ԱՌ(1000) դիան. Ա(1) օր վար անեն. Գ(3) օր հունձ»[24]: Հողային ռենտայի բոլոր այս ձևերում ռենտա վճարողը հանդիսանում է որպես հողի մշակող, որի չհատուցված հավելյալ աշխատանքը անմիջապես անցնում է հողի սեփականատիրոջը:

Ավատական հողային ռենտայի տարբեր ձևերը միաժամանակ կենտրոնացված էին մեկ ռենտա-հարկի մեջ, որը կոչվում էր «Մալոջհաթ»: Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ այդ տերմինի տակ պետք է հասկանալ վճարումը միայն բնամթերքով, իսկ ոմանք էլ՝ դրամով: «Տերմինաբանորեն,—գրում է Ի. Պետրուշևսկին,—դա երկրագործությունից վերցվող հիմնական հարկն է, բերքի մի մասը և, հետևապես ռենտա-հարկի հիմնական մասը: Այդ տուրքը, նայած թե տվյալ գյուղը հողատիրության որ տեսակին է պատկանում, վերցվում էր կամ ամբողջապես պետության օգտին կամ ամբողջապես հողատիրոջ օգտին, կամ էլ բաժանվում էր նրանց միջև որոշակի համամասնությամբ: Մալոջհաթը որպես կանոն մուծվում էր մթերքով, ցորեն, գարի, բրինձ, բամբակ, մետաքս և այլն: Մալոջհաթը Երևանի ու Նախիջևանի խանություններում կազմում էր բերքի 1/3-րդը»[25]: Պ. Հարությունյանը գտնում է, թե մալոջհաթի հարցում Ի. Պետրուշևսկու տեսակետը հաստատուն չէր Արևելյան Հա-

յաստանի համար։ Նրա կարծիքով այստեղ այն վերցվում էր միայն դրամով[26]։ Մալոջհաթը որպես դրամով վճարվող հարկ է դիտում նաև Հար. Աբրահամյանը[27]։ Լեոն մալոջհաթի հարցում հայտնում է հետևյալ կարծիքը. «...գյուղական հարկատվության հիմքը հողագործությունն էր։ Հարկ ստացվում էր հողային բերքերով և այդ հարկը զանազան տեղեր այլ և այլ անուններ ուներ.—մի տեղ բահրա, մի տեղ՝ թովջի, մի տեղ՝ մալջհաթ։ Դա հին տասանորդն էր, բայց հասկացված զանազան չափերով։ Ստացվում էր և իսկական տասանորդ (3/30), կային և շատ տեղեր, ուր ստացվում էր 15/30 և նույնիսկ 20/30, մասը ցորենի, գարու և ուրիշ արմտիքների ամբողջ հունձից, իսկ բամբակից ու շերամից վերցվում էր 6/30 մասը։ Միևնույն չափով հարկ ստացվում էր հարդից ու առվույտից»[28]։ Ի լրումն Պետրուշևսկու և Լեոյի այն կարծիքների, թե մալոջհաթը նախ ռենտա-հարկն էր, որ վերցվում էր երկրագործությունից, Հ. Փափազյանը ավելացնում է. «Մալոջհաթ տերմինը կազմված է «մալ» (ապրանք, հարստություն) և «ջհաթ» (կողմեր, վայրեր, վարելահողեր) բառերից։ «Մալը» սեփականության հարկն էր, իսկ «ջհաթը» գյուղի վարելահողերից գանձվող հողային հարկը։ Այս երկու հարկերը միշտ միասին էին հաշվվում և ընդհանուր գումարով գանձվում գյուղական համայնքից։ Մալոջհաթը բնակչությունից գանձվող ռենտա-հարկի մեծ մասն էր կազմում և մի անգամ որոշված անփոփոխ չափերով գանձվում էր ռայաթներից։ Դրա համար էլ, շատ հաճախ, այս անվան տակ հասկանում էին տվյալ օբյեկտից գանձվող նաև այլ հարկերը։ Այս դեպքում «մալոջհաթ» տերմինը դիտվում էր որպես հավաքական հարկային տերմին»[29]։ Որ «մալ»-ը հողային ռենտայի իմաստ է արտահայտել, երևում է Ադերբայջանի (Թավրիզի) բեկլարբեկիի 1581 թ. հրամանագրից Վանանդի ձորում գտնվող և Ագուլիսի վանքին պատկանող հողերից պետական հարկեր գանձելու կարգի մասին։ Հրովարտակում մասնավորապես ասվում է. «...Ադագ-Ջիրանի Վանանդի ձորի հողերից մի քանի հողակտորներ պատկանում են Ագուլիսի վանքին, իսկ վանքապատկան այդ հողերի մալը և դիվանական պարտավորությունները Ագու-

լիսի մալոջհաթի տակ ի մի է բերված, ուստի Թող Վանանդի ձորում գտնվող գյուղերի քյադխուդաները և ռայաթները նախկին կարգով վարվեն և հիշյալ հողերի մալի և դիվանական պարտավորությունների պատճառով Ագուլիսի վանքի վանահոր անունով ոչ մի իթլաղ կամ հավալե չուղարկեն, Թող սրանից հետո նախկին ձևով չվարվեն և, այս ընդունելով որպես խիստ կարգադրություն նրան ենթարկելը իրենց պարտականությունը համարեն»[30]։ Ուրեմն, Հ. Փափազյանը մալոջհաթը նախ չի նույնացնում բահրային, ինչպես դա անում են Ի. Պետրուշևսկին և Լեոն։ Մալոջհաթը կարող էր գանձվել թե բնեղենով և թե դրամով, մինչդեռ բահրան գանձվում էր միմիայն բնեղենով։ Եվ բացի այդ, սեփականություն ասելով չպետք է նկատի ունենալ միայն հողային սեփականությունը, այլ նաև այդ սեփականության վրա ստեղծված զանազան տնտեսական օբյեկտներ (ջրաղաց, դինգ, հնձան, ձիթհանք), որոնցից վերցվող հարկ-ռենտան նույնպես մալոջհաթի մի մասն էր կազմում։

Մալոջհաթը հիշեցնում էր Հայաստանի արաբական տիրապետության ժամանակաշրջանի հողային ռենտա-հարկը՝ խարաջը, որը իրավունք էր տալիս հարկատուին հողն օգտագործելու և ժառանգելու[31]։ Հատկանշական է, որ այժմ էլ խարաջ և մալոջհաթ տերմինները հաճախ նույն իմաստով գործածվում էին միասին։ Այսպես, Շամբի գյուղի բնակիչներին 1644 թ. ուղղված մի համախոսականից տեղեկանում ենք, որ այսուհետև Նախավկայի վանքին պատկանող գյուղացիների մեկ այգուց և արտից «մալջհաթ կամ խարճ» չեն պահանջելու, քանի որ այդ տարին պահանջել են[32]։ Մալոջհաթին համարժեք աղբյուրներում գործածվել է նաև «Ղալլե» հարկային տերմինը։ Ինչպես վկայում է շահ Իսմայիլ I 1506 թ. հրովարտակը Սիմեոն եպիսկոպոսի անվամբ Տաթևի վանքի նախկին իրավունքները Գյոգչայի վիլայեթի նկատմամբ վերահաստատելու, վանքապատկան հողերի վերստին հաստատման և այդ հողերն ու տեղի հայ հոգևորականությանը բազմաթիվ պետական հարկերից և այլ պարտավորություններից ազատելու մասին հրովարտակը «Ղալ-

լեն». գործ է ածվում գյուղացիությունից գանձվող հողային ռենտայի իմաստով, որպես բահրային համանիշ տերմին. «...ինչ կարգով որ հին ժամանակներից մինչև օրս մալի և ղալլեի հարցում նրանց հետ վարվել են, նույն կարգով շարունակեն վարվել»[33]: Այսպիսով, մալոջհաթը հողային ռենտայի ամենաընդհանուր ձևն էր, ավատատիրոջ սեփականությունը հանդիսացող հողի վրա ապրող գյուղացու ստեղծած հավելյալ արդյունքն էր, հօգուտ սեփականատիրոջ գյուղից գանձվող եկամտահարկի և հողային հարկի ընդհանուր գումարը: Եվ ինչ անունով էլ որ կատարվեին այդ մուծումները (հողային հարկ. բանջարանոցներից ու այգիներից հավաքված հարկ. ջրաղացներից, դինգերից ու ձիթհանքերից հավաքված հարկեր), դրանք բոլորը միասին կազմելով ավատատիրոջը վճարվող բնավճար ռենտան, ցույց են տվել, թե գյուղատնտեսական կուլտուրայի առանձին տեսակներից ստացվող արդյունքից կամ անասնապահական մթերքների առանձին տեսակներից գյուղացին որքան պետք է վճարեր ավատատիրոջը: Այսինքն, մալոջհաթ տերմինը լայն իմաստով գործածվել է որպես կալվածատիրոջը բնարդյունքով վճարվող բոլոր տուրքերը բովանդակող տերմին:

Քննարկվող ժամանակաշրջանում, երբ հողային մասնավոր սեփականությունը ավատական սեփականության տարբեր տեսակներով էր դրսևորվում և այդ պայմաններում հողային ռենտան և պետական հարկերն ու տուրքերը սերտ կերպով կապված էին միմյանց հետ, գյուղացու արտադրած արդյունքի այն մասը, որ բաժին էր հասնում պետությանը, դրսևորվում էր ոչ միայն հարկ-ռենտայի, այլև հարկի տարբեր տեսակների մեջ: Ուղղակի և անուղղակի ձևերով գանձվող հարկերը այլ բան չէին, քան հողային սեփականության իրավունքի տնտեսական իրացումը:

Գյուղական համայնքը հավաքական կազմակերպություն էր, որի վրա էր դրված հարկերի ժամանակին հատուցումը, ինչպես նաև զանազան պարտավորությունների կատարման ապահովումը: Հարկային մատյաններում ամեն մի գյուղական համայնք գրանցված էր որպես մեկ առանձին

արտադրական միավոր, հետևապես և հարկերի վճարումը կատարվում էր ոչ թե առանձին ծխերի կողմից, այլ ամբողջ գյուղական համայնքի։ Սկզբնաղբյուրները և հատկապես ավատական պարգևատրումներին վերաբերող շահական հրովարտակները վկայում են այն մասին, որ մեկ անգամ կատարված մարդահամարից հետո, որի ընթացքում ցուցակագրվում էին հողագործների առանձին տնտեսությունները, չափվում մշակելի տարածությունները և կազմվում էր գյուղի բոլոր չափահաս տղամարդկանց ցուցակը, հանրագումարի էին բերվում դրանցից գանձվող բոլոր հարկերը, ինչպես նաև դրանց դրամական համարժեքը ընդհանուր գումարով արձանագրվում էր կենտրոնական և հարկային մատյաններում, որտեղ մանրամասնորեն նշվում էր, թե հարկերի այդ ընդհանուր գումարից որքանն էր կանխիկ դրամով հատուցվելու (նաղդ), որքանը բնամթերքով (ջինս) և որքանը՝ հարկի դիմաց[34]։ Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Զաքարիա Քանաքեռցու վկայությունները։ Նկարագրելով Քանաքեռ գյուղում խանական հարկահան Ասլան աղայի կողմից անցկացված մարդահամարը, պատմագիրը հայտնում է, թե նա մանրամասնորեն «...գրեաց զամենն յոյժ ճշտիւ՝ զմարդ, զկով, զձի, զջորի, զէշ, զոչխար, զջրաղաց, զձիթաղաց, զարուեստս, զբրնձաղաց, զայգիս, և զպարտէզս, և այլ որ ինչ գտաւ՝ գրեաց ի ներքոյ հարկի արար»[35]։ Պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում և Վաղարշապատ գյուղի 1728 թ. թուրքական հարկացուցակները, որոնցում ռայաթների անունների թվարկման հետ միաժամանակ նշված են գանձվող հարկերի անունները, տրված են գյուղի այգիների, պարտեզների, ջրաղացների, դինգերի ու ձիթհանների ցուցակը, ինչպես նաև թվարկված են գանձվող հարկերի չափը ու դրանց դրամական համարժեքը[36]։

Արևելյան Հայաստանի XVI—XVIII դդ. տնտեսական ու քաղաքական կացության հետազոտողները այստեղ հաշվել են շուրջ 35 անուն հարկեր ու տուրքեր[37], որոնք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի.

հողային և եկամտային (11 տեսակ), զորքի ու վարչական ապարատի պահպանության համար (14 տեսակ), գլխահարկ և ծխահարկ (3 տեսակ), պետության և ավատատերերի օգտին կատարվող պարտադիր աշխատանքներ (3 տեսակ), ավատական ավազանում վճարվող ընծաներ (3 տեսակ)։ Քանի որ դրանց մի մասը ունեցել է ռենտա-հարկի իմաստ, ուստի քննության կառնենք միայն հարկերի ու տուրքերի գլխավոր տեսակները։

Մալուջհաթից հետո իր մեծությամբ աշխատավորության համար հատկապես ծանր էր ոչ մուսուլման ռայաթներից վերցվող գլխահարկը (ջիզյա), որը կանխիկ դրամով գանձվել է յուրաքանչյուր չափահաս տղամարդուց։ Ոստանի հաքիմ Կարախան բեկի հայ համայնքի իրավական վիճակին վերաբերող 1583 թ. հրովարտակում այդ մասին ասվում է. «Հայերից ամեն ոք, որ հասունության տարիքի է հասնում, նա իր գլխին ջիզյա է ընդունում և պարտավոր է վճարել չորս աղչե (արծաթ դրամի միավոր։ Մեկ աղչեն կշռում էր 1/10 գ արծաթ) մեկ մսխալ (ծանրության չափ=4,5 գ)»[38]։ Հարկ է նշել, որ գլխահարկի չափը կայուն չէր և առանձին տարիների, երկրի տարբեր շրջաններում այն ունեցել է առանձին չափեր։ Այսպես, ըստ Զաքարիա Ագուլեցու տեղեկության, Ագուլիսի գլխահարկը կազմել է մարդագլուխ 2500 դիան[39], իսկ XVIII դարի առաջին կեսին Աբրահամ Կրետացու վկայությամբ, այն կազմել է 3,5 ղուրուշ (15 ղուրուշը=1 թումանի)[40]։ Եթե նկատի ունենանք նաև, որ հայ ռայաթներից գանձվող գլխահարկը և տարիների ընթացքում նրա վրա բարդվող վերադիր գումարներն ու տոկոսները (թաֆավութ, ֆար), բավականին խոշոր գումար էին կազմում և նշանակալից տեղ էին գրավում պետության ֆինանսների մեջ, հասկանալի կդառնա, թե ինչու գլխահարկի չափը հաճախ կազմում էր նույն գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարի կեսից ավելին։ Իր հիմքում չունենալով ըստ գույքային ցենզի բաշխման նախապայման, գլխահարկի գանձումը տեղական կառավարիչների և նրանց ստորադրյալների համար բացում էր չարաշահումների լայն

հնարավորություններ: Նրանք նախօրոք հաշվի առնելով պահանջվող ծախսերը, սահմանում էին գլխահարկի ընդհանուր գումարը, որից հետո այն բաժանում բնակչության վրա։ Եվ այն պատրվակով, թե գլխահարկի նախկինում հավաքված գումարները չեն բավարարում կատարված ծախսերը ծածկելու, նրանք անվերջ մեծացնում էին գլխահարկի չափը: Երևանի Մահմատ-խանի նման ձեռնարկումների մասին Զաքարիա Քանաքեռցին գրում է. «...առաքէր քննիչս արտորէից գրել, և զհնգորդն ամ յամէ յաւելուին: Նոյնպէս զթուօչս խաշանց, զշափօղս այգեաց, և զգլխագիրս, և այսպէս ի ներքոյ հարկի եդ զամենայն»[41]: Ըստ «գլխոյ արանց» գանձվող հարկի չափերը այնքան բարձր էին, որ գյուղացիությունը ի վիճակի չէր լինում անգամ ռենտան վճարելու, որը նույնիսկ առաջացնում էր տեղական ավագանու դժգոհությունը: Ինչպես վկայում է Աբրահամ Կրետացին, ջիզյայի չափերի աննախընթաց բարձրացումը պատճառ հանդիսացավ, որ տեղական ավագանու անդամներից շատերը դիմեցին Նադիր Շահին խնդրանքով՝ թողնել ջիզյան իր նախկին չափերում, որն է 3/5 ղուռուշ յուրաքանչյուր հարկատուից[42]: Աղբյուրների վկայությամբ գլխահարկի չափը որոշելիս առաջնորդվել են և սոցիալական սկզբունքներով: Այսպես, վերը հիշատակված Ոստանի հաքիմի հրովարտակում ասվում է. «...հայերից նրանք, որոնք մաքուր ծագում ունեն կամ շատ հարստություն, այդ թող նկատի չունենան»[43]: Նման արտոնություններ, ինչպես նախորդ գլխում նշել ենք, ունեին հայ հոգևոր այն հաստատությունները, որոնք շահական հրովարտակներով ստացել էին լրիվ թարխանության (մուաֆ) իրավունք. «Հայրապետն և միաբանք ոչ տայցեն զգլխահարկս, զհնգորդս և զմլքախարճս»[44]: Փաստերը միաժամանակ վկայում են, որ նվաճողները հրաժարվելով մնացած հարկերից ու տուրքերից, հաճախ սահմանափակվել են միայն ջիզյայի գանձումով: Դա արվել է հիմնականում ոչ լրիվ հնազանդեցված շրջաններում, ուր զավթիչները ձգտել են առերևույթ զիջողական վերաբերմունքով կանխել բնակչության դիմադրությունը: Այսպես,

1725 թ., երբ թուրքական բանակը Երևանի բերդը գրավելուց հետո պատրաստվում էր ճնշելու Արցախի ու Սյունիքի հայության դիմադրությունը, արքունիք ուղարկված պաշտոնական զեկուցագրում ասվում է. «Երևանի ենթակա վայրերից Զարուզբիլի նահիան (ՀՀ Վարդենիսի շրջան) նախապես սանջաքի իրավունքով տրված է եղել Օմար փաշային։ Սակայն, երբ աստծո կամքով պատուհասի ենթարկվեց, ռայաթները սարսափի ներքո միացան Սղնախի անհավատներին ու թեև հետո նորից հնազանդվելու ցանկություն ունեցան, սակայն, քանի որ նրանց խրտշումն ու կատաղությունը դեռ չի անցել, առայժմ նպատակահարմար է դիտվել նրանցից պահանջվող ուշուրն ու ռեսմը (տասանորդ և տուրք) անտես առնել և բավարարվել միայն ջիզյայի գանձումով»[45]։

Հայ գյուղացու տնտեսության վրա ուղղակի քայքայիչ ներգործություն է ունեցել «քոդավ» կամ «չոբանբեկի» անուններով կոչվող մանր եղջերավոր անասունների դիմաց անասնահարկի գանձումը։ «...Որքան գնաց, ծանրացաւ քոդաւն, և այնքան ծանրացաւ, որ զնոյն ինքն ոչխարսն զամենայն վաճառեալ տուաք ի քոդաւն, և այնու ոչ կարացաք զերծանիլ, զպարտս ևս առաք և տուաք քոդաւ, և ապա զինչս և զստացուածս օր յաւուր վաճառելով, զորս ի քոդաւն տուաք, և զորս պարտատերացն վճարեցաք. ոչինչ մնաց, քանզի կարի յոյժ ծանր է հարկն քոդաւին»,—Խոռոմաբադ գյուղի բնակիչներից մեկը այսպես է նկարագրել անասնահարկի հետևանքները[46]։ Նվաճող ազնվականության համար հարկման այս տեսակը ևս չարաշահումների ու կամայականությունների անսպառ աղբյուր էր. «Եւ զայս ոչ գիտէ արքայն,—շարունակում է խոռոմաբադցի գյուղացին,—և նորին նախարարքն, այլ գրեն զորքանութիւն քոդաւին և տան ի ձեռս զօրականաց, և նոքա եկեալ թէ կամայ թէ յակամայ բռնութեամբ առնուն, ասելով՝ ի դիւանէն թուղթն այնպէս գրեալ՝ և տուեալ՝ և հրամայեալ եղև մեզ։ ...Եւ յայսմ պատճառէ չքաւորեցաք ոչ միայն մեք զոր տեսանես, այլ և բազում մեծատունք այսպէս եղեն, ոմանք ի մեր գեղջս՝ և այլք

յայլոց գեղօրէից գաւառիս»[47]։ Թեև անասնահարկը պետք է գանձվեր բացառապես մանր եղջերավոր անասունների դիմաց, հաճախ տեղերում խախտվում էր այդ կարգը ու գանձվում խոշոր եղջերավոր անասունների դիմաց ևս։ Թերևս այդ մասին է վկայում Զաքարիա Քանաքեռցու արդեն հիշատակված այն վկայությունը, ըստ որի, Քանաքեռում մարդահամարի հետ միասին մանրամասնորեն հաշվառման ենթարկվեցին ու հարկվեցին գյուղի համայնքի խոշոր եղջերավոր անասունները[48]։ Անասնահարկի գանձման վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում XVI դարի իտալացի ուղեգրող դ'Ալեսանդրին։ Նա գրում է, թե պետությունը մի շարք հարկերի հետ միասին ստանում էր. «...կենդանիների համար, քառասուն ոչխարի մի հոտի համար տարեկան տասնհինգ բիստի, որ մեր դրամով անում է երեք դուկատ, բայց արու կենդանիների (խոյ, ցուլ) համար չեն վճարում, ամեն մեկ կովի համար, նրանք վճարում են մեր դրամով երկու դուկատի հավասար մի գումար»[49]։ Ըստ Սիմեոն Երևանցու տվյալների, «մալ-փուլի» անվամբ անասնահարկը վճարվել է կանխիկ դրամով (նաղդ)[50]։ Ըստ Ի. Շոպենի տվյալների, իրանական տիրապետության վերջերին միայն Նախիջևանի խանությունում անասնահարկի գանձումը կանխիկ դրամով հետևյալ չափերն է ունեցել. մանր եղջերավոր անասուններից 100 ոչխարից՝ մեկը, գառներից էլ առանձին, խոշոր եղջերավոր անասուններից, մեկ գոմեշից՝ 1 ռ. 50 կ., կթան կովից՝ 1 ռ. 20 կ., բեռնակիր ձիուց՝ 3 ռ. 60 կ., էշից՝ 1 ռ. 60 կ.[51]։

Հայ բնակչության համար հատկապես ծանր է եղել մի ամբողջ շարք հարկադրանքների ու պարտավորությունների կատարումը (ալաֆե-ուլուֆե, սավարի, նամորդար, նովրուզի, խեդմաթանե, դասթանդազ, սալամի, թարհ, կոնալղա, փիշքաշ և այլն)։ Պարտավորությունների ու հարդակրանքների մի մասը պայմանավորված էր նոր նշանակված խանին, հաքիմին, թիուլդարին ու մնացած պաշտոնյաներին ռայաթների կողմից պարտադիր նվերների ձևով կատարվող հատուցումների հետ, որոնք հաճախ ուղղակի հարկերի հա-

մեծամասությամբ շատ ավելի մեծ չափերի էին հասնում[52]։ Դրանց մի մասն էլ կապված էր երկրի տիրակալի կամ բարձրաստիճան անձնավորությունների այցելությունների հետ, որոնց պայմաններում հայ գյուղացին պարտավոր էր ոչ միայն օթևան տալ, հոգալ նրանց բոլոր կարիքները, այլև դրամական հատուցում տալ քրիստոնյայի օջախում ըստ մուսուլմանական հասկացողության իբր «պղծված» վնասի դիմաց. «...ընդ հարկահանող իշխանացն հոգային զհոգս կարեաց արքայի և այլոց իշխանաց»,—հայտնում է Առաքել Դավրիժեցին[53]։

Էլ ավելի ծանր էին բանակի պահպանման համար գանձվող հարկերն ու պարհակները։ Դրանցից էր մասնավորապես սուրսաթը, որը պարտավորեցնում էր գյուղացիներին արտակարգ դեպքերի ժամանակ անհրաժեշտ քանակությամբ հացահատիկ մատակարարել բանակի զորամասերին։ Իսկ, քանի որ սուրսաթի գանձման չափը կայուն ու որոշակի չէր, այն ևս չարաշահումների ու կողոպուտի միջոց է հանդիսացել. «Թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եդեալ ի վերայ ժողովրդեանն,—գրում է Առաքել Դավրիժեցին,—և բռնութեամբ առին, նոյնպէս և զսուրսաթն, որ զկնի զօրացն բերել տային, և թէ զօրքն՝ և ի ձմեռն երիվարօքն իւրեանց զշլաղ տային...»[54]։ Արտակարգ դեպքերի ժամանակ էր գանձվում և համանիշ տերմիններով գործածվող ուլաղ և ուլամ պարհակը, երբ գյուղացիները պարտավոր էին իրենց փոխադրական միջոցները տրամադրել պետական աստիճանավորներին, ինչպես նաև իրենց ձիերի ու գրաստների հետևից հետիոտն գնալով տեղափոխել բանակի հանդերձանքն ու պաշարը[55]։

XVII դարի կեսերից, երբ առավել նկատելի դարձան սեֆյան տիրապետության շարունակ աճող քայքայման երևույթները, երբ ագնվականության օրեցօր աճող պահանջներն ու գյուղաբնակ վայրերից մեծ եկամուտներ ստանալը դարձավ անհնարին, կենտրոնական իշխանությունը սկսում դարձնել հարկերն ու տուրքերը կապալով տալը։ Խոշոր կապալառուների թվում, օրինակ, Զաքարիա Ագուլեցին

հիշատակում է Երևանի խանին, Թավրիզի վեզիրին, Ագուլիսի աղային[56]։ Ստանձնելով պետական գանձարանի սահմանած տեղական ծախսերը, ինչպես նաև պաշտոնյաների աշխատավարձի հատկացագրերի վճարումը, կապալառուները առաջին հերթին այն կատարում էին ի հաշիվ գլխահարկի։ Զաքարիա Ագուլեցու վկայությամբ, օրինակ, 1666 թ. Ագուլիսի գլխահարկը կապալով վերցրին՝ մարդագլուխ 2500 դինարով[57]։ Անվճարունակ քրիստոնյաները ենթարկվում էին ծանր հալածանքների, իսկ հաճախ էլ գործադրվում էր բռնի կրոնափոխության մեթոդը։ Ռուսական արքունիքին ուղղված իր մի գրությունում, կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին այդ մասին գրում է. «...Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրա պարսից պաշտոնյաների կողմից դրվում են ահա օտարոտի հարկեր և մեզ, որ չենք կարողանում մեր չքավորության ու աղքատության պատճառով հատուցել այդ հարկերը, քշում են դեպի բանտ, չարչարում են, տանջում և վերջապես, որ մահմեդականների նպատակների հետինն է ու գլխավորը՝ իրանց դավանանքն են հարկադրում ընդունել»[58]։ Եսայի Հասան-Ջալալյանը անդրադառնալով 1699—1702 թթ. մարդահամարին, մանրամասնությամբ է նկարագրում եկեղեցականների հարկումը. «Իսկ անդ,—գրում է պատմագիրը,—եդին հարկս ի վերայ գրելոց գլխոցն՝ երեքպատիկ յաւելմամբ ի վերայ եկեղեցական պաշտօնէից որ յառաջնումն ոչ երբեք բնաւ տասնապատիկ առաւել քան աշխարհականց ծանր բեռն եդին և զսոյն աշխարհագրութիւն հաղիւ մինչև յերիս ամս աւարտեցին, զի ի ՌՃԽԸ (1699) թուին սկսան և ի ՌՃԾԱ (1702) թուին հրաման արարին զերեք տարւոյ զգլխահարկ ժողովրդեանն, զոր նոր եդին, նաեւ վասն եկեղեցականաց և կրոնաւորաց կարգեալն ընդ նմին միահողոյն առնուլ»[59]։

Բարձրաստիճան հոգևորականության հարկումը ինչ խոսք, ավելի էր մեծացնում ժողովրդի անապահով վիճակը, քանի որ հոգևորականությունը միայն ի հաշիվ գյուղացիության էր հատուցում պետական հարկերը։ Հարկահանման կապալային սիստեմը հայ բնակչության համար ստեղծել

էր անելանելի դրություն։ Նկարագրելով Նադիր Շահի վարած հարկային ծանր քաղաքականությունը, Սարգիս գրիչը թողել է հետևյալ տեղեկությունները. «...ի Թուահաշուեն հայոց ՌՃՂԶ (1747) որ էր ի ժամանակս պարսից անագորուն եւ անօրա Նադըրշահին. զոր յոյժ նեղուի ունէին պարսից իշխանուն ժողովուրդքըն. Թող զանիրաւ հարկապահանջութիւն զոր առասել էր քան զառաջինսն յաւել եւս չար ի վրա չարեաց եւ վէրք ի վրա վիրաց. զոր Նախջեւանայ երկրին վերայ ձըգել էին ԼԵՌ (35000) թուման եւ Երեւանու երկիրն ԽՌ (40000) թուման որ բազում հանդերձ տամբք մեծաւ տառապանօք ելեալ ի տանց եւ ի հայրենեաց փախեան. եւ այլ մնացելոցն, բազում վիշտս եւ ոճիրս հասուցին, ոմանց զինչս ասպատակեալ վաճառեցին եւ այլոցն ներքոյ փայտի մահացուցին, եւ այլոց զկին եւ զորդիս եւ զդուստրս վաճառել տային եւ զայլ անթիւ անըմերելի նեղութս գոյր»[60]։ Հաճախ գանձված հարկերը պահվում էին տեղերում, որի պատճառով կենտրոնական իշխանությունը տվյալ շրջանը գրանցում էր հարկեր չվճարած վայրերի շարքը։ Հարկը վերցվում էր ոչ ամբարային բերքի չափը նկատի ունենալով։ Մինչև բերքահավաքը կապալառուն մեկնելով հարկահանման վայրերը իր հայեցողությամբ էր որոշում, թե գյուղացին անկախ ստացվելիք բերքի ընդհանուր քանակից, որքան ռենտա-հարկ պետք է վճարի։ Այս իմաստով պետության կողմից սահմանված հարկի սկզբնական չափը լոկ ձևական նշանակություն ուներ։ Կապալառուները հարկերը վերցնում էին ոչ թե որպես որոշ մաս բնակչության եկամուտներից, այլ որքան որ անհրաժեշտ էին գտնում, նկատի չունենալով նույնիսկ այն հանգամանքը, թե հարկերն ու տուրքերը վճարելուց հետո բնակչության տրամադրության տակ կմնար արդյոք ապրուստի գեթ մինիմում հնարավորություններ։ Այս իմաստով հատկանշական է Երևանի Հուսեյն խանի գործողություններին Մ. Թաղիադյանցի տված հետևյալ նկարագրությունը. «Վասնզի Յուսէին խանի բդեշխն Երևանայ որպէս ամենայն գիւղօրէից աշխարհին, նոյնպես և ողորմելի բնակչաց սորուն բաժանորդ լինէր ամենայն հեր-

կոց։ Տայր իւրաքանչիւր տան լուծն մի եզանց, և սերմանիս որիզոյ, բամբակի, և այլ ևս շահաբեր արդեանց և արդասեաց։ Յանէին նոքա, և ի ժամանակի հնձոցն առաքէր նախ ընդ մէջ կիսէր զկալ նոցա ի բաժին, ապա 'ի մնացորդացն հատանէր և զհասն արքունի, մինչ զի, չմնար ինչ նոցա և ծախուցն բաւական։ Եթէ դէպ լինէր երբեմն երկնաւոք պատուհասիւք սաերջանալ անդորէից, և զլանալ ի բերսն, սա զլնասն զանցառութեամբք ժողովրդեանն արկեալ, բռնանայր նոցա անպատմելի խժդժութեամբ, առնոյր զրաւէր զոր ինչ ի տունս նոցա գտանէր զկահս և զկարասիս, և ի պակասիլ նոցուն զկանայս և զորդիս նոցա՝ առ ի վճար ընկերական բաժնի խւրում։ Նա շատ և այն էր՝ զի դերևեալ, յայսցանէ գանիւք ծնուցանէր իւր ոսկիս, և ի տանջանաց տառապելոցն հաւաքէր արիւն յարբումն իւր. զաշխարհն համօրէն կեղեքանօքն մաշէր»[61]։

Ամեն տեսակի անօրինականությունները մեծ չափերի էին հասնում հատկապես հարկերի հավաքման ժամանակ։ Դրանցից մեկի մասին է վկայում Զաքարիա Քանաքեռցու այն վկայությունը, որում նկարագրվում է, թե ինչպես խանական աստիճանավոր Ղարա-Ղուպաթը կամայականորեն գյուղական համայնքներին հարկադրում էր վճարել այնպիսի ապրանքներ, որոնք տվյալ վայրում չկային. «Եւ էր գործ նորա այս,—գրում է պատմագիրը, —զի զոր ինչ հարկ տան իշխանին, սա գրէ գաւառապետացն և գաւառապետքն գրեն գեղօրէիցն. և ժողովեալ ձեռամբ ոստիկանաց՝ և տանին իշխանին։ Իսկ քալանթարն Ղարա-Ղուպաթ՝ զոր ինչ փոքր հարկն էր՝ գրէր գաւառապետացն, և զոր ինչ մեծ լինէր՝ ինքն գրէր ներհակ և հակառակ, զի գրէր յԷջմիածին՝ ածուղ, և յԱպարան՝ եղէգ, ի Քանաքէռ՝ գերան մարեաց, ի Ծաղկունեաց-ձոր՝ աղոխ։ Եւ այսպիսի վտանգօք տառապեցուցանէր զռամիկսն»[62]։ Իսկ Զաքարիա Ագուլեցու վկայությամբ, խանական աստիճանավոր ումն Մուսաբեկ Գողթան գավառի գյուղացիներից ապօրինաբար 4000 թուման փող է գանձում ու երբ գյուղացիները այդ արարքի դեմ բողոքում են խանին, վերջինս ոչ միայն չի բավարարում այդ արդարացի

պահանջը, այլև ինքն էլ իր հերթին խաբեությամբ բռնագանձում է 150 թուման[63]: Կեղծիքի, չարաշահումների ու բռնությունների աղբյուր էր այլադավան հպատակների ստրկացման՝ աղջկաժողովների գործադրվող պրակտիկան: Ինչպես տեղեկացնում է Զաքարիա Քանաքեռցին, Երևանի Ֆաղլ-Ալի խանը խանությունից թվով 500 աղջիկներ էր հավաքել՝ շահական հարեմ ուղարկելու նպատակով: Իրականում խանի նպատակը չէր բոլորին Սպահան ուղարկելը, այլ ստիպելու ծնողներին փրկագին վճարելու. «...ի ծնողաց նոցա առնուին զգինն և արձակէին զաղջկունս»,—գրում է պատմագիրը[64]:

Բացի ավատական հողային ռենտայի ու պետական հարկերի վճարումից, գյուղացիությունը հարկի ուժ ունեցող բազմաթիվ պարտավորություններ ուներ եկեղեցու ու հոգևորականության հանդեպ: Եկեղեցական օրենքներով օրինականացված այս պարտավորությունները (աթոռահաս, հիշատակ, հոգեբաժին, աջահամբույր, մատաղ, խոստումնք, փոքրավորեք և այլն), որոնք ամբողջացված էին հայրապետական, եպիսկոպոսական ու քահանայական «հասք և տուրք» անուններով, խլում էին գյուղացու ստեղծած արդյունքի զգալի մասը, դատապարտում նրան զրկանքների ու աղքատության: Հոգևոր հաստատություններին հասանելիք «հասքն ու տուրքը» ժամանակին չվճարելը, ինչպես նաև այդ վճարումներից հրաժարվելը առաջ էր բերում հոգևոր հայրերի զայրույթը: Այսպես, 1577 թ. Հավուց-Թառի վանահայրն ու նրան ազգակից մի քանի ավատատերեր բողոք են ներկայացնում շահ Իսմայիլ 2-րդի կողմից կազմված դատական արտակարգ հանձնաժողովին, որում տեղեկացնում են, թե իրենց պատկանող Մանկուս, Սուրբ Սարգիս, Ավանիկ, Կուդիս, Կոխդ, Կըզըլ-վանք և Թառնիս գյուղերի ռայաթները հրաժարվել են ռենտա վճարել: Արտակարգ հանձնաժողովը հրահանգում է Երևանի խանին և դատական խորհրդի տեղական լիազորներին սաստել գյուղացիներին ու ստիպել, որ նրանք կատարեն իրենց պարտավորությունները[65]: Կրոնական տուրքերի վճարումից հրաժարվելը ստիպում է Աղվանից

Ներսես կաթողիկոսին 1667 թ. հատուկ կոնդակով դիմել Դիզակի թեմի ժողովրդին, հորդորելով զանցառու չլինել[66]։ Զաքարիա Ագուլեցու մի վկայությունից էլ տեղեկանում ենք, որ 1669 թ. էջմիածնի վանական տնտեսության ներկայացուցիչ Միքայել վարդապետը Ագուլիսից ու նրան շրջակա վայրերից հավաքում է երեք տարվա չվճարված եկեղեցական տուրքը՝ մարդագլուխ 20 դինար գումարով[67]։ Իսկ Աստապատ գյուղաքաղաքի բնակչությանը ուղղված Նահապետ կաթողիկոսի 1694 թ. կոնդակում, որում շեշտվում է, թե Աստապատը վաղուց ի վեր եղել է և պետք է մնա որպես Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի վանքի թեմ, կաթողիկոսը դժգոհում է, թե «...չարաբարոյք ոմանք կամեցան զրկել զձեր ի շնորհաց և յօրհնութենից սրբոյն Ստեփանոսի Նախավկայի վանքի»[68]։ Բերված վկայությունները միաժամանակ հավաստում են, որ գյուղացուն չափից ավելի տնտեսական շահագործումը հանգեցրել է քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում դասակարգային հակամարտությունների սրմանը։ Ու թեև այդ հակամարտության մանրամասն լուսաբանումը արժանի է հատուկ ուսումնասիրության, նշենք, որ այդ պայքարը դրսևորվել է տարբեր ձևերով՝ սկսած սովորական դժգոհություններից և կրոնական բնույթի շարժումներից, մինչև զինված ելույթներ։

## 2. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ավատական հասարակարգում արտադրական հարաբերությունների հիմքը հանդիսանում է արտադրության հիմնական միջոցներից մեկի՝ հողի նկատմամբ ավատատիրոջ սեփականությունը, որը նա օգտագործում է գյուղացիությանը շահագործելու համար։ Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում գյուղերի օտարման մասին վկայող վավերագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանք օտարվում էին իրենց ամբողջ սահմաններով, այն է՝ վարելահողերով, դաշտերով, այգիներով ու ջրերով, կամ, ինչ-

պես վավերագրերն են տեղեկացնում. «այն ամենայն բանը, ինչ որ շահրիատով գիւղի վրա հաստատված է»։ Իսկ ի՞նչ էր կատարվում այդ գյուղերում բնակվող, հողն ու ջուրը օգտագործող, բուն արտադրապրոցեսը կատարող գյուղացիության հետ, օտարվո՞ւմ էր նա հողի ու ջրի հետ միասին, թե ոչ։ Հետևապես, մեր խնդիրն է պարզաբանել օտարվող գյուղերի բնակչության՝ հողի հետ կապվածության ու կալվածատիրոջից կախվածության բնույթը, որը և կորոշի նրա սոցիալական դրությունը։

Պրոբլեմի լուսաբանման ուղղությամբ մասնագետների հայտնած կարծիքները հանգում են հետևյալին. ա) ճորտական հարաբերությունների լրիվ բացառում (Վ. Բարթոլդ, Ս. Մարկոսյան, Հ. Փափազյան), բ) ճորտական հարաբերությունների որոշ տարրերի գոյության ընդունում (Բ. Հարությունյան, Ա. Եսայան), գ) ճորտական հարաբերությունների ընդունում (Ի. Պետրուշևսկի)։

Առաջադրված պրոբլեմի ուսումնասիրման համար, հարկ է քննության առնել համայնական հողատիրության հետ կապված հարցերը։

Հայտնի է, որ հին հայկական ազատ գյուղական համայնքը, որ ստեղծվել էր դեռ տոհմական հարաբերությունների քայքայումից անմիջապես հետո, շարունակում էր պահպանել իր գոյությունը ոչ միայն վաղ ֆեոդալիզմի, այլև հետագա ժամանակաշրջաններում։ Սակայն, հանրային սեփականության կողքին մասնավոր սեփականության աճն ու զարգացումը, համայնքի ներսում նյութական և սոցիալական շերտավորման ուժեղացումը, աշխարհիկ ու հոգևոր ավատատերերի՝ համայնքի նկատմամբ ձեռնարկած միջոցառումները կործանեցին գյուղական ազատ համայնքներից շատերը։ XVI—XVIII դարերում արդեն գյուղական ազատ, նախկին իմաստով իր հողերի տեր ու տնօրեն համայնքներ շատ քիչ էին մնացել։ Գյուղական ազատ համայնքներ են եղել, օրինակ, Դարաշամբի Դիպքյանդ, ինչպես նաև Շամբի ձորում գտնվող Բաշքյանդ ու Օրդաքյանդ գյուղերը, որոնց մուլքը շարիաթական ձևակերպմամբ պատկանել է հիշյալ գյուղերի

համայնքներին։ Օրինակ, Դիպքյանդ գյուղի մուլքի նույն գյուղի բնակիչների սեփականություն լինելը հաստատող 1506 թ. կալվածագրում ասվում է, որ այդ գյուղը իր «...ներքին ու արտաքին ամեն ինչով գյուղի բնակչության քրիստոնյա համայնքի իրավունքն ու մուլքն է՝ զուտ հարստությունն ու անխառն և անբաժան սեփականությունն է և, որպես մուլք իր սահմանակցության իրավունքով դեռևս նրանց հայրերի ու պապերի օրոք, սկսած հին ժամանակներից մինչև այժմ գտնվում է նրանց տիրապետության տակ և նրանց շարիաթական հաստատուն տիրապետության ներքո, և ոչ ոք այդ վայրի նկատմամբ երբեք, ոչ մի դեպքում և ոչ մի նպատակով, պատճառով կամ պատճառաբանությամբ, ոչ մի իրավունք, բաժին կամ մաս, պահանջ կամ վեճ չունի և չի կարող ունենալ»[69]։ 1658 թ. Թավրիզի Շեյխի-յե մզկիթի միաբանությունը փորձում է բռնագրավել վերը հիշատակված գյուղերի սեփականության իրավունքը պատճառաբանելով, թե այդ գյուղերը իբր ժամանակին վակֆ են արված եղել մզկիթին։ Վեճը շարունակվում է, և միայն 1668 թ. հիշյալ գյուղերի բնակիչները մեկնելով Սպահան համապատասխան վավերագրերով բարձրագույն դիվանին ապացուցում են իրենց սեփականատիրական իրավունքները[70]։ Սակայն չպետք է կարծել, թե գյուղական ազատ համայնքի բնակիչները իրենց իրավական վիճակով բացարձակ ազատ ու անկախ էին։ Հիշատակված Դիպքյանդ գյուղի կալվածագրի վերջում միաժամանակ ասվում է, որ գյուղի բնակիչները պարտավոր են կատարել իրենց «մալի բուն և հավելյալ գումարների պարտավորությունները», այսինքն պարտավոր էին հատուցել պետական ռենտա-հարկը[71]։

Եթե ազատ գյուղական համայնքի տարբերիչ գիծը ոչ ազատ գյուղական համայնքից եղել է բնակչության օգտագործած հողի նկատմամբ սեփականության իրավունքը և ավատատիրոջ հանդեպ պարտավորություններից ազատ լինելը, ապա, հասկանալի է, որ կախյալ գյուղական համայնքի բնակիչը չի եղել իր օգտագործած հողի սեփականատերը և, բացի պետական հարկերից ու տուրքերից կալվածատի-

քոչը վճարել է բահրա ու կատարել նրա համար զանազան պարտավորություններ։ Ինչպես վկայում է 1661 թ. մի կալվածագիր, Դադի վանքը տարիների առաջ յուրացրել է Ադրենիս, Ուրցափոր, Քավթարանց, Հաճավ, Բորդի, և Գումեր գյուղերի սեփականության իրավունքը ու միայնակ տնօրինել այդ գյուղերից եկամուտների ստացման կարգը։ Հետագայում, ինչպես տեղեկանում ենք կալվածագրից, հիշյալ գյուղերի բնակիչները բողոքում են Գանձասարի առաջնորդ Պետրոս կաթողիկոսին առ այն, թե վանքը իրավասու չէ միայնակ տնօրինելու այդ գյուղերի սեփականության իրավունքը, քանի որ իրենք ունեն համապատասխան վավերացված փաստաթղթեր, որոնք վկայում են, որ հիշյալ բնակավայրերում իրենք ևս ունեն ժառանգական սեփականության իրավունք։ Համոզվելով վավերագրերի իսկությունում, կաթողիկոսը կրկին վերահաստատում է բնակիչների իրավունքները իրենց ժառանգական սեփականությունների վրա[72]։ Ինչպես դժվար չէ նկատել, կալվածագրում խոսք անգամ չկա այդ գյուղերի նկատմամբ Դադի վանքի սեփականության իրավունքի փաստի ժխտման վերաբերյալ, ինչպես դա արված էր ասենք Դիպքյանդ գյուղի սեփականության իրավունքի մասին պատմող կալվածագրում։ Դա նշանակում է, որ հիշյալ գյուղերը հանդիսացել են Դադի վանքի գանձագին կալվածքները, որոնցից նա իբրև սեփականատեր, իրավունք ուներ տասանորդ գանձելու։ Ինչ վերաբերում է այդ գյուղերում վանքի կողմից գյուղացիների իրավունքները սեփականելուն, ապա այն վերաբերում է վերջիններիս ոչ թե հողասեփականության ժառանգական իրավունքին, որից զուրկ էին նրանք մինչև այդ էլ, այլ նրանց հողօգտագործման ժառանգական իրավունքին, որի պաշտպանության համար էլ պայքարում էին։ Ճիշտ է, հողը ավատատիրոջ սեփականությունն էր և նա կարող էր այն ազատորեն օտարել, սակայն այդ հանգամանքը բնավ էլ չէր բացառում նաև այն, որ նույն կերպ կարող էր վարվել համայնիկը իր ունեցած հողակտորի հետ, միայն այն տարբերությամբ, որ եթե առաջին դեպքում օտարվում էր հողի սեփականության իրա-

վունքը, ապա երկրորդ դեպքում օտարվում էր միայն նրա օգտագործման իրավունքը։ Պետք է նշել, որ գյուղացիների կողմից հողերի օտարումը բնավ էլ չէր շոշափում հողասեփականատիրոջ շահերը, քանի որ անկախ այն բանից, թե հողն ով է օգտագործում սահմանված ռենտան անփոփոխ կերպով պետք է ստանար հողատերը։ Ահա թե ինչու վերջինս չէր խոչընդոտում, երբ գյուղացին օտարում էր հողը։ Միաժամանակ, ինչպես վկայում են կալվածագրերը գյուղացիների կողմից օտարվող հողերը մեծ մասամբ գնում են նույն վայրի սեփականատերերը։ Այսպես, 1660 թ. կալվածագրերից մեկում մակվեցի ոմն Դեմուր հայտնում է, որ իր ցանկությամբ իր «փայ մուլքն» երկու թումանով վաճառում է նույն վայրի ռենտան գանձող Մակվի Թադևոս Առաքյալի վանքին[73]։ Մեկ այլ կալվածագրից տեղեկանում ենք, որ 1682 թ. ոմն Սուքիաս իր վեց սոմարի տեղ արտը վաճառում է իրենց գյուղի մուլքադար Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի վանքին[74]։ Գնելով համայնքի կամ նրա առանձին անդամների օգտագործման տակ գտնվող հողը, ավատատերը այդ հողի նկատմամբ տիրապետման ու տնօրինման իրավունքից զատ ձեռք է բերում և օգտագործման իրավունք։ «Ջամբռ»-ի ուսումնասիրությունից պարզվում է, որ նման իրավունք Վաղարշապատ գյուղի վրա ուներ էջմիածնի վանքը։ Եվ պատահական չէ, որ Սիմեոն Երևանցին այդ գյուղի անունը հիշատակելիս հաճախ այն անվանում է «ի գեօղս մերոյ», «ի կից գեօղս մեր», «ի գեօղիս մերում» այն դեպքում, երբ նման տերմիններ չի օգտագործում վանքապատկան մյուս գյուղերի վերաբերյալ[75]։ Իզուր չի շեշտում Սիմեոն Երևանցին, թե Վաղարշապատի բնակիչները «...ոչ կարեն սերմանել ինչ առանց հրամանի մերոյ, բայց և յայլ արտորայս գեղջս մերոյ՝ որք են գեօղականցն, մեք կարեմք սերմանել ըստ պահանջման ժամանակին եթէ կամիցիք։ Քանզի Սրբոյ Աթոռոյս է գեօղս այս բոլոր սահմանօքն իւրովք»[76]։ Վաղարշապատ գյուղի նկատմամբ էջմիածնի վանքն ուներ նաև մեկ այլ արտոնություն։ Եթե մնացած գյուղերում ավատատերերը հաճախ չէին արգելում

գյուղացիների կողմից անշարժ ունեցվածքի առուծախի գործարքները և կամ էլ դրա համար պարտադիր չէր ստանալ սեփականատիրոջ համաձայնությունը (երբ գործարքը կատարվում էր նույն գյուղի բնակիչների միջև), ապա Վաղարշապատում գյուղացին իրավասու չէր առանց վանքի թույլտվության անշարժ կալվածք օտարել։ Ահա թե ինչ է հաղորդում այդ մասին Սիմեոն Երևանցին. «Ի գեօղս Կակոս անուն մարդ մի զայգին իւր ծախեալ էր գեօղիս տառուղայ և խանի նօքար Սարու Մահմատ կոչեցեալ տաճկին՝ տաճկերէն հաստատուն ղաբալային՝ ի մէնջ ծածուկ, յետոյ ի գիտելն մեր, ճնշելով զծախողն և զառնողն ևս, յետս առաք զայգին ի տաճկէն և դարձուցաք ի Կակոսն և տաճիկն ի գեօղէս և ի տառուղայութենէ հանեալ վարեցաք»[77]։ Այն հանգամանքը, որ վանքը կարողանում է գյուղից վտարել խանական ատրճանավորին, իսկ իր գյուղացուն, որը փաստորեն հրաժարվել էր ճանաչել վանքի սեփականատիրական իրավունքները թողնում է տեղում, ապացույց է այն բանի, որ վերջինս չուներ գյուղացու անձի նկատմամբ որևէ իրավունք։ Հետևապես, գյուղացին եղել է անձնապես ազատ և նրա ու հողատիրոջ հարաբերությունները որոշվել են սոսկ հարկատվությամբ։

Ֆեոդալիզմին հատուկ գյուղացու նկատմամբ կիրառվող արտատնտեսական հարկադրանքը Արևելյան Հայաստանում հանդես էր գալիս ոչ թե նրան հողին ամրացնելու ճանապարհով, այլ համայնքին ամրացնելու միջոցով։ Այսպես, օրինակ, 1710 թ. Նախիջևանի խանության Դարաշամբ գյուղի համայնքը դիմում է շահ Սուլթան Հուսեյնին վճիռ կայացնելու խնդրանքով՝ Դարաշամբից Աստապատ տեղափոխված 15 ընտանիքների հարցում, քանի որ վերջնականապես չէր լուծված այդ ընտանիքներից հարկերի գանձման կարգը[78]։ Բանն այն էր, որ թեև տեղափոխված ընտանիքները ունեին նոր բնակատեղ, հարկերը շարունակում էին վճարել հին բնակավայրի համայնքի միջոցով։ Իսկ ըստ մուսուլմանական օրենքի, բնակության վայրը փոխած և մինչև 12 տարի այնտեղ ապրած մուսուլման գյուղացիներին վերա-

դարձնում էին իրենց նախկին բնակավայրը, երբ հարկերի գանձման ժամանակ տարաձայնություն էր առաջանում հին և նոր բնակավայրերի համայնքների միջև[79]։ Այն հանգամանքը, որ շահի հատուկ կարգադրությամբ հիշյալ 15 ընտանիքները պետք է վերադարձվեին իրենց նախկին բնակատեղին, վկայում է, որ այդ օրենքը կիրառվում էր նաև հայ գյուղացիության նկատմամբ։ Այս առումով հատկանշական է նաև Մուղնի գյուղի օրինակը։ Ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին, այդ գյուղի սեփականության ամբողջական իրավունքը Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը նվիրել էր տեղի ս. Գևորգ վանքին։ Որոշ ժամանակ անց, գյուղի բնակչությունը վճարվող տասանորդի չափերի կամայական բարձրացման ու պետական հարկերի ծանրության պատճառով մոտ քսան տարի թողնում է իր բնակության սահմանները։ Միայն կաթողիկոսի միջամտությունից հետո, որոշ զիջումներ ստանալով, գյուղի բնակչությունը կրկին վերադառնում է[80]։ Ինչպես դժվար չէ նկատել, բերված օրինակներում բողոքարկումները վերաբերել են ոչ թե գյուղացիների այս կամ այն կալվածատիրոջը պատկանելուն, այլ գանձվող ռենտային։ Իսկ դա նշանակում է, որ հայ գյուղացիության ավատական կախման բնութագրական կողմն այն էր, որ հողատերը երբեք չէր խառնվում նրանց արտադրական պրոցեսին և առանձին նրանց հետ փոխհարաբերության մեջ չէր մտնում։ Նա իր բոլոր պահանջները ներկայացնում էր համայնքին։ Նույն ձևով էլ գյուղացին ոչ մի հարաբերություն չէր ունենում հողատիրոջ հետ։ Նա ճանաչում էր իր համայնքը և իր պարտականությունները կատարում էր նրա ղեկավարությամբ։ Ավատատերը միջամտում էր գյուղացիների գործերին այն դեպքում միայն, երբ վերջիններս ժամանակին չէին կատարում իրենց պարտականությունները, կամ խախտում էին ընդունված կարգ ու կանոնը։

Ինչպես նշել ենք, հողային ռենտան ուներ տրոհման հատկություն, այսինքն կարող էր բաժանվել և առանձին մասերով կենտրոնանալ տարբեր անձնավորությունների

ձեռքում։ Իսկ դա նշանակում է, որ տվյալ համայնքը վճարվող ռենտայի առումով կունենար մեկից ավելի սեփականատեր, որը և հենց ճորտությունը բացառող կարևոր պայմաններից մեկն էր։ Այսպես, 1655 թ. կազմվում է վաճառման ակտ ու հաստատվում շարիաթի գլխավոր վարչության կողմից առ այն, որ Կարբիի մահալի Բաթրինջ գյուղի մուլքադար ոմն Բեյրութ բեկ գյուղի սեփականության ամբողջական իրավունքի մեկ մասը 1 թուման 600 դինարով վաճառել է էջմիածնի վանքին[81]։ Կամ, Ամիրի գյուղի վաճառքի օրինակը, երբ գյուղի կալվածատեր երևանցի խոջա Սեթի որդի քալանթար Սահակը 1660 թ. էջմիածնի վանքին է վաճառում գյուղի սեփականության ամբողջական իրավունքի 4/5 մասը, շարունակելով իր ձեռքում պահել մնացած 1/5-ը[82]։ Նման դեպքում ռենտան վճարելիս գյուղի բնակչությունը չէր բաժանվում առանձին խմբերի, որոնցից յուրաքանչյուրը պետք է վճարեր առանձին կալվածատիրոջ, այլ բոլորը միասին վճարում էին երկու մուլքադարներին էլ ռենտայի նրանց հասանելիք բաժինը։

Մասնավոր սեփականատիրոջ՝ գյուղացու անձի նկատմամբ իշխանություն ունենալու դեմ վկայում է նաև այն փաստը, որ մուլքադարական գյուղերում գյուղացիները միաժամանակ կախման մեջ էին գտնվում և մուլքադարից և կենտրոնական իշխանության տեղական ներկայացուցիչներից։ Գյուղացիները պարտավոր էին իրենց ստեղծած հավելյալ արժեքի մի մասը տրամադրելու հողատիրոջը, իսկ մյուսը պետական իշխանության ներկայացուցչին։ Օրինակ, ինչպես տեղեկանում ենք 1682 թ. մի վավերագրից, Սիսիանի գավառի Դաստակերտ գյուղը իր մուլքադարին տասանորդ վճարելուց բացի, կենտրոնական իշխանության ներկայացուցիչ Բորչալուի հաքիմին պետք է բահրա վճարեր 54909 դինար ընդհանուր արժողությամբ գումար[83]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի աղբյուրները, բացի հողային հարկերից, հիշատակում են նաև հարկադիր աշխատանքի ու կռային պարտավորությունների առկայություն Արևելյան Վրաստանի վալիության մեջ մտնող Արևելյան

Հայաստանի հյուսիսային շրջաններում (Գուգարք)։ Իսկ դա նշանակում է, որ Արևելյան Հայաստանը իր տնտեսական ու հասարակական հարաբերությունների զարգացման տեսակետից միօրինակ չէր։ Այս առումով անգնահատելի արժեք ունի «Քյոթուկ Սանահնի վանուց» անունը կրող ձեռագիրը, որում կան արժեքավոր շատ վկայություններ ճորտերի, նրանց տնտեսության, հողատերերի հետ ունեցած նրանց փոխհարաբերության մասին և այլն։ Ի դեպ, այստեղ ևս գերակշռողը ոչ այնքան աշխարհիկ, որքան վանական կալվածատիրական տնտեսությունն էր։ Նրանց կալվածքների վրա ապրող գյուղացիներն էլ դառնում են կալվածատիրական տնտեսության զարգացման անհրաժեշտ պայմանը՝ որպես աշխատող ուժի, իսկ վերջիններիս կախումը հասցվում է ճորտության աստիճանի։ Վ. Ի. Լենինը բնորոշելով կոռային տնտեսության բնորոշ գծերը գրել է, որ նման տնտեսության համար անհրաժեշտ է, որ անմիջական արտադրողն արտադրության միջոցներ և հող ստացած լինի[84]։ Ձեռագրի էջերից մեկում կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին հայտնում է, որ, երբ 1664 թ. «...վասն ախտանալոյ վանորէից եկաք Սանահնոյ վանքն, Արղութեցոց ջամիաթն ամենեքեան իւրեանց բերանով իլրար եկին ինձ մատ, թէ մեր յօժար կամօք Ոռնակա շինականքն իւրեանց հողովն, ջրովն ծախեցինք Սարգիս եպիսկոպոսին»[85]։ Մեկ այլ էջում կարդում ենք. «Կամաւն ամենակալին. ես պարոն Զալ բեկի որդի Գասպարըս. իմ որդի Գօգիս. մեր ըղզովս մեր Ոռնակա շինական Մխիթարն, Ակոբն, Խէչիկն ծախեցինք վերայ պարոն Սարգիս տէրին, իրանց տանովն, իրանց հողովն, իրանց ջրովն... պարոն տէրն գնեց վախմ արաւ սուրբ Աստուածածնին»[86]։ Գյուղացիների սեփական տնտեսությունն՝ իրենց հողաբաժնի վրա, կալվածատիրական տնտեսության հիմնական պայմանն էր, որի նպատակը գյուղացուն ոչ թե ապրուստի միջոցով ապահովելն էր, այլ կալվածատիրոջը՝ աշխատող ձեռքով։

Ճորտ հասկացության հիմնական հատկանիշներից մեկն էլ այն էր, որ գյուղացին տիրոջ համար պետք է աշխատա-

վճար ռենտա կատարի, այսինքն, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, նրա նկատմամբ պետք է կիրառվի արտատնտեսական հարկադրանք[87]: Ճիշտ է, պարտադիր աշխատավճարումների կամ կոռային աշխատանքի չափերի մասին ձեռագրում ուղղակի վկայություններ չկան, սակայն նրանում կան անուղղակի տեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս հավաստելու Սանահնի վանական տնտեսությունում գյուղացիների նկատմամբ կիրառվող արտատնտեսական հարկադրանքի մասին: Այսպես, ձեռագրի էջերից մեկը տեղեկացնում է, որ, երբ առանձին անձնավորությունների ու վանքի միաբանության միջև կատարվում է ճորտերի վաճառք, առաջինները հավաստիացնում են, որ վանքին վաճառված Ռոնակ գյուղի ճորտերի նկատմամբ իրենք այլևս «...ոչ խարճի, ոչ կոռի բան չունինք»[88]: Ուրեմն, Սանահնի վանքն էր արդեն իրավասու վաճառված ճորտերից գանձելու թե հողային հարկը և թե աշխատավճարային ռենտան:

Ավատատիրոջից գյուղացու անձնապես կախյալ և իրավազուրկ լինելու հատկանիշներից մեկն էլ այն էր, որ տերն իրավունք է ունեցել նրան վաճառելու կամ նվիրելու ինչպես հողով, այնպես էլ առանց հողի: Այդ մասին ձեռագրում կա հետևյալ վկայությունը. «...ես Սարգիս եպիսկոպոս գնեցի Սուլխանն իր Բ(2) որդովն մէկ դարովն»[89]: Տվյալ դեպքում Սուլխանն ու իր որդիները վաճառվում են առանց հողի, որպես առանձին օբյեկտ, որպես բանող ձեռք, կամ ինչպես ձեռագրում է ասվում վանքին «ղուլուղ» անողներ: Բերված վկայությունը ապացույց է նաև այն բանի, որ տիրոջ իրավունքները տարածվում էին միաժամանակ ճորտի ընտանիքի մնացած անդամների վրա ևս: Եվ այդ իրավունքը օրինականացված էր:

Հետևապես, գյուղացին անազատ էր բառի լայն իմաստով: Ընդ որում այդ անազատությունը դառնում էր ժառանգական: Հողին ամրացված գյուղացիները հող չէին ունեցել, բայց ունեցել են իրենց պարզունակ գյուղատնտեսական ինվենտարը, բանող անասունները, իրենց սեփական խրճիթները, առանց որի հնարավոր չէ պատկերացնել գյու-

ղացու կողմից կալվածատիրոջը զանազան վճարումներ կատարելը:

Հարկ է ավելացնել, որ Ի. Պետրուշևսկին հավանաբար նկատի ունենալով Գուգարքում ճորտության առկայությունը, փորձում է այն ընդհանրացնել ողջ երկրի մասշտաբով: Հենց այդ ձգտումով էլ նա սխալմամբ վկայակոչում է Առաքել Դավրիժեցուն: Պատմագիրը նկարագրելով 1618 թ. շահ Աբաս I կողմից Երևանի ու Գանձակի խանություններից հայ ազգաբնակչության բռնագաղթի ևս մի պատկեր հայտնում է, թե շահի կարգադրությամբ գաղթեցման էր ենթակա միայն եկվոր բնակչությունը[90]: Այստեղից էլ Ի. Պետրուշևսկու հետևությունը. տեղաբնիկները գաղթեցման ենթակա չէին, քանի որ ամրացված էին հողին[91]: Անդրադառնալով Առաքել Դավրիժեցու այն վկայությանը, թե գաղթեցման էին ենթակա միայն եկվորները, պետք է ասել հետևյալը. շահ Աբաս I 1604—1605 թթ. կազմակերպած Արևելյան Հայաստանի բնակչության զանգվածային բռնագաղթը տնտեսական հեռուն գնացող նպատակներից բացի հետապնդում էր նաև ստրատեգիական նպատակներ՝ ամայի տարածություններ ստեղծելով արգելել դեպի երկրի խորքը թուրքական ուժերի ներթափանցմանը: Սակայն Իրանի տիրակալը, որ երբեք էլ մտադիր չէր թուրքերին զիջելու եկամտաբեր Արևելյան Հայաստանը, շուտով համոզվեց, որ անհրաժեշտ է երկրում բնակչության հիմնական մասը կազմող հայ ազգաբնակչության մեջ կայուն հենարան ստեղծել, միաժամանակ տալով նրան որոշ արտոնություններ: Այնուհետև հետևեցին Ամիրգունա խանի արշավանքները Արևմտյան Հայաստան, որի տարբեր շրջաններից հազարավոր հայ ընտանիքներ բռնի ուժով տեղափոխվեցին Արևելյան Հայաստան: 1618 թ. բռնագաղթը հենց վերաբերում է Արևմտյան Հայաստանից տեղահանվածներին, իբրև ոչ տեղաբնիկների, բացառությամբ այն ընտանիքների, ովքեր արդեն ստեղծել էին իրենց տնտեսությունները: Հետևապես, Ի. Պետրուշևսկու փաստարկումը նույնիսկ հեռավոր ապացույց չի կարող ծառայել Արևելյան Հայաստանում գյուղացիության հողին ամրացված լինելու

մասին։ Քննարկված փաստերը հավաստում են, որ այստեղ ամբողջությամբ վերցրած գյուղացիության ճորտական կախվածություն չի եղել։ Ու թեև գյուղացին կապված էր այն պարտավորությունների հետ, որ պետք է կատարեր հողատիրոջ ու պետության հանդեպ, այնուամենայնիվ կալվածատերը անմիջական իշխանություն չուներ գյուղացու անձի վրա, ուստի և չէր կարող հարկադրել իրեն համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ուներ և սեփական տնտեսություն էր վարում։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՃՅՈՒՂԵՐԸ

### 1. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

*Թուրք-իրանական ավերիչ պատերազմները, որոնք ուղեկցվում էին հայկական գյուղերի ու քաղաքների ավերմամբ, բնակչության կոտորածով ու գերեվարմամբ ուղղակի կերպով ներգործել էին տնտեսության վրա։ «Հողագործք և երկրագործք որք իւրաքանչիւր տեղիս գոյին, փախուցեալք ի բերդս և ի դղեակս ամրանային և ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կուտ բարձաւ ամենեւին»,—ցավով հայտնում է Առաքել Դավրիժեցին[1]։ Եթե նկատի ունենանք պարբերաբար կրկնվող բնական աղետներն էլ, ինչպես օրինակ, երաշտը, ցրտահարությունը, կարկտահարությունը, մորեխը, որոնց դեմ գյուղացին անզոր էր պայքարել, պարզ կդառնա, որ գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր չափի պակասելը անխուսափելի էր։*

*1639 թ. հաշտության պայմանագրի կնքումից հետո, երբ հաստատվեց համեմատաբար երկարատև խաղաղության մի ժամանակաշրջան, կրկին նկատելի դարձան տնտեսական կյանքի աշխուժացման երևույթներ։ Ընդ որում, աշխուժացումը վերաբերում էր տնտեսության գրեթե բոլոր ճյուղերին, գյուղատնտեսությանը, արհեստներին և առևտրին։*

*Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքում վճռորոշ դերը պատկանել է երկ-*

րագործությանը, որը հանդիսացել է գյուղատնտեսական արտադրության գլխավոր ճյուղը[2]:

### ա) Հացահատիկային և տեխնիկական կուլտուրաներ

Աղբյուրներում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի Արևելյան Հայաստանի երկրագործության առանձին ճյուղերի, հատկապես այգեգործության ու խաղողագործության վերաբերյալ թեև որոշ տեղեկություններ պահպանվել են, սակայն հացահատիկային կուլտուրաների մշակմանը, նրանց տեսակներին, բերքատվությանը առնչվող վկայությունները համեմատաբար քիչ են: Այդուհանդերձ ցորենի, գարու, հաճարի, կորեկի, տարեկանի ու բրնձի մասին մատենագրական երկերում, ուղեգրություններում, ժամանակագրություններում ու հիշատակարաններում պահպանված առանձին տվյալներ հիմք են տալիս եզրակացնել, որ այդ կուլտուրաները տարածված էին:

Չնայած հացահատիկային կուլտուրաների մշակությամբ առանց բացառության զբաղվել են ողջ Արևելյան Հայաստանում, սակայն, որոշ շրջաններ (Գեղարքունիք, Դարաչիչագ, Շորագյալ, Սյունիք, Նախիջևանի, Մակվի և Ղարաբաղի խանությունների առանձին շրջաններ) իրենց նպաստավոր բնակլիմայական պայմանների շնորհիվ ձեռք էին բերել առանձնահատուկ նշանակություն: Առաքել Դավրիժեցին, նկարագրելով ջալալի ելուզակների ավարառությունները Արևելյան Հայաստանում, նշում է, թե նրանց հատկապես հետաքրքրում էր Գեղարքունիքի շրջանը, քանզի, ինչպես գրում է պատմիչը «...գիտէին թէ անդ են համբարք ցորենոյ և գարւոյ»[3]: Շորագյալի (Շիրակի սարահարթ) մասին Զաքարիա Քանաքեռցին հաղորդում է հետևյալ մանրամասնությունը. «Այր մի բարեպաշտ Գալուստ անուն՝ ի գաւառէն Ապարանայ ի գեղջէն Վարդենուց ասէ. ես ընդ Գրիգոր վարդապետին՝ որ էր առաջնորդ Յոհաննու վանից (իմա՝ Հովհաննավանք—Հ. Թ.), ի Շիրակայ բերեալ եմք զպտղին, զորբադրամն, ղիւղն,

ղպանիրն, ցորեան և զգարին և զամենայն համն վանիցն»[4]։ XVII դարի թուրք պատմիչ Էվլիա Չելեբիի վկայությամբ հացահատիկային կուլտուրաների, մասնավորապես գարու հարուստ բերք էր լինում Նախիջևանի խանությունում, որտեղ, պատմիչի հավաստմամբ, այն «շատ առատ է և ուժեղ»[5]։ Նախիջևանի խանության տարածքում ցորենի և գարու առատության մասին է վկայում նաև Էջմիածնի վանքի ելից-մտից մատյաններից քաղված հետևյալ վկայությունը. «Թուական ՌՄՁ (1757) մարտ ամիս։ Եառւ ես մեր Յօհան վարդապետին տասն թուման ԱԾ (100) դինար փող, որ գնաց ի Նախչևան և գնեց ԳԾԽ (340) Նախիջևանայ լիտր (XVII—XVIII դդ. Թավրիզի 1 լիտրը 3 կգ էր, Մարանդինը՝ 6, Նախիջևանինը՝ 9) ցորեն և գարի, զոր բերել Յօհան վարդապետն և մեր ամբարն հասոյց»[6]։

Հատկանշական է, որ Մակվի խանությունից հաց է առաքվել Արևելյան Հայաստանի՝ երաշտով տառապող այլ շրջաններ։ «Թէ ժամանակ մի եղև սղութիւն հացի, յերկիրն Մակուայ ցորեան առատ է»,—հայտնում է 1636 թ. Մակվից Կոտայքի գավառի Գյամրեզ գյուղում բնակություն հաստատած ոմն Կիրակոս»[7]։

Սյունիքի մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում 1692 թ. Երեմիա վարդապետի կազմած հարկացուցակը, որտեղ մանրամասն խոսվում է «հոլավար» կոչված տուրքերի մասին, որ վանական հողերն օգտագործող գյուղացիները պարտավոր էին վճարել Տաթևի վանքին իբրև հողօգտագործման վարձ։ Հարկացուցակի համաձայն Տաթև գյուղը վճարում էր 24 բեռ՝ ցորեն, Աղանցը՝ 9 բեռ 1 մարղան, Սվարին՝ 15 բեռ 3 մարղան, Տանձատափը՝ 6 բեռ 5 մարղան, Շնհերը՝ 25 բեռ, Հալիձորը՝ 8 բեռ 5 մարղան, Բնունիքը՝ 24 բեռ[8]։

Ղարաբաղի խանությունում միայն Գանձասարի վանքի հողային տարածություններին վերաբերող կալվածագրից տեղեկանում ենք, որ դրանցում մեծ չափերի է հասել ցորենի և գարու մշակությունը[9]։ Իսկ Վարանդայի իշխող մելիք Շահնազար II (մահացել է 1792 թ.) տարեկան եկամտի

մասին ձեռագրի հեղինակը հայտնում է. «Ով կարէ ի չափ և քանակ անցուցանել զեկեալ տարեկան արդիւնս ցորենոյ և գարւոյ, կորեկոյ և այլ ինչ արդիւնս»[10]։

Հասկանալի է, որ ցորենի, իբրև ամենակարևոր սննդամթերքի անհրաժեշտությունը անհամեմատ ավելի մեծ էր։ Երկրի ցածրադիր վայրերում, ուր ամառվա ամիսներին ջրի պակասություն էր նկատվում և այն հաշիվ էր բավականացնում առավել արժեքավոր երկրագործական կուլտուրաների աճեցման համար (տեխնիկական ու բանջարաբոստանային կուլտուրաներ), գարու մշակությունը նպատակահարմար չէր։ Այսպես, օրինակ, Վեդիի գավառում գարի մշակել են միայն Սադարակ գյուղում, իսկ Շարուր-Դարալագյազի գավառում՝ Շահրիար, Մախտա, Ջոմախտուր և Կարբուջ գյուղերում[11]։

Տարբեր շրջաններում, նայած տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին, մշակվել է ցորենի երեք տեսակ՝ դեղին, կարմիր և սպիտակ։ Մեծ մասամբ մշակվում էր կոշտ, երկար ու անկյունաձև հատիկներով դեղին ցորենը։ Լինելով միայն աշնանացան, այն տարածված էր Լոռիում, Սյունիքում և Նախիջևանի ու Ղարաբաղի խանությունների բարձրադիր վայրերում։ Կարմիր ցորենը, որը նույնպես կոշտ էր և լինում էր աշնանացան, դեղին ցորենից տարբերվում էր հիմնականում իր փոքր չափերով։ Կարմիր ցորենը մեծ տարածում ուներ Շիրակում, Գեղարքունիքում, Կարբիի ու Ապարանի գավառներում, ինչպես նաև Մակվի խանությունում։ Ցորենի սպիտակ, քիչ դեղնավուն տեսակը, որը գերազանցապես մշակվել է ոռոգելի հողատարածություններում ու ցածրադիր վայրերում (Արարատյան դաշտավայր, Նախիջևանի ու Ղարաբաղի խանությունների հովտային շրջաններ), փափուկ էր։ Այն լինում էր միայն գարնանացան, որի համար էլ կոչվում էր «Գարնանի»[12]։ Մի շարք տնտեսություններում կատարվում էր և աշնանացան և գարնանացան։ Այսպես, էջմիածնի վանքի կալվածատիրական տնտեսությունում 1752 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ցորեն և գարի ցանվել է 630 սոմար հողատարածություններում, իսկ մարտ-ապրիլ ամիսներին՝ 345 սո-

մար[13]։ Ըստ 1728 թ. Վաղարշապատ գյուղի թուրքական հարկացուցակի, գյուղի չորս թաղերի բնակիչները պարտավոր էին որպես բահրա վճարել. ցորեն՝ 2000 քիլա (ծանրության չափ=27—33 կգ), գարի՝ 1800 քիլա[14]։ Համաձայն Ի. Շոպենի տվյալների, իրանական տիրապետության վերջերին արդեն էջմիածնի վանքի հողատարածությունների համախառն բերքը հիշյալ կուլտուրաների գծով կազմել է. ցորեն՝ 6000 փութ, գարի՝ 1800 փութ[15]։

Ինչպես նշել ենք, ցորենի և գարու հետ միասին որոշ տարածում է ունեցել նաև հաճարի, կորեկի և տարեկանի մշակությունը։ Գեղարքունիքում, Դարաչիչագում, Թալինում, Սյունիքում, համեմատաբար մեծ չափերով էջմիածնի վանական հողատարածություններում տարածված էր հաճարի կարմիր և սպիտակ տեսակների գարնանացան և աշնանացան մշակությունը[16]։ Ըստ Տաթևի վանքի եկամտացանկերի, Աղանց գյուղի բնակիչները պարտավոր էին 20 մարդան կորեկ վճարել վանքին[17]։ Հիշատակարաններում ու ժամանակագրություններում հանդիպում ենք «կորեկ հաց», «Կլկըլ (խոշոր) կորեկ» արտահայտությունների, որոնք ևս վկայում են հացահատիկային հիշյալ կուլտուրայի մշակության մասին[18]։ Ադամ Օլեարիուսի վկայությամբ իրանական տիրապետության սահմաններում տարեկանը հիմնականում մշակվել է Արևելյան Հայաստանում, իսկ բուն Իրանում այն դիտվել է իբրև մոլախոտ[19]։ Տարեկանը մշակվել է լեռնային շրջաններում, քանի որ ցրտադիմացկուն էր ու վաղահաս։ Ցանքը կատարվել է օգոստոսի կեսերից։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում հողասակավության ու ջրի պակասության պայմաններում հնարավոր չէր կիրառել դաշտավարության եռդաշտյան սիստեմը։ Հիմնական սիստեմը սերմնափոխությունն էր, երբ միևնույն հողակտորի վրա ցանքս է կատարվել երկու անգամ, ընդ որում, հացաբույսերի ցանքսերին փոխարինել են բանջարաբոստանային կամ կերային կուլտուրաները։ Այդ մասին ուղղակի վկայություն ունի Ժ. Շարդենը. «...այստեղ հողը երբեք հանգիստ չի մնում,—գրում է

նա,—երբ հավաքվում է մի բերք, իսկույն նրա փոխարեն ցանվում է մի այլ կուլտուրա»[20]։

Դաշտավարության մեջ կիրառվել է պարարտացումը։ Պատահական չէ, որ ունևոր տնտեսություններում օգտագործվել է պարարտանյութ տեղափոխողի վարձու աշխատանքը. «Կու կրող ԻԳ (23) մշակաց վարձն ետու ԱՌԳ (1003) շահի գիտութեամբ ժամօրհնողին»—կարդում ենք էջմիածնի վանքի ելք ու մուտքի մատյաններից մեկում[21]։ Որպես պարարտանյութ օգտագործվել է խոշոր և մանր եղջերավոր անասունների աղբը։ Բարձր է գնահատվել աղավնաաղբը ու հատկապես մարդկային արտաթորությունը, որի մասին շեշտում է Ժ. Շարդենը[22]։

Հողի բերքատվության բարձրացման կարևոր պայմաններից մեկն էլ մոլախոտերից մաքրումն էր. «Ջայիր (մոլախոտ) հավաքող ԻԵ (25) մշակաց վարձն ետու Ե(5)-ին կէս շահով և Ի(20)-ին ԱԱ(11) փողով տվաք չորս հարիւր ԾԵ(55) դիան ձեռամբ Ղունկիանոս վարդապետին»,—կարդում ենք էջմիածնի 1755 թ. ելից-մտից մատյանում[23]։ Իսկ 1758 թ. մատյանից տեղեկանում ենք քարերից հողատարածությունների մաքրման, ինչպես նաև կոշտ հողակտորների փշրման մասին. «Հող քանդող և մանօղ ԼԲ(32) մշակաց վարձն ետու Գ(3) պիստով (դրամի միավոր=20 դինար) վերակացու Ակոբ վարդապետի ձեռամբ ԱՌԴ (1004) ապասի Բ(2) շահի»[24]։

Հողամշակության համար կարևոր նշանակություն ուներ նաև գյուղատնտեսական գործիքների կատարելագործումը, սակայն բնատնտեսության պայմաններում այն չափազանց դանդաղ էր ընթանում։ Դաշտավարության մեջ կիրառվող ամենակարևոր գործիքները արորն ու գութանն էին։ Արորը վարում էր մակերեսային, ուստի և այն հիմնականում օգտագործում էին գարնանային ցանքի ժամանակ։ Արորի արտադրողականությունը օրական չէր անցնում 0,3 հեկտարից։ Արորավարի ժամանակ զբաղված էին լինում 1—6 մարդ, իսկ որպես քաշող ուժ պահանջվում էր 1—2 զույգ եզ։ Զույգ եզը ժամանակի աղբյուրներում կոչվել է «լուծ».

«Խ(40) լուծ սամի (երկաթից պատրաստված ձողեր, որոնց արանքը մտնում էին եզների գլուխները) առինք Է(7) անասուն վարուց ձեռամբ վաքիլին, գինն ետու Թ(9) շահի»[25]։ Աղբյուրներում «լուծը» հաճախ կոչվել է նաև «չութ». «Ջութ վարօղ մշակաց բաշխիչ ետու երկու հարիւր դիան»[26]։ Հաճախ «լուծը» գործածվել է իբրև հողի չափի միավոր։ Այս իմաստով այն նշանակում էր գյուղատնտեսական սեզոնի մեկ օրվա ընթացքում մեկ զույգ եզով մշակվող հողային տարածությունը. «Եկեղեցւոյս տուինք Ա(1) լուծ հող ի Տաշիս, Ա լուծ ի Դող, Ա ի Մոխրենիս»,—կարդում ենք վիմական արձանագրություններից մեկում[27]։

Աշնանային ցանքի դեպքում գործածվել է թեթև ու ծանր գութանը։ Թեթև գութանը վարել է երկաթե խոփ ունեցող արորից ավելի խորը, որպես քաշող ուժ օգտագործվել են 3—4 զույգ եզներ, որոնց աշխատեցրել են 6—8 մարդ։ Օրվա ընթացքում թեթև գութանը վարել է մոտ 0,75 հեկտար հող։ Ծանր գութանը, որն աշխատել է անիվի օգնությամբ, ունեցել է ձևիչ, որի շնորհիվ հողը ճեղքվել և շուռ է տրըվել։ Այն հիմնականում գործածել են նախալեռնային շըրջաններում, ինչպես նաև այն վայրերում, որտեղ հողը կոշտ էր։ Այդ մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ադամ Օլեարիուսը. «Որպեսզի հողը վարեն,—գրում է նա,—պարսիկները (հեղինակը պարսիկներ է անվանում Սեֆյան Իրանին ենթակա մյուս երկրների ժողովուրդներին ևս—Հ. Թ.) գութանը գործ են ածում այնպիսի տեղերում, որտեղ հողը խիտ է և կոշտ, ինչպես օրինակ Հայաստանում։ Այստեղ այդ գութաններն այնքան մեծ են, որ նրանց աշխատեցնելու համար պահանջվում է չորս և ավելի մարդ և լծում են 12-ից ավելի եզներ ու գոմեշներ։ Ակոսները արվում են մեկ ֆուտ (քայլ) խորությամբ և երկու ֆուտ լայնությամբ»[28]։ Պետք է նշել, որ ծանր գութանը տնտեսություններում լայն կիրառություն չէր գտնում, քանի որ այն մատչելի չէր գյուղացիական լայն մասսաներին։ Բացի այդ, պակաս էր նաև բանող անասունների գլխաքանակը։ Այս իմաստով հատկանշական է կաթողիկոս Աբրահամ Կրետացու և Երևան այցելած Թահմազկուլի խանի (Նադիր շահ) հետևյալ հարցա-

գրույցը. «Վերջապես եհարց խանն վասն վարի և ցանի։ Իւ խսկոյն բողոք բարձի, թէ՝ ոչ գոյ ըստ բաւականի։ Ննաև ոչ գտանին եզինք որ վարեն, բայց քո տօլվաթեն լինի, թէ գարնան Պայաղիտու և Ղարսայ եզինք ճարեն փողով կամ պարտքով և վարուցան անեն, որովհետև ջրելով է գարնանավարն, այլ լաւ պիտի լինի...»[29]։ Գութանով վարը նույնպես ունեցել է իր տարածական չափերը, որը աղբյուրներում հանդիպող «օրաւար հող» արտահայտությունն է[30]։ «Օրաւար հողը» մեկ գութանի գյուղատնտեսական աշխատանքային օրվա կատարած ձերկն է, որն իր տարածական չափերով համընկնում է արորի երեք օրվա կատարածին։ Աղբյուրներում գործածվել է նաև «վեցկի» տերմինը, որը վեց եզներով լծված գութանով վարն է։ «Ա(1) օր վեցկուն եզնարածքն վարեն»,—ասվում է Տաթևի վանքապատկան Աղանց գյուղի հարկացուցակում[31]։

Դաշտավարության մեջ «հերկոցից» անմիջապես հետո սկսվում էր «ցանոցը», որի ժամանակ այն արտերում, որտեղ արորը հնարավորություն չէր ունեցել ավելի խորը վարելու՝ հատկապես խամ և պինդ հողերում, միաժամանակ կատարել են հողերի փխրեցման աշխատանքներ։ Այդ աշխատանքը կատարվում էր փոցխով, որին, քաշելու համար, լծել են 2—3 զույգ եզներ. «Փոցխ քշող Ժ(10) մշակաց վարձն ետու Գ(3) պիստով ձեռամբ տէր Մելիքսէթին»,— կարդում ենք աղբյուրում[32]։ Նույն աշխատանքի մասին տեղեկություններ է հաղորդում և Ժ. Շարդենը. «Երբ ակոսները հանվում էին, հողագործները փափկացնում էին հողը կարճ ատամներ ունեցող փայտյա հատուկ տախտակներով, որին լծում էին եզներ կամ գոմեշներ»[33]։

Քիչ թե շատ ունևոր տնտեսություններում ցանքին նախորդում էր սերմերի նախապատրաստումը, այսինքն կատարվում էր սերմերի ընտրություն և տեսակավորում։ Հատկապես ուշադրություն էին դարձնում, որ սերմերը լինեին նույն տարվա բերքից հավաքված, խոշոր և ծանր. «Գ ապասի ետու սերմացու ցորեն խտակող ԻԴ(24) կանանց ամբարտարի ձեռօք»[34]։ Եթե սերմերը նախատեսված էին աշ-

նային ցանքի համար, դրանք ժամանակավորապես պահվում էին պարկերում, իսկ եթե գարնանային՝ պահվում էին հատուկ փորված հորերում. «Ե(5) շահի ետու ներսի ցորնի և գարու հորի վրա բանող Ը(8) մշակաց Է(7) փօղով»[35]։ Հարկ է նշել, որ առաջին դեպքում սերմացուն լավ էր պահպանվում, իսկ երկրորդ դեպքում խոնավությունից կորցնում էր ծլունակությունը։ Ցանելու պրոցեսը կատարվում էր հետևյալ կերպ. ցանողը մարմնի ձախ կողմում կախում էր 15—20 կգ տարողությամբ կաշվե տոպրակ ու համաչափ քայլերով առաջ շարժվելով՝ աջ ձեռքով ցրում էր սերմացուն այն հաշվով, որ հավասարապես թափվեր հողի մակերեսին[36]։

Ցանոցին հաջորդում էր տափանումը, սերմերը հողում ծածկելու համար գործածում էին ցաքան, որը նույնպես դժվար աշխատեցվող գործիք էր և ուներ երկուսից երեք լծասարք. «Տափի լուծ քշող ԻԴ(24) մշակաց վարձն ետու կես շահով Գ(3) ապասի»[37]։ Սովորաբար տափանելուց հետո ոչ բոլոր սերմերն էին ծածկվում հողով և բաց մնացածները կեր էին դառնում թռչուններին, որոնց քշելու համար ունևոր տնտեսություններում հաճախ օգտագործել են երեխաների աշխատանքը. «Ղուշ քշող ԾԵ(55) պստկի վարձն ետու կէս շահով ձեռամբ վէքիլին»[38]։

Տափանելուց հետո սկսվում էին հողի մարկոսման աշխատանքները, երբ ծռված, լայն բերանով երկաթյա բահով վարած տարածություններում ջրելու համար առուներ էին անցկացվում։ Սա նույնպես շատ աշխատատար պրոցես էր և մեծ քանակությամբ աշխատուժ էր պահանջում. «Մարկոսող ՀԶ(76) մշակաց որոց ԼԶ(36)ին Ա(1) շահի Ա փղօվ. ԺԸ(18)ին Ա շահի Բ(2) փղօվ. ԻԲ(22)ին մին շահով վարձ ետու երեք հազար ԹՃՀ(970) դիան»[39]։

Հունձը կամ քաղը կատարվել է հիմնականում մանգաղով։ Գերանդին գործածել են այն դեպքերում, երբ հարկավոր է եղել շտապ ավարտել բերքահավաքը, կամ էլ այն դեպքերում, երբ հասկերը ցածր չէին, իսկ բերքը այնքան էլ հարուստ չէր։ Բերքահավաքի շուտ կամ ուշ կազմակերպումը պայմանավորված էր նաև սերմերի տեսակից, արևի նկատ-

մամբ տեղանքի ունեցած դիրքից, ոռոգման ջրի ջերմաստիճանից և այլ հանգամանքներից։ Օրինակ, Արարատյան դաշտավայրում և Նախիջևանում հունձը սկսվում էր հունիս-հուլիսին, Գեղարքունիքում, Դարաչիչագում, Շարուր-Դարալագյազում՝ հուլիս-օգոստոսին, Ղարաբաղում՝ օգոստոս-սեպտեմբերին և այլն[40]։

Հացահատիկային կուլտուրաների մշակման վերջին պրոցեսը կալսումն էր, որի մանրամասն նկարագիրը գտնում ենք Ժ. Շարդենի մոտ. «Նրանք ցորենը շղթաներով չեն կալսում, ինչպես դա անում ենք մենք, այլ առանձնացնում են հատիկը ցողունից կալատեղում հետևյալ կերպ. նախ ցողունները իրար են կապում խրձերով 30—40 ֆուտ շառավիղով, մեզ նման չվախենալով ոչ գողերից և ոչ էլ քամուց։ Հետո նրանք այդ խրձերը շրջում են գլխիվայր, որոնց վրայից գնում էր կամնասայլը։ Վերջինս ունի երեք ֆուտ երկարություն և երկու ֆուտ լայնություն։ Կամնասայլի վերևի մասը ավելի նեղ է քան ներքևինը և ծառայում է որպես նստելու տեղ բշողի համար։ Ներքևի մասը ունի քառակուսու տեսք, բաղկացած փայտե չորս ձողերից։ Երկու ձողերի արանքում կան իրար մեջ մտած երեք, երբեմն էլ չորս կլորավուն փայտեր, որոնք ծառայում են իբրև առնի և նման են մեր հրուշակագործների գրտնակներին։ Գլանաձև առնիների վրա, մեջ ընդ մեջ հարմարեցված են եռանկյունաձև կտրիչները, որոնք ունեն սղոցի նման սուր ատամներ։ Սրանցից մեկը առնու վրա հարմարեցված է ուրագի ձևով, մյուսը՝ կացնի, որպեսզի տարբեր դիրքերով փռված ծղոտները երկու ուղղությամբ էլ կտրատվեին։ Կամնասայլը ունի փայտե քաշիկ կամ կաշվե ձգափոկ, որին լծում են ամեն տեսակի գրաստներ՝ ձիեր, եզներ, ջորիներ, ավանակներ, միայն առանձին-առանձին։ Կամնասայլի վրա նստեցնում են տղա երեխայի, որը հարկադրում է կենդանիներին վազել արագ վարգով։ Յուրաքանչյուր կենդանի վազում է մոտ 3—4 ժամ, որից հետո նրան փոխում են։ Մոտիկ կանգնած մարդիկ եղաններով հարդը առանձնացնում են հենց կալատեղում, հատիկները, որոնք ավելի ծանր են, մնում են տակին»[41]։

Կալսման աշխատանքների մասին տեղեկություններ է հաղորդում և Զաքարիա Քանաքեռցին։ Նա նկարագրում է, թե ինչպես Գեղարքունիքի մելիք Փարսադանը կալի ժամանակ ումն Մխիթար երեցից պահանջում է նրա եզները, իսկ վերջինս, որ նույնպես կալսում էր իր բերքը, մերժում է։ Մելիքը կատաղում է «...որպես որդեկոտոր արջ և գոյնն սևացաւ որպէս ղածուխ, և զայրացմամբ առաքէ զերեքեան կամնաւոր ծառայս և ասէ, գնացեալ բերջիք զեզինս այնպէս լծեալ կամնասայլիւն և կամնավարաւն՝ և ամենայն որ ինչ ի վերայ նորա է»[42]։

Մի քանի խոսք բրնձի մշակության մասին։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում հացահատիկային համեմատաբար քիչ տարածված կուլտուրաներից էր բրինձը, որը իր մշակության պայմաններով էապես տարբերվում էր արդեն թվարկված հացահատիկային կուլտուրաների մշակությունից։ Բրնձի աճեցման համար հողի նախնական նախապատրաստման եղանակը հետևյալն էր. նախատեսված հողամասը նախ բաժանվում էր տարբեր մեծության քառակուսիների, որոնք շրջափակված էին հողապատնեշներով։ Նախքան ցանքսը, հողամասը առատորեն ջրում էին այն հաշվով, որ հողաթմբերը ջրելուց հետո ամրանան, որից հետո նոր միայն սկսում էին մինչցանքային ռուգումը։ Ցանելուց առաջ սերմերը լցնում էին ջրի մեջ և թողնում 3—6 օր։ Ջրի երես բարձրացած սերմերը իբրև ոչ պիտանի հեռացվում էին։ Ցանքսը կատարվում էր ջրի հոսքին հակառակ, իսկ հոսքը ամենավերջին քառակուսում կտրում էին այն ժամանակ, երբ այնտեղ ջուրը հասնում էր անհրաժեշտ մակարդակի։ Ցանելուց երեք ամիս անց բրինձը ծաղկում էր, իսկ հասունանալ սկսում էր ծաղկումից 5—6 շաբաթ հետո։ Դա մոտավորապես լինում էր օգոստոսի կեսերին և շարունակվում ամբողջ սեպտեմբերը։ Բերքահավաքից մի քանի օր առաջ ջրի հոսքը կտրում էին և սկսվում էր հողերի չորացումը։ Բրինձը քաղում էին մանգաղներով, կապում առանձին խրձերով և դնում հողապատնեշների վրա, ուր 2—3 օր անց դրանք չորանում էին։ Այնուհետև կատա-

րում էին կալսում, որը նույնն էր ինչ հացահատիկային մնացած կուլտուրաներինը։

Բրնձի աճեցման համար հողակլիմայական նպաստավոր պայմաններ կային Արարատյան դաշտավայրում, ուր ոչ միայն տեղումների քանակն էր բարձր, այլև առկա էր արհեստական ոռոգման լայն ցանց։ Էվլիա Չելեբին, նկարագրելով իր ուղևորությունը Երևան, հայտնում է, որ Հրազդան գետի ափով, բրնձի դաշտերի միջով անցնելով հասնում է Խոջա-բաղի գյուղը, որը Երևանի խանի սեփականությունն էր[43]։ Արարատյան դաշտավայրում ունեցած իր հողատարածություններում Էջմիածնի վանական տնտեսությունը մեծ տարածություն էր հատկացրել նաև բրնձի մշակությանը։ Հետաքրքիր է, որ տնտեսությունը բրինձ է վաճառքի հանել. «Թուին ՌՄԷ(1758) բրինձ ծախեցաք ՃԿԳ (163) լիտր ԻԸ(28) փողով գինն եղև Ա(1) թուման ԲՌ(2000) դինար»[44]։ Երևան քաղաքի արտաքին ապրանքաշրջանառության մեջ պատմիչը հիշատակում է նաև բրինձը[45]։ Բրնձի մշակության կարևոր շրջաններից էին նաև Շարուր-Դարալագյազն ու Նախիջևանի խանության հովտային շրջանները[46]։ Վրացական աղբյուրների տեղեկությունների համաձայն բրինձ է աճեցվել նաև Լոռիում[47]։

Տեխնիկական կուլտուրաների մշակությամբ զբաղվել են հիմնականում հարթավայրային շրջանների (քիչ քանակությամբ նաև նախալեռնային) բնակչությունը, որտեղ ոչ միայն բնական տեղումների քանակն էր բարձր, այլև առկա էր արհեստական ոռոգումը։ Օրինակ, Արարատյան դաշտավայրում, միայն Էջմիածնի վանքի կալվածատիրական տնտեսության, ըստ առանձին կուլտուրաների ցանքսերի ընդհանուր տարածությունը ցույց տվող սկզբնաղբյուրներում, որպես գարնանային ցանք թվարկվում են նաև բամբակը, քունջութը և կտավհատը, չնայած չի նշված այդ կուլտուրաների զբաղեցրած տարածության չափը[48]։ Իսկ Էվլիա Չելեբիի վկայությամբ մեծ ճանաչում էին ստացել Նախիջևանի խանության չթե գործվածքները, որոնք պատրաստված էին բամբակից ու վուշից[49]։ Շարդենի վկայությամբ սեֆյան

տիրապետության սահմաններում ամենուրեք երևում էին բամբակի մշակության զբաղեցրած հողատարածություններ[50]։

Տեխնիկական կուլտուրաներից հատկապես արժեքավոր էր բամբակի մշակությունը, որը Արարատյան հարթավայրում ու Նախիջևանի խանությունում Ադամ Օլեարիուսի վկայությամբ մշակել են մեծ քանակությամբ[51]։ Արարատյան դաշտում մեծ չափերով բամբակի մշակության մասին է վկայում նաև այն փաստը, որ Էջմիածնի վանքի տնտեսությունը, ինչպես վկայում են վանքի ելք ու մուտքի մատյաններ, տարիներ շարունակ հում բամբակ է վաճառքի հանել. «Բամբակ ծախեցաք վրացի Դավթին ՃԸ(108) լիտր Ա(1) լիտրն Զ(6) ապասի, գինն եղև ԺԲ(12) թուման»[52], կամ նույն աղբյուրում ասվում է. «Գենճեցոց բամբակ ծախեցաք ՃԲ (102) լիտր ԺԴ (14) խաւիլ և կէս»[53]։ XVII դարի վրաց պատմիչ Վախուշտի Բագրատիոնի վկայությամբ բամբակ է մշակվել նաև Լոռիում[54]։

Հայտնի էին բամբակի մի քանի տեսակներ, որոնք միմյանցից տարբերվում էին թելիկների երկարությամբ, գույնով ու ճկունությամբ։ Միայն Նախիջևանի խանությունում Էվլիա Չելեբին հիշատակում է վեց տեսակի բամբակի անուն. գազի, մոնլայի, ղաֆերանի, լալի, խաս և սպիտակ[55]։

Ըստ երկրի կլիմայական առանձնահատկությունների ու հողի ցանքվածքի կառուցվածքի՝ բամբակի համար նախատեսված հողատարածություններում հերկոցը առանձին շրջաններում կատարվում էր տարբեր ժամանակահատվածներում ու տարբեր քանակությամբ։ Արարատյան հարթավայրում, օրինակ, այն կատարվել է երկու անգամ՝ աշնանը և գարնանը, իսկ Զանգեզուրում, ուր հողը կարծր էր, կատարվել է երեք անգամ՝ մեկ աշնանը և երկուսը գարնանը[56]։ Արարատյան հարթավայրում հերկոցը կատարվել է թեթև անվավոր գութանով, որին լծել են 3—4 զույգ եզ, ինչպես նաև երկու զույգ եզով քաշվող արորով, իսկ Զանգեզուրում հիմնականում գործածվել է 6—8 զույգ եզով քաշվող ծանր գու-

թանով[57]։ Հերկոցից անմիջապես հետո կատարել են փոցխման ու տափանման աշխատանքները. «Բամբակի փոցխի և տափի լուծ քշող ԻԴ(24) մշակաց վարձ եսու Ե(5) փողով Գ(3) ապասի»[58]։

Կախված հողի ջերմաստիճանից բամբակի ցանքը երկրի առանձին շրջաններում կատարվել է տարբեր ժամանակահատվածներում։ Շոպենի վկայությամբ, օրինակ, Արարատյան դաշտավայրում այն կատարվել է ապրիլի սկզբներին, երբ հողի ջերմաստիճանը հասել է մինչև 15 աստիճան տաքության[59]։ Ցանքը ամենուրեք կատարվել է ձեռքով հետևյալ կերպ. աշխատողներից մեկը նախապես պատրաստված շարքերի միջով անցնելով բահով փոքր փոսեր էր բացում, երկրորդը այդ փոսերի մեջ գցում էր սերմը, իսկ երրորդը ծածկում այն փուխր հողով։

Բամբակի մշակության համար որոշիչ դեր էր խաղում հմուտ կազմակերպված ոռոգումը։ Դաշտավայրային շրջաններում, ուր ջուրը առատ էր, ոռոգումը կազմակերպվում էր հետևյալ կերպ. նախ հողամասը բաժանվում էր մի քանի առուների, որոնցից բաց էր թողնվում ջուրը։ Որոշ ժամանակ անց ամբողջ հողամասը ծածկվում էր ջրով և մի քանի ժամ անց նոր միայն ներծծվում։ Սակավաջուր, կարծր հողակառուցվածք ունեցող շրջաններում անում էին միայն բույսի արմատային հատվածը, որը նպաստում էր միաժամանակ ջրի տնտեսմանը։ Ամառվա ընթացքում բամբակենին ջրում էին սովորաբար 5—6 անգամ, առանձին դեպքերում նաև 8։ Ավելի հաճախ այն ջրում էին ծաղկման ու պտղակալման շրջանում։ Պտուղների հասունացման ու բացման շրջանում ջրելու քանակը պակասեցնում էին[60]։

Բամբակենու մշակության կարևոր պայմաններից էին հողօրագներով բների փափկեցման և մոլախոտերի հեռացման աշխատանքները։ Էջմիածնի վանական կալվածատիրական տնտեսությունում օրինակ, հիշյալ աշխատանքների համար ամեն տարի օգտագործվել է մեծ քանակությամբ աշխատուժ. «Բամբակի քաղհանօղ ՀԱ(71) մշակաց վարձն եսու Ա(1) շահով. մէկ թուման ութ հարիւր դիւան» կամ

«Ձ(6) ապասի Գ(3) փող ետու քարաքթի բամբակի սէզ հաւաքող ԾԱ(51) տղայոց Գ փողով»,—տեղեկացնում են վանքի մատյանները[61]։

Բամբակենու պտուղների՝ կնգուղների հասունացումը և բացվելը սկսվում էր օգոստոսի վերջերին։ Հենց այդ ժամանակ էլ սկսվում էր բերքահավաքը, որը սովորաբար կատարվում էր մոտ երեք անգամ, մինչև աշնան ցրտահարությունների սկսվելը։

Համեմատաբար սուղ են աղբյուրների տեղեկությունները քունջութի մշակության մասին, սակայն ձիթհանների վերաբերյալ եղած բազմաթիվ վկայությունները հավաստում են տեխնիկական այդ կուլտուրայի լայն տարածման մասին[62]։

Քունջութի մշակությունը կենտրոնացված էր հիմնականում Արարատյան դաշտավայրում ու Շարուր-Դարալագյազում։ Այն իր զարգացման առանձնահատկություններով քիչ էր տարբերվում բրնձի մշակությունից։ Քունջութից ստացված ձեթը, որ հայտնի էր «Շիրբախտ» անունով, ունեցել է դուրեկան հոտ և քիչ է տարբերվել ձիթայուղից[63]։ Առավել շատ օգտագործվել է քունջութի ձեթից պատրաստված հալվան։ Քունջութի մնացորդները, որ ստացվում էր ղռելուց հետո, իր ունեցած հատկություններով հիանալի անասնակեր էր և պատահական չէ, որ այն բարձր գներով է վաճառվել. «Քնջթի քուսբ առի ԺԸ (18) լդր. գինն ետու։ ԹՃ (900) դիան»,—կարդում ենք էջմիածնի վանքի 1758 թ. հաշվեմատյանում[64]։ Ըստ Շոպենի էջմիածնի վանքի հողատարածություններում իբրև գարնանային ցանք քունջութը զբաղեցրել է 4,5 խալվար ցանովի տարածություն, որից ստացվել է մոտ 1500 փութ բերք»[65]։ Ցանքը կատարվել է գարնան վերջերին, իսկ բերքահավաքը աշնան սկզբներին։ Քաղելուց հետո ոչ մեծ խրձերով կույտավորում էին, իսկ 6—7 օր անց, երբ կանաչ խրձերից սկսվում էր գոլորշի դուրս գալ, առանձնացնում էին ու փռում արևի տակ չորանալու։ 2—3 օր հետո, երբ տուփիկները պայթում էին խրձերը գետ-

նիվայր պահելով թափ էին տալիս և առանձնացնում հատիկները[66]։

Տեխնիկական կարևոր կուլտուրաներից էր և կտավհատը, որի մշակությամբ մեծամասամբ զբաղվել են երկրի հյուսիսարևելյան շրջանների բնակչությունը։ XVII դարի վրաց ժամանակագրության հեղինակ Վախուշտի Բագրատիոնի վկայությամբ Փամբակում մեծ տարածում ուներ կտավհատի մշակությունը, իսկ Տաշիր-Ձորագետում կային շատ ձիթհանքեր, որոնցում կտավհատի ձեթ էին ստանում, շատ վայրերում էլ կտավհատը չորացնում ու վաճառում էին[67]։ Կտավհատի մշակության կարևոր շրջաններից էր և Շիրակի սարահարթը, որտեղից իր կտավհատի ձեթը ստանում էր Էջմիածնի վանքի միաբանությունը[68]։ Կտավհատ է մշակվել նաև Արարատյան դաշտին հարող նախալեռնային շրջաններում. «Միայն լեռնակողմք նահանգիս Արարատայ,— գրում է Մ. Թաղիադյանը,—առատութեամբ մատակարարել կարեն սննդարար կերակրոց բնակչաց համօրեն Երևանայ... և զամենայն ազգս կտաւոյ և ձիթոյ»[69]։ Կտավհատի ցանքը կատարվել է հունիսի սկզբներին, երբ հողի ջերմաստիճանը շատ բարձր էր։ Բերքահավաքը սկսվել է օգոստոսի կեսերից։ Հատիկները տուփերից հանել են հարվածելով։ Յուղը օգտագործել են թե որպես սնունդ և թե որպես վառելանյութ։ Ավելի հաճախ այն քսել են քաշող անասունների վրա, նրանց վնասատու միջատներից պաշտպանելու նպատակով։ Կտավհատի թուփը անփոխարինելի կեր էր անասունների համար։

Համեմատաբար քիչ տարածում է ունեցել կանեփի մշակությունը։ Մեծամասամբ կանեփ ցանում էին բանջարանոցների եզրերին նեղ շարքերով։ Կանեփի ցողունից ստացված թելերից պատրաստում են հիմնականում ճոպաններ, իսկ սերմերը տրորում և օգտագործում էին իբրև սնունդ։ Հաճախ բամբակենու դաշտը իբրև պատնեշ շրջափակում էին կանեփի «տղկանեփ» կոչված տեսակով[70]։ Դա արվում էր հիմնականում անասուններից բամբակենու դաշտը պաշտպանելու նպատակով, քանի որ տղկանեփի թփերը ունեին դառը համ, որը ուտելուց հետո անասունը խուսափում էր

խորանալ դաշտի մեջ: Տզկանեփից ստացված յուղը օգտագործվել է իբրև լուսավորող նյութ:

## բ) Բանջարաբոստանային կուլտուրաներ

Բանջարաբոստանային կուլտուրաների մշակությունն առանց բացառության կատարվել է Արևելյան Հայաստանի բոլոր շրջաններում, չնայած՝ այդ տեսակետից առանձնահատուկ նշանակություն էին ստացել Արարատյան դաշտավայրի ու Նախիջևանի խանության հովտային շրջանները, ուր ոչ միայն բնական տեղումների քանակն էր բարձր, այլև ստեղծված էր արհեստական ոռոգման լայն ցանց: Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում XVII դարի կեսերի անհայտ մի հեղինակի Նախիջևանի խանության և մասնավորապես Ագուլիս քաղաքի ու նրա շրջակա վայրերի գովքին նվիրված էջերը. Հյուսիսային սահմանների անտաշ ու բազմակույտ լեռները, գրում է ձեռագրի հեղինակը, պաշտպանում են Ագուլիսի շրջանի բուսականությունը ձյունաբեր հողմերից, մինչդեռ հարավից նրա ցանքսերը և տունկերը բաց են գարնանային հովերի առաջ: Ամեն ինչ ձեռնտու է բնակչության պետքերը հոգալու համար և նպաստավոր «առ ի շինելոյ, տնկելոյ, սերմանելոյ և զարդինս ժողովելոյ: ...Ամենունակ է բարությամբ գաւառս այս, ցորենոյ, բանջարոյ և այլոց արմտեաց»: Ցանքսերը ոռոգվում են առատ անձրևներով և բազմաթիվ վտակներով, քանզի «յորդառատ է վտակօք»[71]: Նախիջևանի խանությունում բանջարաբոստանային կուլտուրաների առատության մասին է վկայում նաև այն փաստը, որ տեղի բանջարաբոստանային մթերքները առաքվել են երկրի այլ շրջաններ: Նույնիսկ Էջմիածնի վանքի կալվածատիրական տնտեսությունը, որում մեծ չափերի են հասել այդ կուլտուրաների մշակելի հողատարածությունները, առանձին բանջարաբոստանային մթերքներ ներմուծել է Նախիջևանի խանությունից. «Դ(4) ապասի եւու Թովմայ վարդապետին որ ջորիքն յԱգուլիս բանջարի, բակլե

գնալիս ժամանակին խարճած էր»,—կարդում ենք վանքի 1739 թ. հաշվեմատյանում[72]։

Իրենց լայն տեսականիով համեմատաբար մեծ իրացում են ունեցել բանջարանոցային կուլտուրաները։ Այդ կուլտուրաներից կաղամբի մշակությունը Հայաստանում հայտնի էր դեռ V դարից[73]։ Այն օգտագործել են սննդի մեջ՝ եփած, հում և թթու դրած վիճակում։ Հասունացման տևողության տեսակետից տարբերվել են վաղահաս և ուշահաս տեսակներ։ Մեծ մասամբ մշակվել է ուշահասը կամ գլուխ կաղամբը, որի արտաքին տերևները կանաչ էին, իսկ ներսինը՝ սպիտակ։ Ձմռանը թարմ կաղամբ ունենալու համար այն պահվել է հատուկ պատրաստված խրամներում. «Ե(5) շահի գ(6) փող ետու ներսի քալամի հորի վրա բանօղ ը(8) մշակաց է (7) փողով նոյեմբերի Ե(5)-ումն»,—կարդում ենք էջմիածնի վանքի հաշվեմատյաններից մեկում[74]։ Մեսրոպ Թաղիադյանցի տեղեկությունների համաձայն XVII դարի սկզբներին ջուղայեցի Կարապետ եպիսկոպոսի ձեռքով էջմիածնի բանջարանոցներում աճեցվել է և ծաղկակաղամբը[75]։ Այն կաղամբագլուխ չէր տալիս, իսկ որպես սնունդ՝ տապակած և թթու դրած վիճակում օգտագործել են լրիվ չբացված ծաղիկներով ծաղկաբույլերը։

Կաղամբի աճեցման համար ընտրել են փուխր, ջրաթափանց և օրգանական նյութերով հարուստ ավազախառն հողեր։ Կաղամբին հատկացված տեղամասը գութանով կամ արորով (նայած հողի կարծրությանը) վարելուց հետո բահերով բաժանել են մեկ ընդհանուր ջրման կետ ունեցող ատու-մարգերի, որոնց միջով ջուրը պտտվելով հոսել է։ Ջրելուց հետո թաց հողի մեջ տնկել են կաղամբի սածիլները, իսկ երբ հողը քիչացել է, հողուրագներով (թագուչակ) կատարել են քաղհան։ Դրանից մոտ 20 օր անց կատարել են հաջորդ ոռոգումը, որից հետո այն դադարեցվել է մինչև կաղամբի գլուխ բռնելը։ Այնուհետև կատարել են բների փափկեցման աշխատանքներ («պօղաղ լցնել»). «Ներքի պաղչայի քալամի պօղաղ լցնօղ գ(6) մշակաց վարձն ետու բաղչապանի ձեռօք հոկտեմբերի ԻԶ(26)-ումն»,—կարդում

ենք աղբյուրում[76]։ Կաղամբի բերքահավաքը կատարվել է աշնան վերջերին[77]։

Բանջարանոցային տարածված կուլտուրաներից էր բադրիջանը, որի մշակությամբ զբաղվել է Արարատյան դաշտավայրի, Նախիջևանի ու Ղարաբաղի խանությունների հովտային շրջանների բնակչությունը։ Հիշյալ կուլտուրայի վերաբերյալ ուշագրավ վկայություններ ունի Ադամ Օլեարիուսը. «Հայերին հայտնի է մեզ անհայտ բույսի մի տեսակ, որին անվանում էին բադինջան։ Այն իր ձևով և մեծությամբ նմանվում էր փոքր սեխի կամ հասած վարունգի։ Պտուղը ամբողջությամբ կանաչ է, իսկ կոթի մոտ կապտավուն։ Հում վիճակում այն չեն ուտում, որովհետև դառն է։ Եփած, յուղի մեջ տապակած վիճակում շատ համեղ է»[78]։ Բադրիջանը մշակվել է երկար ու հարթ մարգերում։ Թմբերի վրա մշակելու կարիքը չկար, քանի որ նրա թուփը կանգուն է, ունի ամուր ցողուն և գետնի վրա չի փռվում։ Սածիլումը կատարվել է գարնան կեսերին, երբ հողի ջերմաստիճանը նկատելիորեն բարձրացել է։ Բադրիջանի մշակության մեջ կարևոր էր կանոնավոր քաղհանը և հաճախակի փխրեցնելը, որը կատարվել է սեզոնի ընթացքում 3—4 անգամ հողի բեշ վիճակում. «Բադրիջանի Խ(40) քախանաւորի վարձ եառւ Դ(4) փօղով ձեռամբ վէքիլին»,—տեղեկացնում է աղբյուրը[79]։ Առաջին քաղհանը կատարվում էր սածիլումից 15 օր հետո, իսկ մնացածը ըստ կարիքի։ Սածիլումից 40—50 օր անց բադրիջանը սկսում էր ծաղկել, 15—20 օրից տալիս էր առաջին պտուղը, որից հետո ծաղկումն ու պտղաբերումը շարունակվում էին մինչև աշնան ցրտահարությունները։

Բանջարանոցային հաջորդ կուլտուրան, որ առավել լայն տարածում է ունեցել դաշտավարային ու նախալեռնային շրջաններում, դդումն էր։ Ըստ Ադամ Օլեարիուսի տեղեկությունների աճեցրել են դդումի կլոր, երկար ու կարճ կոթերով տեսակներ[80]։ Կլորը լայնատերև էր ու խոշոր։ Ցանել են հիմնականում մարգերի վերջնամասերի հարթ տարածություններում, քանի որ այն տարածվող բույս էր։ Գործածել

են կանաչ և հասած վիճակում կերակուրներ ու մուրաբաներ պատրաստելիս: Երկար կոթերով («սուրահի») դդումի համար ձողեր էին տնկում, որոնց վրա նա բարձրանում էր և երկար կոթերով պտուղ տալիս: Սրանցից բնակչությունը ձագարներ և գինեհամններ (գեոգրա) էր պատրաստում: Կարճ կոթերով (դդմիկ) տեսակը ունեցել է նախորդից ավելի փոքր չափեր, որը չորացնելուց և ներսի պարունակությունը դատարկելուց հետո գործածել են ընդեղենների սերմեր ու համեմունքներ պահելու համար:

Բանջարանոցային տարածված կուլտուրաներից էին սոխն ու սխտորը, որոնք օգտագործվել են կանաչ և գլուխ վիճակում: Մշակությունը կատարվել է երկրի համարյա բոլոր շրջաններում: Նախատեսված հողամասի հերկը կատարվել է աշնանը, իսկ գարնանը կրկնահերկվել է, փոցխվել ու մարգոցվել: Որպես պարարտանյութ լավ արդյունք է տվել մոխիրը: Ցանքը կատարվել է վաղ գարնանը, երբ տեղումների քանակը բարձր էր. «ՉԾԾ (650) դիան եսու հասարակաց պաղշայի սոխի և սխտորի մարգ փորող ԺԷ(17) մշակաց Ը(8) փօշով: Յակոբ վարդապետի ձեռօք մարտ ամսոյ Ժ(10)-ումն»,—տեղեկացնում է աղբյուրը[81]: Մշակվել է սոխի երկու տեսակ, որոնցից մեկը, որ հայտնի էր «գալեշ» անունով ուներ մանր ու երկարաձիգ գլուխ, հաստ պարանոց ու թույլ կծու համ, մյուսը ուներ կլոր մեծ գլուխ, խիստ կծու էր ու ջրահամ[82]: Հիշյալ կուլտուրաների բերքահավաքը կատարվել է աշնան սկզբներին, երբ չէին սկսվել աշնան անձրևները ու առաջին ցրտահարությունները. «ԺԲ(12) շահի եսու սոխհանող ԺԲ մշակաց տնտեսաբաշու ձեռօք սեպտեմբերի ԺԶ(16) Բ(2) շաբթին»,—կարդում ենք վերը հիշատակված աղբյուրում[83]: Հանելուց հետո սոխն ու սխտորը արևի տակ չորացրել են ու պահեստավորել ձմռանը օգտագործելու նպատակով: Որոշ կալվածատիրական տնտեսություններ (օրինակ էջմիածնի վանքի տնտեսությունը) կարողացել են այնքան շատ սոխ ու սխտոր պահեստավորել, որ դրանց մի մասը հանել են վաճառքի. «Երևան տարած սոխադին առինք ՆՌ(5000) դիան Զ(6) շահի»[84] կամ «Սըխ-

տոր ծախեցաք Ե(5) լիտր Ա(1) լիտրն Զ(6) շահի գինն առինք Լ(30) շահի»,—կարդում ենք էջմիածնի վանքի հաշվեմատյաններում[85]։

Մշակվող բանջարանոցային կարևոր կուլտուրաներից էին գազարն ու ճակնդեղը։ Այդ կուլտուրաների մշակության համար առավել նպաստավոր հողակլիմայական պայմաններ կային երկրի նախալեռնային ու լեռնային շրջաններում, որտեղ թե՛ գարնան անձրևներն էին առատ և թե՛ ձմռանը հողում կուտակված խոնավությունը։ Այս առումով հետաքրքրական է Կարբի գյուղաքաղաքի բնակչության և սատանայի միջև տեղի ունեցած հետևյալ զավեշտական պատմությունը, որ գրի է առել վաղարշապատցի Հարություն Արարատյանը. «Կարբեցիք սատանայի հետ պայման են անում, որ բերքը հասած ժամանակը՝ արտաքին երեսը պատկանի իրանց, իսկ ներքևի մասը սատանային։ Նրանք ցորեն են ցանում և սատանային միայն արմատն է բաժին ընկնում։ Միւս անգամ սատանան իւր բաժնի վերաբերութեամբ աւելի զգոյշ վարուեց և իրա համար որոշեց արտաքին երեսը, կարբեցիներին՝ ներքևի կողմը։ Նրանք այն ժամանակ ցանեցին ճակնդեղ, գազար և ուրիշ արմտեղեն։ Այսպիսով սատանային միայն չոր խոտը բաժին հասաւ»[86]։

Գազարի ու ճակնդեղի մշակությամբ զբաղվել են և Արարատյան դաշտավայրում, որտեղ դրանք ցանվել են վաղ գարնանը. «Գազարի հունդ առի Բ(2) խաւիլ. գինն ետու Բ աբասի Բ շահի գիտութեամբ լուսարար և ժամօրհնօղ վարդապետացն մարտի Թ(9) ումն»,—կարդում ենք էջմիածնի վանքի հաշվեմատյաններից մեկում[87]։ Դաշտավայրային շրջաններում գազարի ու ճակնդեղի համար առանձին հողամասեր չէին հատկացվում, այլ օգտագործվում էր բանջարանոցային ուրիշ կուլտուրաների համար նախատեսված ազատ թմբերը։ Դա միաժամանակ հողամշակության համար շատ նպաստակահարմար էր, քանի որ թմբերի վրա գազարի ու ճակնդեղի հողը միշտ փուխր էր մնում։

Բանջարանոցային տարածված կուլտուրաներից էր և պղպեղը, որը աճեցվել է նախալեռնային շրջանների հարա-

վայրին թերություն ունեցող հողերում։ Հարթավայրերում այն չի մշակվել, կամ էլ մշակվել է քիչ քանակությամբ։ Նույնիսկ էջմիածնի վանական տնտեսությունում գերադասել են պղպեղ գնել քան մշակել. «Պիպար առի Ե(5) խտիլ, գինն ետու ԱՌԲ (1002) ապասի Բ(2) շահի գիտութեամբ տեղապահ և ժամօրհնող վարդապետացն»—կարդում ենք վանքի հաշվեմատյաններից մեկում[88]։

Կարևոր էր նաև բողկի ու շաղգամի մշակությունը։ Եթե Հակոբ Կարնեցին տեղեկացնում է, թե Կարինի շրջանում աճում է «...բողկ և շաղկամ պարարտ և խոշոր»[89], ապա հասկանալի է, որ դրանց մշակությունը տարածված պետք է լիներ նաև նույն հողակլիմայական պայմաններ ունեցող Արևելյան Հայաստանի Գեղարքունիքի, Ապարանի ու Շիրակի շրջաններում։ Ավելին, աղբյուրների վկայությամբ հիշյալ կուլտուրաները մշակվել են նույնիսկ Արարատյան դաշտավայրում։ Այսպես, էջմիածնի հաշվեմատյաններից մեկում կարդում ենք. «Ճ(100) դիան ետու հասարակաց պաղչայի բողկի և շաղկամի տեղ փորող Բ(2) մշակաց Յակոբ վարդապետի ձեռօք մարտի ԺԲ(18)-ումն»[90]։ Հավանաբար խոսքը վերաբերում է բողկի ամսական տեսակին, քանի որ այն ցանվում էր գարնանից մինչև աշուն, իսկ տարեկան բողկը ցանվել է միայն աշնանը։ Ազգագրագետ Վ. Բդոյանի կարծիքով բողկի ու շաղգամի մշակությունը Արևելյան Հայաստանում խիստ սահմանափակ է եղել[91]։ Մինչդեռ, ինչպես տեղեկանում ենք ժամանակի բանաստեղծ Նաղաշ Հովնաթանի «Գովասանութիւն Երևանայ քաղաքին» երգիծական բանաստեղծությունից, քաղաքի շուկաներում «բօլ կու ծախեն բողկ ու շաղկամ»[92]։

Պակաս կարևորություն չուներ և ընդավորների դասին պատկանող բույսերի մշակությունը (ոսպ, սիսեռ, բակլա, լոբի)։ Ոսպը մշակվել է հիմնականում այնպիսի վայրերում, ուր օդի խոնավությունը բարձր էր։ Այս առումով լավ արդյունք է ստացվել Գեղարքունիքում ոսպի «գյուլյուլ» տեսակի մշակությունից, որը առանձնացել է իր խոշոր հատիկներով և դեղնասպիտակավուն գույնով[93]։ Սիսեռն ու բակլան

մշակվել են ավազահողերում, ինչպես նաև գետերին ու առուներին առափնյա հողատարածություններում: Ուշ միջնադարյան շրջանում գրի առնված առարկաներից մեկում այդ մասին կարդում ենք. «Եւ արդ ահա, մեծատուն ոմն հողագործ ցանեաց բակլայ և սիսեռն առ եզերս գետոյ միոյ: Եւ եկանէին ի շամբէ անտի սատք. կռունկք և քաղէին զսերմանս նորա»[94]: Բակլա մշակվել է նաև Էջմիածնի վանքի հողատարածություններում, որի մասին վկայում է հետևյալ տեղեկությունը. «Է(7) շահի Բ(2) փող եառ բակլի բաղչի առհանօղ Թ(9) մշակաց Ը(8) փօղով անտեսբաշու ձեռօքն յուլիսի ԻԲ(22) Գ(3) շաբթէն»[95]: Լոբի մշակվել է ինչպես Արարատյան դաշտում, այնպես էլ նախալեռնային շրջաններում: Առավել տարածված են եղել լոբու կարմիր, սպիտակ, սև բծերով և մաշ կոչված տեսակների մշակությունը: Առաջին երեք տեսակների հատիկները եղել են տափակ ու ձվաձև, մաշինը՝ փոքր ու կլոր[96]:

Բանջարանոցային վերոհիշյալ կուլտուրաներից բացի հայ շինականի տնտեսության մեջ նշանակալից է եղել նաև բազմատեսակ կանաչեղենի (կոտեմ, անանուխ, գինձ, թարխուն, սավզի, ռեհան, սամիթ և այլն) մշակությունը: Երևանում, օրինակ կանաչեղենի մշակության նպատակով «Սավզիքերի» անունով հատուկ հողատարածություն էր առանձնացված, որից ստացված կանաչեղենը վաճառվել է քաղաքի շուկաներում[97]: Էջմիածնի հաշվեմատյաններից տեղեկանում ենք, որ վանքը որոշ գումար է հատկացրել Երևանից սավզի գնելու համար[98]:

Արարատյան դաշտավայրը, Նախիջևանի ու Ղարաբաղի խանությունների հովտային շրջանները իրենց նպաստավոր բնակլիմայական պայմաններով վեր էին ածվել բոստանային կուլտուրաների մշակության կենտրոնատեղերի:

Բոստանային կուլտուրաներից համեմատաբար մեծ տարածում է ունեցել սեխի մշակությունը: Շարդենին, օրինակ, հայտնի է եղել սեխի մոտ 20 տեսակների մշակությունը, որոնց մեջ նա առանձնացրել է «դարմակ» վաղահաս տեսակը[99]: Մ. Թաղիադյանցի հավաստմամբ միայն Արա-

րատյան դաշտում մշակել են 10 տեսակի սեխ. շալախ, դոստիչան, ջառ-ջառ, սնեյվաղ, դըըլ-բուռնի, ալեմիշ, ղարամիշ, խորասանի, ղուլմա, որոնց մեջ լավագույնը շալախ և ղուլմա տեսակներն էին[100]։ Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ Երևանի շրջակա հողատարածություններում մշակվել է մեղրապտղ սեխ[101]։ Ադամ Օլեարիուսը տեղեկացնում է սեխի «շամամ» կոչված տեսակի մասին, որը, ինչպես նշում է նա, ուներ դեղնականաչավուն բծեր, կլոր տեսք, ու թեև այնքան էլ համեղ չէր, բայց ուներ շատ դուրեկան հոտ[102]։ Արարատյան դաշտի սեխը իր հատկություններով ավելի լայն սպառում է ունեցել։ Եվ պատահական չէ, որ Մ. Թաղիադյանցը վկայում է, թե Նախիջևանի խանության «...պտուղք հաւասարին պտղոյն Երևանայ, բաց ի սեխոց»[103]։ Նույնիսկ Երևանի խանության կառավարիչները, ինչպես երևում է մի վկայությունից, գերադասել են Արարատյան դաշտի սեխը. «Խանին համար երևանու եմիշ բերել տուի խե (45) հատ. գինն տուի ԲՌ (2000) դիան Ա(1) շահի»[104]։

Ձմերուկ մշակվել է Նախիջևանի խանությունում ու Արարատյան դաշտավայրում։ Էվլիա Չելեբին, օրինակ, տեղեկացնում է Նախիջևանի խանության բոստաններում ընտիր ձմերուկի մշակության մասին[105]։ Այստեղ աճեցվել է երկու տեսակի ձմերուկ՝ պահունի (սուլթան) և հասարակ (չիթ)։ Պահունին ունեցել է երկարավուն տեսք, հաստ կեղև, դեղնականաչավուն միջուկ ու պահվել է ողջ ձմեռը։ Սովորականը ունեցել է բարակ կեղև, կլոր տեսք, կարմիր միջուկ ու չի պահվել[106]։ Արարատյան դաշտավայրում ձմերուկ մշակվել է Արաքսի ափերին կից ավազախառն հողերում։

Կարևոր բոստանային կուլտուրաներից էր և վարունգը, որի մշակությամբ զբաղվել է ցածրադիր ու նախալեռնային շրջանների բնակչությունը։ Աճեցվել է երկու տեսակի վարունգ՝ գարնանային ու աշնանային։ Գարնանային վարունգը, որն ունեցել է երկարավուն ողորկ մաշկ, սածիլվել ու հավաքվել է գարնանը. «Էր ժամանակն գարնանային,

վասն որոյ կայր ի մէջ սեղանին վարունգ, որ է խիար»,— հայտնում է Առաքել Դավրիժեցին[107]։ Աշնանային վարունգը, որ փոքր չափի էր ու փշոտ մաշկով, սածիլվել է ամռան վերջերին, իսկ հավաքվել է աշնանը։

Բոստանային կուլտուրաներին հատկացված հողատարածությունները աշնանը գութանով հերկել են, իսկ գարնանը արորով կրկնահերկել։ Կապված ոռոգման հնարավորությունների հետ, այդ կուլտուրաների մշակությունը կատարվել է ինչպես հարթ մարգերում, այնպես էլ թմբերի վրա։ Անջրդի հողամասերում այն կատարվել է հարթ մարգերում, իսկ ջրովի պայմաններում՝ թմբերի վրա։ Սովորաբար թմբի լայնությունը վերցնում էին 1—1,5 մ, իսկ երկարությունը, որքան թույլատրեր ջրելու հնարավորությունը։ Թմբերը այնպես էին գցում, որ ջուրը բոստանի ամբողջ տարածքով դանդաղ, հավասար հոսի և ոչ մի տեղ չլճանա։ Առաջին ջուրը կատարվում էր ցանելուց 2—3 օր առաջ, որի ընթացքում ցածր մնացած ու ջրով ծածկված թմբերը բահով բարձրացնում ու հարթում էին։ Այդ նույն ժամանակ կատարում էին և թրջոց. սերմերը լցնելով տոպրակների մեջ 2—3 ժամ ընկղմում էին ջրում, ապա հանում և առվի եզրին ծածկում խոնավ հողով։ Մինչ սերմերը ծլում էին, ջրած հողը քեշանում էր և հողուրագով բացած բների մեջ գցում էին 3—5 ծլած սերմ ու ծածկում հողով։ Այնուհետև ցանքն առանց ջրելու մնում էր մինչև ծիլերի երևան գալը ու 1—2 տերև առաջանալը։ Տերևները կազմավորվելու ժամանակ կատարվել է առաջին նոսրացումը, երբ ամեն մի բնում թողել են 2—3 բույս։ Այնուհետև կատարել են ամենակարևոր աշխատանքներից մեկը՝ վարը, որի ժամանակ ձեռքի հողուրագով հեռացրել են մոլախոտերը և փխրեցրել բույսի շուրջը եղած հողը (պօղաղ լցնել). «Ջ(6) շահի նուհերսի պաղչայի խիյարի պօղաղ լցնօղ ղ մշակաց բաղչապանի ձեռօք»,—կարդում ենք աղբյուրում[108]։ Վար դնելու ընթացքում միաժամանակ կատարվում էր բույսերի վերջնական նոսրացում՝ թողնելով յուրաքանչյուր բնում մեկ բույս, որից հետո կապված տեղանքի առանձնահատկությունների

հետ տալիս էին 3-րդ, 4-րդ, 5-րդ ջուրը ու բերքը հավաքում։

Բոստանային կուլտուրաները մշակել են նաև նոր տնկած խաղողի այգիների թմբերի արանքում, մինչև որթի բերքատու դառնալը. «...ցանեաց ի մէջ որթոյն վարունգ և սեխ»,— տեղեկացնում է Զաքարիա Քանաքեռցին[109]։

## գ) Այգեգործություն

Արևելահայ գյուղացիության երկրագործական զբաղմունքի կարևորագույն բնագավառներից մեկն էլ ավանդական այգեգործությունն էր, որի մասին են վկայում ժամանակի կալվածագրերում, վիմական արձանագրություններում, հիշատակարաններում ու ժամանակագրություններում, մատենագրական երկերում հաճախ հանդիպող այգիների առուծախին, նվիրատվություններին, այգիներից վերցվող առանձին հարկերի մասին հիշատակությունները[110]։ Այգեգործության լայն տարածման մասին է խոսում Առաքել Դավրիժեցու վանդատը այն մասին, որ նույնիսկ հոգևոր դասի ներկայացուցիչներից շատերը թողել են իրենց սուրբ գործերը և զբաղվում են այգեգործությամբ. «Ամենայն վանօրայք ազգիս հայոց,—գրում է պատմագիրը,—իւրաքանչիւր սեղագլուխ ունէր իւր զինչս առանձին, այգի և բուրաստան, փեթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց նաև զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին»[111]։ Իսկ սոցիալական բովանդակություն ունեցող XVII դարին վերաբերող մի վկայությունում ասվում է. «Տեսանէք՝ մեծատունք ի ձեռն չարամիտ ծառայից և ննջավոր մշակաց փշօք պատեն զայգին և զդրախտն և նոքօք պահեն զմիրգն, բայց ի ժամ ճաշակման մրգին ոչ յիշեն զմշակսն և զծառայսն, որք պահեցին, և ոչ զփուշն, այլ միայն զտանուտէրն գովեն և լինեն շնորհակալ աղօթիւք»[112]։ Հարկ է նշել, որ նույնիսկ սեֆյան տիրակալները քաջ գիտակցելով այգեգործության նշանակությունը՝ պետության տնտեսական շահերից ելնելով ընդառաջել են

երկրագործության այդ առաջնակարգ ճյուղի զարգացմանը։ Ինչպես վկայում է Զաքարիա Քանաքեռցին. «...յորժամ էառ շահն զԵրևան, կարգեաց անդ իշխան Ամիրգունա խանն և պատուիրեց նմա նորոգել զբերդն, և տնկել զայգիսն, և փոյթ լինիլ շինութեան։ Վասնորոյ ամենեքեան սկսան շինել և տնկել զայգիս»[113]։ Ծառատունկ այգին աղբյուրներում հաճախ անվանվել է «պարտէզ» կամ «բաղչա»։ Այսպես, թվարկելով Էջմիածնի վանական տնտեսության այգիների քանակը Սիմեոն Երևանցին գրում է. «Դարձեալ ունի սուրբ Աթոռս յայս գեօղս (իմա՝ Վաղարշապատ—Հ. Թ.) մերձ իւրեան զերկուս ծառուտ պարտէզս՝ կից գերեզմանատան մերոյ»[114]։ Իսկ Բջնիի վանքի կալվածքները թվարկելիս նա գրում է. «Դարձեալ ի Քանաքեռ Վարդիկ անուն աղջիկ մի զմէկ լաւ ծառուտ բաղչայ հանդերձ իւր տներովն տայ վախմ ի ձեռն Յօվհաննէս վարդապետին ի ՌՃԾԷ(1708) թուոջն մերում»[115]։

Անհրաժեշտ է նշել, որ միայն առանձին շրջաններում պտղաբուծությունն ուներ արտադրական նշանակություն, իսկ առհասարակ յուրաքանչյուր քիչ թե շատ հողատարածություն ունեցող երկրագործ իր տնտեսությունում գցում էր ոչ մեծ այգի, որը բավարարում էր իր ընտանիքի պահանջմունքը, որոշ չափով նաև օժանդակ եկամուտ բերում։

Արտադրական նշանակություն ունեցող այգիները, որոնք կենտրոնացված էին Նախիջևանի ու Ղարաբաղի խանություններում, ինչպես նաև Արարատյան դաշտավայրում, առանձնանում էին տարածական մեծ չափերով։ Նման այգիներ գցելու համար առանձնացված հողատարածքը նախ բաժանվում էր մի քանի ուղղանկյունաձև մասերի, որից հետո առանձին շարքերով տնկում էին միևնույն տեսակի ծառեր (հիմնականում թթենի)։ Շարքերը միմյանցից բաժանվում էին 3—4 մ լայնություն ունեցող արահետներով, ծառաբուծական աշխատանքներ կատարելու նպատակով։ Առանձին դեպքերում ծառերը տնկվում էին միայն ուղղանկյունաձև հողատարածքի անկյուններում (հիմնականում ընկույզ, ծիրան), որի ժամանակ ծառերը մեծանալով կպնում էին միմ-

յանց՝ սավերելով հողատարածքը։ Նման տարածություններում միաժամանակ անասունների համար ցանում էին կերաբույսեր. «Ե(5) մշակ Մանկասարի յայգու ծառիրու մեջն ջրեցին, որ խոտ լինի ձիանքն արածեն, վարձն եառ մէկ շահօվ ձեռամբ վաքիլ Այվազին Ա(1) ապասի Ա. շահի»,— կարդում ենք Էջմիածնի վանքի հաշվեմատյաններից մեկում[116]։ Պտղատու ծառեր (դեղձ, սալոր, տանձ, խնձոր) միաժամանակ տնկում էին խաղողի այգիների մեջ, մեծամասամբ այդ այգիների վերջնամասերում։ Այսպես, 1745 թ. մի կալվածագրում կարդում ենք. «Ես յուշականցի Թումանի որդի Յարութիւնս իմ կամաւս իմ հայրենական Բ(2) տախտակ յայգին երեսն ծախեցի որքան որ խոտըն և իր ծառն կան ի մեջ նորա»[117]։

Ծառատեսակներից առավել շատ տարածում ուներ ծիրանենին[118], որը տնկելուց 4—5 տարի անց տալիս էր առաջին պտուղը, իսկ 8-րդ տարում դառնում լրիվ բերքատու։ Առանձնանում էր հատկապես վաղահաս ծիրանենին, որը պտուղ էր տալիս մայիսի վերջերին։ Ուշահաս ծիրանի բերքահավաքը կատարվում էր հուլիսին։ Առանձնանում էին ծիրանի նովրուստ, արջանաբադ, տաբարզա, աբութալիբ, կայսարի տեսակների մշակությունը, որը կատարվել է հիմնականում Երևանի խանության Գառնի-Վադի ու Կարբի գավառներում, Նախիջևանի խանության Օրդուբադի գավառում, Ղարաբաղում՝ Խաչենի գավառում[119]։ Տեղում մեծ իրացում է ունեցել ծիրանի չիրը։ Եվ պատահական չէ, որ նույնիսկ Էջմիածնի վանական տնտեսությունը, ինչպես վկայում են նրա ելք ու մուտքի մատյանները, հաճախ Գառնի ու Կարբի գավառներից մեծ քանակությամբ ծիրանի չիր է գնել[120]։ Ծիրանը ինչպես թարմ, այնպես էլ չորացած վիճակում միաժամանակ արտահանվել է Արևմտյան Հայաստան[121]։ Շատ արժեքավոր էր և ծիրանի փայտը, որը մեծ մասամբ օգտագործվել է երկրագործական գործիքներ պատրաստելիս։

Երկրի նախալեռնային ու հարթավայրային շրջաններում մեծ տարածում է ունեցել դեղձի մշակությունը։ Շնորհիվ իր

արագ աճին ու բերքատվությանը, դեղձի տնկիների մշակությունը կենտրոնացվել է հիմնականում այգիների ոռոգման ուղիների երկայնքով։ Ըստ զարգացման առանձնահատկությունների տարբերվել են դեղձի վաղահաս և ուշահաս տեսակները, որոնցից յուրաքանչյուրն էլ իր հերթին ունեցել է մի քանի այլ տեսակներ։ Վաղահասների մեջ առանձնացվել է հատկապես Նախիջևանի խանությունում մշակվող «դյուլի» տեսակը, որն ունեցել է դեղնա-սպիտակավուն գույն ու հեշտությամբ անջատվել է կորիզից[122]։ Հենց այդ տեսակն էլ օգտագործել են ալանի պատրաստելիս։ Արարատյան դաշտավայրում մշակվող դեղձի լավագույն տեսակներից էր «յարմա» կոչվածը, որն ուներ դեղնակարմրավուն գույն, մսալի էր ու չէր անջատվում կորիզից[123]։ Բերքահավաքը կատարվել է աշնանը ու թարմ վիճակում պահպանվել մինչև խոր ձմեռ։

Կարևոր պտուղներից էին տանձն ու խնձորը, որոնց մշակությամբ զբաղվել են հիմնականում նախալեռնային շրջաններում. «Զ(6) ապասի եառ. տէր Նիկողոսի հետ 'ի Գառնի գնացող ԺԲ(12) լիտր տանձի ու խնձորի»,—կարդում ենք սկզբնաղբյուրներից մեկում[124]։ Ըստ հասունացման առանձնահատկությունների տարբերվել են տանձի վաղահաս և ուշահաս տեսակները։ Վաղահասների շարքին էր դասվում Օրդուբադի շրջանում մշակվող «Մալաչա» կոչված տեսակը, որը, ինչպես հայտնում է Ադամ Օլեարիուսը, արտաքին տեսքով նման էր լիմոնի, ուներ դուրեկան հոտ և շատ հյութեղ էր[125]։ Նույն հեղինակի վկայությամբ տանձի մի քանի տեսակների մշակություն կատարվել է և Ղարաբաղի խանությունում[126]։ Երևանի խանությունում մեծ տարածում է ունեցել ուշահաս տանձի «Դաշ-արմուդ» տեսակի մշակությունը, որը ուներ ամուր կեղև, փոքր չափսեր և պահպանվել է ամբողջ ձմեռը[127]։ Խնձորը նույնպես ըստ իր զարգացման առանձնահատկությունների ունեցել է ամառային ու աշնանային տեսակներ, որոնք միմյանցից տարբերվել են տեսքով, մեծությամբ ու համով։ Համեմատաբար խնձորի մեծ տեսականիով առանձնանում էր Ղարաբաղի խանությու-

նը, ուր Մ. Թաղիադյանցի հավաստմամբ «...խնձորք անտառց նորա պարարտ են և համեղ յոյժ»[128]: Նախիջևանի խանությունում աղբյուրները հիշատակում են խնձորի «Սուլթանի» կոչված տեսակի մասին, որը միջին չափի էր, ուներ վառ կարմիր գույն, քաղցր համ ու պահվում էր մինչև խոր ձմեռ[129]:

XVII դարի վրաց ժամանակագրության հեղինակ Վախուշտի Բագրատիոնի հավաստմամբ Գուգարքում մեծ տարածում էր ստացել նռան ու թզի մշակությունը[130]: Այդ ծառատեսակները մեծ տարածություններ են զբաղեցրել նաև Սյունիքում, ուր Մ. Թաղիադյանցի հավաստմամբ «...չնաշխարհիկ են նուռն և թուզ»[131]: Իսկ Ղարաբաղի խանությունում նռան մշակության մասին Ադամ Օլեարիուսը հաղորդում է հետևյալը. «Ղարաբաղում գետերի ափերին մշակվում է նուռ, որի հատիկները թթու էին: Բնակիչները նռան հատիկները հանում էին, չորացնում ու վաճառում «Նարդան» անունով: Նարդանը օգտագործվում էր սնունդը մգացնելու ու թթվաշ դարձնելու համար: Նրանք միաժամանակ նռից ստանում էին թարմ հյութ»[132]:

Մեծ տարածում ուներ հատկապես թթենու մշակությունը, որը Ղարաբաղի ու Նախիջևանի խանություններում շերամապահության զարգացման հետ կապված, ուներ նաև արտադրական նշանակություն: Ըստ պտուղների գույնի մշակվել է սև և սպիտակ թութ: Ադամ Օլեարիուսը տեղեկացնում է, որ որոշ տարածում ուներ նաև «բանավուշ» տեսակը, որի պտուղը կարմրավուն էր ու շատ քաղցր[133]: Մեծ պահանջարկ է ունեցել հատկապես Նախիջևանի խանությունում մշակվող «Բեդանա» տեսակը, որը չուներ սերմ, պտուղները սպիտակավուն էին ու պարունակում էր մեծ քանակությամբ շաքար[134]: Այն միաժամանակ չորացվել է ու պահվել: Սև տեսակների մեջ առանձնացել է «Խարթութը», որը մշակվել է ինչպես Արարատյան դաշտավայրում, այնպես էլ նրան հարող նախալեռնային շրջաններում[135]:

Սյունիքում ու Ղարաբաղում մեծ չափերի է հասել հոնի և ընկույզի մշակությունը: Ինչպես տեղեկանում ենք Տաթևի

վանքի եկամտացանկերը ներկայացնող սկզբնաղբյուրից, վանքապատկան մի շարք գյուղեր իբրև բնամթերային ռենտա պարտավոր էին վանքին տալու նաև հոն և ընկույզ[136]: Մ. Թաղիադյանցի վկայությամբ Շուշի քաղաքի շրջակայքում «Հունն առատ է որպես յամենայն Սիւնիս»[137]: Իսկ Հարություն Արարատյանը տեղեկացնում է, որ «...պտղատու ծառերով մանաւանդ ընկուզենիներով» առատ է Գառնիի գավառը[138]: Հենց Գառնիի գավառից էլ էջմիածնի վանական տնտեսությունը ամեն տարի գնել է ընկույզ. «ԺԴ(14) շահի եառ տէր Նիկողոսի հետ 'ի Գառնի գնացօղ չրի և ընկուզի»[139]:

Տաթևի վանքի եկամտացանկերում առանձին հիշատակվում է «շլորի հող» կոչված հողամասը, որը վկայում է, որ շլորի կամ սալորի մշակությանը Սյունիքում մեծ տեղ են հատկացրել[140]: Ըստ զարգացման առանձնահատկությունների տարբերվել են սալորի վաղահաս և ուշահաս տեսակները: Վաղահաս տեսակը, որ ունեցել է դեղին գույն, մեծ մասամբ մշակել են Նախիջևանի խանությունում ու Սյունիքում: Բերքահավաքը կատարվել է հունիս-հուլիս ամիսներին: Ուշահաս տեսակը ունեցել է սև գույն ու համեմատաբար մեծ չափեր: Որոշ վայրերում, ինչպես օրինակ Գառնի ու Կարբիի գավառներում բերքահավաքը կատարվել է հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, ուշահաս խնձորի բերքահավաքի հետ միասին. «Թվին ՌՁԵ (1636) նոյեմբեր ԻԳ (23), ես՝ Բարդուղիմոս երէցս ցնոր սալորն քաղեցա ի ծառէն, որ սուրբ խաչէն յետև ծաղկեցան սալորիքն և խնձորիքն»[141]:

Հովտային շրջանների ջրառատ վայրերում ջրի հոսքի երկայնքով տնկվել են փշատի ծառեր: Դրանք հատկապես մեծ չափերի են հասել Շարուր-Դարալագյազի գավառում, որտեղից և իր տարեկան փշատն է ձեռք բերել էջմիածնի վանքի միաբանությունը[142]: Փշատի լավագույն տեսակը համարվել է «խաթունը», որը միաժամանակ բնակչության կողմից օգտագործվել է իբրև դեղամիջոց (կաթի պակասության դեպքում երեխամայրերը նորածիններին կերակրել են այդ փշատով)[143]:

Բացի վերոհիշյալից, մշակվող ծառատեսակներ էին նաև նուշը, բալը, կեռասը, սերկևիլը, զկեռը, շագանակը և այլն:

Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում հայ շինականի երկրագործական զբաղմունքի հիմնական ճյուղերից մեկը խաղողագործությունն էր, որի մասին աղբյուրները բավականին մանրամասն ու հարուստ տեղեկություններ են հաղորդում: Ըստ այդ տեղեկությունների, իրենց զարգացման առանձնահատկություններով տարբերվել է խաղողի որթի երկու խմբերի մշակություն՝ պառկած վազերով և կանգնած: Առավել շատ տարածված է եղել պառկած վազերով խաղողի՝ խարջի, մսխալի, ասկերի, գառան դմակ, եղնդարի, իծապտուկ, հաչաբաշ, ուրդուսի, խալիլի, հալեորուկ, զոմշի մամա, խոզակաշի, քիշմիշ, եզան աչք տեսակների մշակությունը: Շարդենը հատկապես առանձնացնում է քիշմիշ տեսակը, որը նրա ասելով ոչնչով չէր զիջում իրենց մուսկաթին[144]: Գուգարքում ու Նախիջևանի խանության առանձին շրջաններում մշակել են կանգնած խաղողի այծի ծիծ, արաղբարի, բարամի, գարգարի, դուզալի, մարանդի, սերկևիլի, ալի-դերեսի, խաթունի, թանի տեսակները, որոնց մեջ, ինչպես նշում է Ադամ Օլեարիուսը առանձնանում էր ալի-դերեսին իր սև հատիկներով, մեծ ողկույզով և հյութալիությամբ[145]: Հարկ է նշել, որ կանգնած վազերով խաղողի համեմատաբար քիչ տարածումը պայմանավորված էր նրա տեսակների թույլ բերքատվությամբ: Բացի այդ այն մշակում էին բացառապես ավազոտ ու քամոտ վայրերում, ուր ունակ լինելով պատուտակի նման բարձրանալու հատուկ պատրաստված փայտյա ցանկապատերին, արգելք էին հանդիսանում իրենց մեջ ամփոփված բանջարաբոստանային կուլտուրաների վրա ավազախառն քամիների ներթափանցմանը:

Ինչպես երկրագործական մյուս կուլտուրաների, այնպես էլ խաղողի մշակության համար հսկայական աշխատանք էր պահանջվում: Այն հիմնականում բազմացնում էին ցողունային կտրոններով: Բազմացման համար խաղողի կտրոնները պատրաստում էին աշնանը, իսկ ավելի հաճախ գար-

նանը՝ վաղերն էտելու ժամանակ։ Որպես կտրոն ընտրվում էին բարձր բերքատու տեսակներից առողջ և լավ զարգացած միամյա ընձյուղներ։ Կտրոնները նախ հատուկ տնկարաններում տնկում էին ակոսների մեջ 30—40 սմ խորությամբ ու 10—15 սմ հեռավորությամբ, որից հետո նրանց վերին ծայրերը կտրում էին այնպես, որ հողից դուրս մնա 2—3 բողբոջ (աչք)։ Տնկիները լավ արմատակալելուց հետո տեղափոխում էին այգու համար նախատեսված հողամասը. «Կամաւն Աստծոյ ես սրբոյ Խորվիրապու վանից առաջնորդ Աւետիք վարդապետս, մեր չարեքանոց կոչեցեալ այգւոյ տեղն, որ ի գեօղն Նորք, ետու Նորգցի Ղազարի որդի Մարկոսին այսու պայմանաւ, որ իւր բոլոր խարճովն և մասրաֆովն նորապես այգի և ծառ տնկեսցէ ի նմա»,—կարդում ենք 1771 թ. մի կալվածագրում[146]։ Հողամասը՝ կանոնավոր մշակելուց, ոռոգման հնարավորություններ ստեղծելուց հետո, ջրի հոսքին զուգահեռ բաժանում էին մարգերի կամ առուների, որոնց վրա էլ մոտ 1 մ հեռավորությամբ տընկվում էին արմատակալած տնկիները։ Այնուհետև, մոտ չորս տարի աստիճանաբար կատարում էին մարգերի վերափոխում, երբ մարգերի միջև ընկած հողատարածությունից, որը սովորաբար լինում էր 1,5—2 մ, հողի մի մասը աջ, մյուսը՝ ձախ մարգի վրա էին լցնում (թումբ թափել), որով և առաջանում էին ապագա այգու թմբերը ու մշտական առուները։ Մինչև տնկիների բերք տալը, այսինքն մինչև լիարժեք թըմբերի ստեղծումը, մարգերի արանքում աճեցնում էին բոստանային կուլտուրաներ. «...ցանեաց ի մեջ որթոցն վարունգ և սեխ»,—տեղեկացնում է Զաքարիա Քանաքեռցին[147]։ Սովորաբար թմբի երկարությունը չէր անցնում 1,5—2 մ-ից։ Թմբային սիստեմով այգիների մշակությունը բացատրվում է հիմնականում ոռոգելի ջրի պակասությամբ։ Յուրաքանչյուր թմբային այգի ուներ իր առանձին ջրման կետը (բանդ), որտեղից ջուրը լցվում էր այգու մեջ և պտտվելով թմբից-թումբ, դուրս գալիս այգու վերջնամասից։ Այգին ամռանը և աշնան սկզբներին ջրվում էր սովորաբար երեք շաբաթը մեկ, իսկ քանի որ նշված ժամանակամիջոցում հաճախ դըժ-

վար էր հասցնել ջրել, ուստի նման պայմաններում թմբային սիստեմի նպատակահարմարությունը կայանում էր նրանում, որ յուրաքանչյուր թումբ ջրելու ժամանակ իր մեջ վերցնում էր մեծ քանակությամբ ջուր (միաժամանակ թմբերի վերջնամասերում քարից փոքր պատնեշներ են պատրաստում), որը ներծծվում էր 3—4 օր անց։ Իսկ դա հնարավորություն էր տալիս թմբային այգիներին մինչև հաջորդ ոռոգումը պահպանելու բավարար չափով խոնավություն։

Խաղողի վազի մշակման կարևոր աշխատանքներից էր էտոցը, որի ժամանակ հեռացվում էին չորացած հին և նոր, ավելորդ ու անկանոն աճած ճյուղերը. «Էտու նորագեղի մեր այգոյ յէտելոյ. ինն հազար ութ հարիւր դիան»,—կարդում ենք սկզբնաղբյուրներից մեկում[148]։ Էտը կատարվում էր հատուկ մկրատներով կամ դանակներով վաղ գարնանը, մինչև վազի բողբոջների բացվելը։ Էտը բարձրացնում էր վազի բերքատվությունը, հեշտացնում այգու հետագա մշակման աշխատանքները։ Էտելու ժամանակ կտրված մասից հյութ է հոսում։ Դա արմատների կողմից հողից ներծծած ջուրն է, որը ցողունով բարձրանալով վեր, հոսում է կտրված մասից։ Այն անվանում էին «խաղողի լաց»։ Էտելուց հետո կտրված մատերը (արքատ) հավաքում էին. «Արքատ ժողովօղ ԻԲ (22) մշակաց վարձն էտու»,—կարդում ենք մեկ այլ սկզբնաղբյուրում[149]։

Հաջորդ աշխատատար պրոցեսը թմբերի փորելն էր, որը ոչ միայն փխրեցնում էր հողը, այլև ոչնչացնում մոլախոտերը։ Փորը կատարում էին բահերով ոչ ուշ քան ապրիլի կեսերը, երբ դեռ աչքերի բողբոջները (փինդ) չէին մեծացել. «Նորագեղի մեր այգոյ ԾԸ (58) փորօղ մշակաց ետու վարձ մին թուման հինգ հազար ԴՃ (400) դիան ձեռամբ տէր Սահակին»,—կարդում ենք Էջմիածնի վանքի մի հաշվեմատյանում[150]։ Փորելուց առաջ, որպեսզի հողը կոշտ չլինի այգին սովորաբար ջրում էին, որը կոչվում էր «առաջին ջուր»։

Հունիսի սկզբներից կատարում էին սուղ, որի ընթացքում հեռացնում էին արմատներից անկանոն աճած շիվերը,

ինչպես նաև արդեն երևացող ողկույզի արևի ճառագայթներից ծածկող տերևները։

Այգու խնամքի կարևոր պայմաններից մեկն էլ վազերին փաթաթված մոլախոտերի ոչնչացումն էր, որը կատարվում էր ամռան կեսերին. «Ղոփ այգոյ չայիր հաւաքօղ ԻԵ(25) մշակաց վարձ ետու»,—տեղեկացնում է աղբյուրը[151]։ Հենց նույն ժամանակ էլ կատարվում էր այգիների երկրորդ խշմարման պրոցեսը (առաջինը կատարվում էր էտելուց հետո), երբ ողկույզներով ծանրաբեռնված ճյուղերը գետնին չթափվելու նպատակով հատուկ փայտյա ձողերով ամրացվում էին։

Առանձնահատուկ նշանակություն ուներ այգու բուժումը, որը տարվա մեջ կատարվում էր մոտ հինգ անգամ տերևները բացվելուն պես։ Որպես բուժանյութ օգտագործվել է պղնձարջասպի և կրի խառնուրդը, ինչպես նաև ծծումբը։ Եվ պատահական չէ, որ առանձին անձնավորություններ զբաղվում էին միայն բուժանյութ պատրաստելով. «Ետու ևս կրչի Վիրապին, որ մեզ կիր տալոյ»,—կարդում ենք էջմիածնի վանքի հաշվեմատյաններից մեկում[152] Հակոբ Կարնեցու վկայությամբ ծծումբ հայթայթել են Ալաշկերտի դաշտից. «...աստի ելանէ քուքուրդ բաղում»,—գրում է նա[153]։

Սեպտեմբերի վերջերից սկսվում էր այգեկութը, որը շարունակվում էր մինչև նոյեմբերի կեսերը։ Քաղած խաղողը ուռենու ճյուղերից պատրաստված կողովներով տեղափոխում էին հնձաններ, ուր այն տրորվում էր ու վերածվում քաղցուի. «ԺԳ(13) ապասի Ա(1) շահի ետու բօշի այգու ԼԲ (32) քաղորի կես շահով. ԺԶ(16) կթոց կրօղ և կոխավորի Դ(4) ապասի Բ(2) շահի Անանիայ վարդապետի ձեռօք»,—կարդում ենք աղբյուրում[154]։ Ստացված քաղցուի մեծ մասը գնում էր գինու պատրաստմանը, որոշ մասից էլ ստանում էին դոշաբ, որը Ադամ Օլեարիուսի վկայությամբ օգտագործում էին հալվա ու սուջուխ պատրաստելիս[155]։

Խաղողի այգու խնամքի վերջին պրոցեսը այգեթաղն էր, որը կատարվում էր բերքը հավաքելուն պես։ Ղարաբաղի ու Նախիջևանի խանություններում, ուր ձմեռը կլիման համեմատաբար մեղմ էր, այգեթաղ չէին կատարում, իսկ Արա-

րատյան դաշտում և նրան հարող նախալեռնային շրջաններում, ուր ձմեռը խստաշունչ էր, ինչպես վկայում է Շարդենը. վազերը ցրտահարվելուց փրկելու համար ծածկում էին հողով[156]: Այգեթաղը աշխատատար պրոցես էր, որի համար էլ պահանջվել է մեծ քանակությամբ աշխատուժ: Օրինակ, ինչպես վկայում է աղբյուրը, Էջմիածնի վանական տնտեսության միայն «Վերի այգի» կոչվող հողատարածությունում այգեթաղին մասնակցել են 365 մշակներ[157]:

Աղբյուրներում որպես խաղողի այգու չափման միավոր հիմնականում հիշատակվում է «տախտակը». «...զիր բաժին չորս տախտակ այգին տայ յիշատակ սրբոյ Աթոռոյս», «...զիր բաժին յայգւոյն մէկ տախտակ և կէսն ծախէ»,— կարդում ենք «Ջամբռ»-ում[158]: Տախտակը իրենից ներկայացնում էր խաղողի այգիների զուգահեռ ձգվող հողի թմբաշարք: Ճիշտ է, տախտակի չափերը առանձին վայրերում տարբեր են եղել, սակայն այն չի անցել 50—60 թմբից: Ավելին լինել չէր էլ կարող, քանի որ գերջրման դեպքում այգու սկզբի թմբերը ավելի շատ էին ջուր ընդունում, քան վերջինները, որի հետևանքով այգու սկզբի թմբերի վազերի մազարմատները նեխում էին, իսկ վազը չորանում էր:

Հարթ տեղերում գցված տախտակները կոչվում էին «դոլամա», իսկ լանջային տեղանքում՝ «քոնդալան»: Թե դոլամա և թե քոնդալան տախտակները միմյանցից բաժանվում էին ուղիղ ձգված թմբերի սահմանագծերով՝ «միջնակներով». «...այգւոյս այսմիկ ի միջի մեծ միջնակէն ի վայր»,—կարդում ենք Ջամբռում[159]: Հողը, որի վրա պետք է հիմնվեր այգին, միշտ չէ, որ հարթ կամ լանջային տեսք է ունեցել: Պատահում էր, որ մեկ կամ երկու զուգահեռ տախտակներ գցելուց հետո ավելացած հողակտորի վերևի մասը լիներ լայն, իսկ ներքևինը նեղ: Նման վայրերում գցված այգիները կոչվում էին քաշ (պարսկերեն թեք). «...յօթն տախտակ և երկու քաշ»,—ասվում է Ջամբռում[160]:

Վավերագրերում որպես խաղողի այգու չափման միավոր գործածվել է նաև «առու» հասկացությունը: Դեռ XIII դարում Ստեփանոս Օրբելյանը, նկարագրելով սյունյաց դա-

հերեց Գրիգոր Սուփան իշխանի կողմից 901 թ. Մաքենոցաց վանքին կատարած նվիրատվությունը, գրում է, թե իշխանը Գառնի գյուղաքաղաքից վանքին է նվիրում «Շ(500) առու» այգի[161]: Կալվածագրերից մեկում էլ (գրված 1718 թ.) կարդում ենք «Թվին ՌՃԿԷ ես՝ Արամի որդի Յակոբս ես իմ կամաւս ծախեցի իմ մայրենիքէ բերած այգին, որ է հինգ յառու տեղ Սիամոնի որդի Մուքիլին»[162]: Նույն բնույթի մեկ այլ կալվածագրում ասվում է. «...ծախեցի իմ հայրենիք այգին, որ է ութ յառու տեղ»[163]: Առուն երկու թմբերի միջև ընկած այն տարածությունն էր, որտեղից հոսում է ջուրը: Ու եթե յուրաքանչյուր թմբի երկարության ու թմբից-թումբ ընկած տարածության չափերը համարենք անփոփոխ մեծություն, ապա հեշտությամբ կարող ենք որոշել 500,5 կամ 8 «առու» այգու ծավալը: Ինչպես նշել ենք, այգին, որը տախտակի տեսքի էր, 50—60 թմբից կամ առվից ավելին չէր կարող լինել: Իսկ ինչ վերաբերում է «500 առու» ունեցող այգուն, ապա պետք է նշել, որ ինչպես ճիշտ նկատել է Հ. Փափազյանը, այն վայրերում, որտեղ այգիների քանակը մեծ չէ, նշվում է այգիների թիվը (տվյալ դեպքում 5 կամ 8), իսկ Գառնիում տրված է նվիրվող բոլոր այգիների առուների քանակը միասին վերցրած[164]: Իրոք, հաշվի առնելով ինչպես Գառնիի, այնպես էլ երկրի նախալեռնային մի շարք այլ շրջանների հողային կառուցվածքը, տախտակները հնարավոր չէր զուգահեռ գցել: Տվյալ դեպքում «500 առու» այգի ասելով պետք է հասկանալ նույն վայրում կտրտված առանձին այգիներ, որոնց ընդհանուր քանակը կազմել է «500 առու»:

## դ) Ոռոգում

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում երկրագործության զարգացման կարևոր պայմաններից մեկը ոռոգման ցանցի կարգավորումն ու զարգացումն էր: Ջրառատ գետերի պակասը, ինչպես նաև ջե-

ղումների ցածր մակարդակը ստիպում էին կարևոր տեղ հատկացնել ոռոգմանը։ Արևելքի երկրների համար ոռոգման վճռական նշանակությունը շեշտել է Ֆ. Էնգելսը. «Որքան էլ Պարսկաստանում և Հնդկաստանում բնակալություններ են հաջորդաբար ծաղկել ու կործանվել, նրանցից յուրաքանչյուրը շատ լավ գիտեր, որ ինքն առաջին հերթին ամբողջական ձեռնարկատեր է գետահովիտների ոռոգման գործում, առանց որի հնարավոր չէ այնտեղ հողագործությամբ զբաղվել»[165]։

Արևելյան Հայաստանում ոռոգման ցանցի կանոնավորման բնագավառում XVII դարի երկրորդ քառորդից զգալի տեղաշարժեր են նկատվում։ Եթե պետական իշխանության կողմից չէին կատարվում առանձին մեծ ջրաշինարարական աշխատանքներ, այնուամենայնիվ մեծ ուշադրություն էր դարձվում գոյություն ունեցող ջրանցքների պահպանման վրա։ Վերանորոգվում էին հին ջրանցքները ու անցկացվում մի քանի նոր առուներ։ «Սկսաւ հանել զառուս, և առաւելով զջուրսն»,—հայտնում է Զաքարիա Քանաքեռցին Երևանի Ամիրգունա խանի ձեռնարկումների մասին[166]։ Ջրաշինարարական աշխատանքներ էին ծավալվում հատկապես Արարատյան դաշտում, ուր երկրագործական կուլտուրաների մշակությունը մեծ չափեր էր ընդունել։

Արարատյան դաշտի ոռոգման գործում մեծ է Քասախ գետի դերը։ Այն սկիզբ է առնում Ապարանի սարահարթից՝ Արագածից բխող աղբյուրներից։ Ապարանից ներքև Քասախը, որ հայտնի է նաև Կարբի գետ անունով, խոր կիրճով հոսում է դեպի Արարատյան դաշտ, իր մեջ ընդունելով մի քանի լեռնային վտակներ։ Գետը Այգեշատ գյուղի մոտ դուրս է գալիս նեղ կիրճից և բաժանվում առանձին ոռոգման առուների (մոտ 16)[167]։ Քասախ գետից ամենադժվարին պայմաններում անց էին կացված Աշտարակի և Օշականի (Տկահանի առուն) ջրանցքները, որոնք գործում էին և XVII դարում։ Կիրճից դուրս, գետից օգտվելու պայմանները թեթևանում են և այդ իսկ պատճառով նրա ջրերը լրիվ օգտագործվում էին թե՛ խմելու և թե՛ ոռոգման կարիքների

համար։ Սակայն ամռանը, երբ անձրևները դառնում էին հազվադեպ, ու Արագածի ձյան հալոցքը դադարում էր, ջրի մակարդակը խիստ իջնում էր և դժվարացնում այգիների ոռոգման աշխատանքները։ Այն հազիվ բավականացնում էր 360 հա այգիների և մոտ 150 հա բամբակի ցանքսերի ոռոգմանը[168]։ Ջրի սակավության պատճառով հողերի 1/4 մասն էր միայն մշակվում, իսկ ցորենի ցանքսերին և առվույտին հատկացված տեղերը մնում էին խոպան։ Հենց այդ պատճառով էլ Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը, ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին «մեծաւ աշխատութեամբ և դրամածախութեամբ» փոխեց Արագածից սկիզբ առնող ու Շիրակի դաշտը հոսող Ախուրյան գետի Գեղաձոր վտակի ընթացքը և ջրանցք անցկացրեց մինչև Քասախ գետը, վերջինիս ջուրը ավելացնելով «ութը ջրաղացի չափով»[169]։ Նույն կաթողիկոսի ջանքերով հիմնովին վերանորոգվում է Քասախից հանած հին ջրանցքը, որը ստանում է «Շահարխ» անունը[170]։

Արարատյան դաշտն իր մերձակա շրջաններով շարունակ օգտվել է Հրազդան գետի ջրերից։ Նրանցից անցկացված ջրանցքներից մեկը ոռոգում էր Քանաքեռից ներքև ընկած «Ղըզըլ-կալա» անունը կրող այգիները։ ԱբուՀայաթի առուն (13,3 կմ) սկիզբ առնելով Հրազդանի խոր բազալտե կիրճի ձախ ափից և անցկացվելով դժվարին տեխնիկական պայմաններում, ոռոգում էր Քանաքեռի ու Նորքի այգիները։ Մյուսը՝ Դալմայի ջրանցքը (6,5 կմ երկարությամբ) ոռոգում էր Երևանից հարավ ընկած տարածությունները մինչև Նորագյուղ և Փարաքար գյուղի մոտից իջնում էր Վաղարշապատ և ջրարբիացնում Էջմիածնի վանքապատկան այգիները։

Ձյան հալոցքից ու տեղումներից գոյացած ջուրը կուտակելու և ամռանը օգտագործելու նպատակով կառուցվում էին ջրամբարներ։ Այդ գործում նշանակալից էր կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու դերը։ Հենց նրա նախաձեռնությամբ էլ Վաղարշապատից հյուսիս, Մոլլա-Դուրսուն (այժմ՝ Շահումյան) գյուղի մոտ կառուցվում է մի ջրամբար, որը հայտնի է «Քարաքթի գյոլ» անունով։ Այդ ջրամբարն

օգտագործվել է մինչև 1700 թ.: Նույն կաթողիկոսի նախաձեռնությամբ կառուցվում են ևս երեք ջրամբարներ՝ մեկը «Քարաքթի գյուղից» ցած ընկած տարածություններում, մյուսը՝ Հռիփսիմեի վանքից արևելք և վերջինը Տոլուփ (այժմ՝ Դաշտավան) շրջակայքում[171]: Այս վերջին ջրամբարը պատաշար էր, իսկ շրջապատը ծառերով պատված:

Ջրային պաշարներն ավելացնելու նպատակով Փիլիպոս Աղբակեցին ու հատկապես Հակոբ Ջուղայեցին մեծ ուշադրություն են դարձնում ստորերկրյա ջրերի օգտագործման վրա: Վանքի շրջակայքի հողերը ոռոգելու նպատակով Փիլիպոս կաթողիկոսը ձեռնամուխ է լինում մի շարք հորերի փորմանն ու ընդուղիների անցկացմանը, որի շնորհիվ չորացվում են վանքի պատերը և միևնույն ժամանակ երևան է հանվում որոշ քանակությամբ խմելու ու ոռոգման ջուր: Այդ ընդուղիներից մեկը, որ հայտնի էր «Սարի քանքան» անունով, անցնում էր վանքի դրսի դռնից, տաճարի տակով ուղղվում էր դեպի Գայանեի վանքը և այնտեղից դուրս գալիս դաշտ[172]: Հակոբ Ջուղայեցին շարունակելով իր նախորդի աշխատանքը, 1655—1670 թթ. փորել է տալիս մի մեծ քահրիզ—քանքան և ջուրը ստորերկրյա անցքով տանում մինչև Գայանեի վանքից ներքև ընկած հողատարածությունները[173]: Նա միաժամանակ Քասախ գետի մոտերքից փորել է տալիս 5—6 կմ երկարությամբ ընդուղի, որը ջուր է հասցնում վեհարանի պարտեզը և միանում «Սարի քանքարին»[174]:

Ջրանցքներ ու ջրամբարներ են կառուցվում նաև Երևանի խանության այլ շրջաններում: Կարբիում, տեղի նշանավոր առևտրական Այվազի ծախսերով կառուցվում է «ծով մի մեծ և յեղանակս գարնան լնոյր ուղխից ջրով, զի յամառան եղանակին բաւականք լիցին անդաստանաց գեղջին»,—հայտնում է Զաքարիա Քանաքեռցին[175]: Նույն Այվազի ծախսերով ջուր է բերվում և Որդկան գյուղը[176]: Փորձեր են կատարվում նաև Արայի լեռան փեշերին ընկած հողատարածությունները ջրարբի դարձնելու համար ջրանցք տանել Հրազդան գետից Ղարաջորան (այժմ Արագյուղ)—Եղվարդ ուղղությամբ: Աշխատանքները, ինչպես վկայում է Զաքա-

րիս Քանաքեռցին տարվում էին հաշող և ջուրը պետք է հոսեր դեպի Եղվարդի դաշտը։ Սակայն Ղարաջորանի մուլքադար ոմն Հապուղ ղազմ ու գյուղի բնակիչները արգելք են հանդիսանում դրան և ջուրը դարձնում դեպի իրենց հողերը[177]։ Ակոռի գյուղում Սահակ և Զաքարե վաճառական եղբայրների միջոցով 1663—1671 թթ. կառուցվում է մեկ ամբարտակ ու նրա ջրանցքը[178]։ Նույնանման աշխատանքներ կատարվում են նաև Արևելյան Հայաստանի մյուս հատվածներում, հատկապես Նախիջևանի ու Ղարաբաղի խանություններում։ Այդ ուղղությամբ փութկոտ գործունեություն են ծավալում Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի վանքի ու Գանձասարի կաթողիկոսության միաբանները[179]։

Առուների ու ջրանցքների ամենամյա մաքրումը, նրանց պատահական վերանորոգումները, ինչպես նաև ջրից օգտվելու գործի կանոնավորումը, հատուկ կարգավորումներ էին պահանջում։ Ոռոգման սիստեմի կարգավորմանը հետևում էին միրաբները, ջուվարները, կամ գյուղական համայնքը։ Միրաբը նշանակվում էր խանի կամ գավառի կառավարիչների կողմից, յուրաքանչյուր գավառի համար մեկ տարի ժամանակով։ Նրա հիմնական պարտականությունն էր բնական հոսող, կամ մայր առվի ջրերը բաժանել առանձին գյուղական համայնքներին։ Ունենալով վարչական ու դատական լիազորություններ, միրաբը միաժամանակ հսկում էր իր ստորադաս վերահսկիչների՝ ջուվարների գործունեությունը, լուծում առանձին համայնքների միջև ջրի շուրջ առաջացած վեճերը, պահպանում հերթականությունը, ժամանակին օգնության հասնում վտանգավոր դրության մեջ ընկած գյուղերին, որոնց համար ստանում բավականին բարձր վարձատրություն. «Ետու ես երկու հազար դինար միրաբին, գիտութեամբ Ղունկիանոս վարդապետին»,—կարդում ենք էջմիածնի հաշվեմատյաններից մեկում[180]։ Ջնայած ոչ մի գյուղական համայնք չէր կարող զրկվել իրեն պատկանող հերթական ջրից, այնուամենայնիվ բացառիկ դեպքերում միրաբին իրավունք էր վերապահված դադարեցնել այս կամ այն գյուղի ջուրը, այն հատկացնել որևէ այլ համայնքի[181]։

Նման երևույթ տեղի էր ունենում գիրդավի (պարսկերեն ջուր-կտրուկ) ժամանակ։ Գիրդավին սովորաբար դիմում էին ամռանը, երբ ջուրը գետերում և առուներում պակասում էր և բոլոր գյուղերը չէր, որ կարող էին անընդհատ բավարար չափով ջուր ստանալ։ Առաջանում էր վտանգ, երբ գյուղը կարող էր կորցնել իր բոլոր ցանքսերը։ Գիրդավի էությունն այն էր, որ գավառի բոլոր ջրերը մեկից երեք օրով հատկացվում էին առաջին հերթին վտանգի մեջ գտնվող գյուղերին, որոնք պարտավոր էին սահմանված ժամանակում ոռոգել իրենց ցանքսերն ու այգիները։ Ապա այն ըստ հերթականության փոխանցվում էր ուրիշ խումբ գյուղերի[182]։ Ջուրը բաժանելիս սովորաբար մնում էր որոշ ավելցուկ։ Այն դրվում էր միրաբի տրամադրության տակ և կոչվում է «ավելի ջուր»։ Այդ ջուրը նա կարող էր տնօրինել կամ իր հայեցողությամբ, կամ էլ հատկացնել այն հողագործներին, որոնց ցանքսերը մինչև հերթական ոռոգումը չորանում էին։

Ջուվարները, որոնք գտնվում էին միրաբների իշխանության ներքո, նշանակվում էին սովորաբար մեկ առանձին գյուղի, կամ էլ մի քանի համայնքների համար, որոնք օգտվում էին մեկ ընդհանուր ոռոգման ուղուց։ Տվյալ համայնքի սահմաններում ջուվարները նույնպես օժտված էին վարչական ու դատական լիազորություններով։

Հաճախ ջրային ավագներ ընտրում էր համայնքը. «Այր մի Մխիկ անուն ի գեղջէն Քանաքեռոյ, որ էր ջրպետ գեղջըն»,—կարդում ենք Զաքարիա Քանաքեռցու մոտ[183]։ Համայնքի ջրային ավագների ֆունկցիաները նույնն էին, ինչ ջուվարներինն էր. ջուրը հավասարապես բաժանել համայնքի անդամներին, լուծել նրանց միջև առաջացած վիճելի հարցերը, կազմակերպել առուների վերանորոգման աշխատանքներ և այլն։ Հասկանալի է, որ չարաշահելով իրենց իրավունքները, ջուվարներն ու ջրպետներն միրաբների գլխավորությամբ կեղծիքի, խաբեության ու կաշառակերության ճանապարհներով կեղեքում էին աշխատավորությանը, անելանելի վիճակի մեջ դնում նրանց։

Ջուրը համայնքի անդամների միջև բաժանվում էր հետևյալ կերպ. նախ գյուղը բաժանվում էր առանձին խմբերի՝ տասնյակների, որոնց մեջ մտնում էին հավասար թվով ծխեր: Այնուհետև յուրաքանչյուր տասնյակի համար սահմանվում էր հերթ: Նույնանման բաժանման էր ենթարկվում ջուրը նաև տասնյակի ներսում, այսինքն այն բաժանվում էր ըստ հողի չափի և տասնյակի անդամները ամբողջ օրվա ընթացքում հերթով ջրում էին իրենց այգիներն ու բանջարանոցները: Յուրաքանչյուր ոք պետք է կարգ պահպաներ, որպեսզի ծխերը հերթով ստանային իրենց բաժին ջուրը: Ամբողջ օրը բաժանվում էր չորս քառորդի: Առաջին քառորդը սկսվում էր վաղ արշալույսից մինչև կեսօր, երկրորդը՝ կեսօրից մինչև մայրամուտ, երրորդը՝ մայրամուտից մինչև կեսգիշեր, չորրորդը՝ կեսգիշերից մինչև մյուս օրվա լուսադեմը[184]: Հաճախ ջրի օգտագործման շուրջ համայնքների, ծխերի միջև տեղի էին ունենում կռիվներ, ծագում անախորժություններ ու վեճեր, նույնիսկ կատարվում էին սպանություններ: Ինչպես տեղեկանում ենք 1573 թ. մի արձանագրությունից, Ջրվեժ և Ավան բնակավայրերի միջև ջրի շուրջ ծագած վեճից սպանվել է ոմն Խաչատուր. «Այս է տապանս Խաչատուրի, որ սպանաւ ի վերայ ջրիս Ջրվէժո»[185]:

Ջրատիրության իրավունքը պայմանավորում էր ջրի բաշխման անհատական, ընտանեկան-խմբակային, ներքին համայնական և միջհամայնքային սիստեմների գոյությունը:

Ջրի անհատական օգտագործման դեպքում մեկ ընտանիք իր ծախսերով ու աշխատանքով առոգման ուղի էր կառուցում ու միայնակ տնօրինում ջրի օգտագործման իրավունքը: Այսպես 1669 թ. մի կալվածագրից տեղեկանում ենք, որ ոմն Իսաղուլի իր հանած առուն մեկ արտի հետ միասին նվիրում է Դարաշամբի ս. Նախավկայի վանքին[186]:

Ջրի ընտանեկան-խմբակային օգտագործման դեպքում հարևանությամբ ապրող մի քանի ընտանիքներ սեփական ծախսերով ու աշխատանքով անցկացնում էին առոգման ուղի ու հավասարապես ջուրը օգտագործում: Ինչպես վկայում է 1678 թ. մի կալվածագիր ոմն Զաքարի դուստրեր Համա-

ափյուռ ու Հուռիկ, ինչպես նաև ոմն Գալուստի որդիներ Զաքար և Նազիկ Դարաշամբի ս. Նախավկայի վանքին են վաճառում իրենց «հայրենիք» ջրանցքը 28 հազար դինարով[187]։

Ջրի համայնքային սիստեմը պայմանավորված էր նրանով, որ ոռոգման ուղիների անցկացումը կատարվում էր տվյալ համայնքի բնակիչների սեփական միջոցներով ու աշխատանքով։ Այսպես, 1722 թ. մի կալվածագրում ասվում է, որ Օշական գյուղի համայնքը էջմիածնի վանքին է վաճառում գյուղի առվի 1/3 մասը, իսկ առվի վրա կատարած աշխատանքի ու ծախքի իրավունքը պատկանում է նույն գյուղի բնակիչներին[188]։

Միջհամայնական ջրօգտագործման պայմաններում ոռոգման ուղիները անցկացվում էին մեծ կամ փոքր գետերից ու սպասարկում մի քանի համայնքների։ Քանի որ բնահարկի դոյության պայմաններում հարկի ու ռենտայի չափը մեծապես կախում ուներ բերքատվության մակարդակից, ուստի նմանօրինակ ոռոգման սիստեմների կառուցումը հաճախ նախաձեռնվում էր կամ պետական իշխանության ներկայացուցիչների կամ էլ խոշոր ավատատերերի կողմից՝ համայնքների բնակիչների աշխատանքով։ Ինչպես տեղեկացնում է Սիմեոն Երևանցին, Մեծամոր գետից Երևանի Սաֆիկուլի-խանի նախաձեռնությամբ կառուցված ջրանցքի ջրերը ոռոգում էին ոչ միայն խանի անմիջական տրամադրության տակ գտնվող հողերը, այլև շրջակա Ալիբեկլու ու Սեֆիապատ գյուղական համայնքների հողերը նույնպես, որի դիմաց այդ համայնքների բնակիչները պարտավոր էին խանին տասանորդ վճարելու[189]։ Միջհամայնական ջրօգտագործման եղանակներից մեկն էլ բնական հոսող ջրերի վրա մի քանի համայնքների ունեցած իրավունքն էր։ Նման իրավունք, օրինակ, Քասախ գետի ջրերի մի մասի վրա ունեին շրջակա 20 գյուղերի համայնքներ, ինչպես նաև էջմիածնի վանական տնտեսությունը։ Այս մասին է վկայում շահ Աբաս II 1650 թ. Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսին տրված հետևյալ հրովարտակը. «...ջուր Քարցախ գետոյդ որքան և իցէ՝ յերկուս բաժանեսցի հաւասարապես, մին բաժինն միւս

դեղօրէյցն դաշտից և միւս բաժինն էջմիածնի Աթոռոյդ և իւր գեղջն լիցի»[190]։

Ջրօգտագործման հիշյալ սիստեմների պայմաններում գործածվում էին «գլուխ», «բահ», «թուխդ», «բաժին», «լուլա», «ջրաղաց», «օրավար», «շաբաթական» ջրի չափի միավորները, ինչպես նաև աղբյուրներից ժամով կատարվող հաշվարկը։ «Գլուխ» ջուրը ջրաչափման այնպիսի ձև էր, որի հիմքում ընկած էր հոսքի տևողության որոշակի ժամանակի սահմանափակման սկզբունքը։ Կալվածագրում (գրված 1691 թ.) ասվում է, որ ոմն Նունուֆար 6000 դինարով վաճառել է Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի վանքի վանահայր Հովհան վարդապետին «մեկ գլուխ ջուր»[191]։ Մեկ այլ կալվածագրից տեղեկանում ենք, որ ոմն Աստվածատուր նույն վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետին վաճառել է «երկու գլուխ ջուր»[192]։ «Գլուխ» ջուրը երկրի մի շարք վայրերում կոչվել է նաև «բահ» ջուր։ «Բահ» ջրի չափը որոշելիս, համայնիկին ջուր տալու ժամանակ վերահսկողը առվի հոսող մասում բահն իջեցնում էր ջրի մեջ։ Եթե ջուրը ծածկում էր բահի երկաթյա մասը, ապա դա կազմում էր մեկ «բահ» ջուր, երկու բահերը ծածկելու դեպքում՝ երկու «բահ» ջուր և այլն[193]։ «Թուխդը» կազմում էր յուրաքանչյուր քահրիզի ամբողջ ջրի 1/4 մասը։ Կալվածագրերից մեկում այդ մասին կարդում ենք. «...թվին ՌՃՂԷ (1748) որ ես՝ Խաչիկի որդի Ովսեփս իմ կամաւն ծախեցի մեկ թուխդ քահրէզ, որ Մհամատ Թաղաիրէն էինք առել, որ մին նուկի էր, գ(3) թուխդն վանքինն էր, մին թուխդն իմ՝ Ովսեփիս—էր. ես էլ կրկին ծախեցի մեր առաջնորդ Մարկոս վարդապետին, ԲՌ (2000) դինար փող առի»[194]։ Որպես ջրի չափի միավոր հիշյալ կալվածագրում գործածվում է նաև «նուկի» տերմինը, որը ինչպես երևում է վավերագրից կազմում էր «թուխդ» ջրի 1/4 մասը, կամ ամբողջ ընդուզու 1/16 մասը։ «Թուխդ» ձևին համարժեք, քահրիզներից կատարվող ջրի բաշխման դեպքում գործածվել է նաև «բաժին» ձևը։ Ինչպես վկայում է 1676 թ. մի կալվածագիր, ոմն Մելիքի որդիք 6000 դինա-

րով վաճառել են իրենց քաՀրիզի «մեկ բաժին» ջուրը Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի վանքի առաջնորդ Միքայել վարդապետին[195]։ «Լուլան» որպես ջրի չափի միավոր օգտագործվում էր սակավաջուր վայրերում, Հատկապես քաղաքներում, պարտեզներն ու բանջարանոցները ոռոգելիս։ «Լուլա» (պարսկերեն փոքրիկ խողովակաձև իր, ծորակ) ջրի չափը որոշելու նպատակով կավից թրծված տարբեր տարողության Հատուկ խողովակներ էին պատրաստում, որոնք վերաՀսկողը դնում էր ջրարգելակի տակ և մայր առվից այդ խողովակներով դուրս թողնում ջուրը։ Որպես ջրաչափման միավոր «լուլա» ջրի մասին ուշագրավ տեղեկություն ենք Հանդիպում Զաքարիա Ագուլեցու օրագրությունում կապված Խոջենց Թումանին պատկանող այգու վաճառքի օրինակի Հետ[196]։ «Ջրաղացը» ջրի չափը որոշվում էր ջրաղացի մեկ քարը պտտելու ունակ ջրի քանակով։ Այդ չափը, կախված քարի ղանգվածից, առանձին վայրերում տարբեր էր։ «Օրավար» և «շաբաթական» ջրերը տրվում էին Հատուկ ժամկետով և սնկախ Հողային տարածության ամբողջական ոռոգումից, կտրվում էին նշված ժամկետում։ Շաբաթական ջրի մասին ուշագրավ վկայություն ունի XVI դարի իտալացի ուղեգրող Վինչենցո Դ' Ալեսանդրին։ «Գյուղական շրջաններում,—գրում է նա,—սովոր են ջուրը տանել ջրելու Համար դաշտերը, մի շաբաթ մեկ տեղում, և մի ուրիշը մի այլ տեղ և այսպես բավականաչափ ջուր են տալիս ՀացաՀատիկի և վարթատունկերի»[197]։ Աղբյուրներից Հոսող ջրերի ժամով կատարվող Հաշվարկը Հատկապես կիրառվում էր ջրի բաշխման անՀատական սիստեմի դեպքում, այգիների ու բանջարանոցների ոռոգման ժամանակ։ Ինչպես վկայում է կալվածագիրը, ագուլեցի Խոջենց Թումանն ունեցել է անձնական միջոցներով Հանած մի աղբյուր, որի ջրի ընդՀանուր քանակը Հաշվվում էր 80 ժամ։ 1670 թ. Հիշյալ Թումանն խոջա Մուսաբեկին է վաճառում ամբողջ մի կտոր խաղողի այգի իր ջրի իրավունքով, որը, ինչպես նշված է կալվածագրում «ընդՀանուր ութսուն ժամի վաթսուն երկու ժամն է»[198]։ Ժամով կատարվող Հաշվարկ էր նաև «թասը» կամ

«Թանդը», որի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Շարդենը։ Ըստ այդ տեղեկությունների, այն առվի մեջ, որտեղից պետք է ջուր հատկացվեր դաշտը կամ այգին ոռոգելու համար, դնում էին մեջտեղում շատ փոքր անցք ունեցող կլոր, բարակ իրանով ու տարողունակությամբ բավականին մեծ պղնձյա թաս։ Երբ թասը լցվում և սկսում էր ընկղմվել, այն դատարկում էին ու նորից դնում ջրի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ չէր ավարտվել նախատեսված տարածության ամբողջական ոռոգումը։ Այն լցվել է 2—3 ժամում[199]։

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում նշանակալի զարգացման էր հասել ոռոգման ցանցի կատարելագործումը՝ ջրանցքների, առուների, ջրամբարների ու ջրհորների, քահրիզների ու քանքանների շինարարությունը։ Քանի որ գյուղատնտեսության համար, մասնավորապես Արարատյան դաշտում հողին հավասար նշանակություն ուներ ջուրը և երկուսը միասին կազմում էին արտադրության հիմնական պայմանը, ուստի ոռոգման կուլտուրայի բարձր լինելը շատ չափով պայմանավորում էր երկրագործական կուլտուրայի բարձրությունը։ Պետական իշխանությունն ու առանձին ավատատերեր անտարբեր չէին ոռոգման աշխատանքների նկատմամբ և շատ հաճախ իրենք էին կազմակերպում դրանք։ Հետևապես, ջրի հարցը թե աշխատավորության և թե շահագործողների ուշադրության կենտրոնում էր։ Եթե առաջինի համար այն ծառայում էր որպես անհրաժեշտ նախապայման իր աշխատանքը գործադրելու, ապա երկրորդի համար որպես միջոց՝ ավելի մեծ չափով հավելյալ արդյունք քամելու։

## 2. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի հողային տարածքի մոտ կեսը արոտավայրեր ու խոտհարքեր էին։ Ալպյան մարգագետինները երկրում մեծ տա-

բածությունն էին կազմում և իրենց բուսածածկույթի ու կլիմայական նպաստավոր պայմանների շնորհիվ լայն հնարավորություն էին ստեղծում անասնապահության զարգացման համար։ Ինչ վերաբերում է անասնապահության տեղաբաշխվածությանը, պետք է նշել, որ գյուղատնտեսության այդ ճյուղով զբաղվել են երկրի բոլոր շրջաններում։ Առաքել Դավրիժեցու հայտնած տեղեկությունների համաձայն անասնապահության զարգացման համար առավել նպաստավոր պայմաններ կային հատկապես Գեղարքունիքում։ Եվ պատահական չէ, որ պատմիչը շեշտում է, թե այստեղ մեծ չափերի են հասնում «ջոկք ոչխարաց և անասնոց»[200]։ Ինչպես տեղեկացնում են վրացական աղբյուրները, Գուգարաց աշխարհը նույնպես հանդիսացել է անասնապահության կարևոր շրջան։ Օրինակ, Վախուշտի Բագրատիոնը հավաստում է, թե «Տաշիրը անասուններով առատ է», իսկ Փամբակի շրջանում նույն հեղինակի խոսքերով «չոր խոտով է սնվում ոչխարը, կովը, գոմեշը, ձին, էշը, այծը, որոնք շատ են աճում»[201]։ Ադամ Օլեարիուսի վկայությամբ անտառային վայրերում տարածված էր խոզաբուծությունը, որով զբաղվում էին միայն հայերը[202]։ Իսկ իտալացի Վինչենցո Դ'Ալեսանդրիի տեղեկագրում մասնավորապես նշվում է Նախիջևանի խանությունում անասնապահությանը նպաստող պայմանների մասին։ Նա շեշտում է, որ այստեղ հատկապես տարածված էր մատուռ ոչխարների բուծումը[203]։ Լեռնային շրջաններում, հատկապես Զանգեզուրում առավել շատ տարածված էր մանր եղջերավոր անասունների բուծումը։ Առաքել Դավրիժեցու վկայությամբ այստեղ շատ էին հատկապես այծերը, իսկ Տաթևի վանքի եկամտացանկերում միայն Բնունիք գյուղի համար նշված է, որ այն վանքին տարեկան պարտավոր է վճարել 29 գլուխ այծ ու ոչխար[204]։ Ոչ խոտավետ վայրերում, ինչպես, օրինակ Օրդուբադի շրջանում աղբյուրները հիշատակում են գոմեշների բուծման մասին։ Յուրաքանչյուր գոմեշ տարեկան գործածել է միայն 75 փութ խոտ, ու թեև կաթնատվությունը ցածր էր՝ տարեկան մոտ 300 լ, բայց կաթը ուներ բարձր յուղայնություն[205]։

Բնական աշխարհագրական պայմանները լայն հնարավորություն էին ստեղծում անասնապահության զարգացման համար հատկապես Արարատյան դաշտավայրում։ Մեսրոպ Թաղիադյանցի հավաստմամբ Արարատյան դաշտավայրի «...արոտս հոտից» այնքան շատ էին, որ «խաշանք» լիուլի բավարարում էին Երևանի բնակչության սննդի պահանջմունքը[206]։ Եթե երկրի նախալեռնային ու լեռնային շրջաններում անասուններին շուտ էին ձմեռանոց տանում ու կերակրում չոր խոտով, ապա Արարատյան դաշտում անասունները մինչև խոր աշուն, իսկ առանձին տարիներին էլ մինչև ձմռան կեսերը կերակրվում էին դրսում։ Միաժամանակ Արարատյան դաշտավայրում ոռոգման ցանցի կարգավորումը ոչ միայն երկրագործության զարգացման կարևոր նախադրյալներից մեկն էր, այլ նաև անասնապահության, քանի որ այն անհրաժեշտ պայման էր թե՛ կերի կուտակման և թե՛ մթերատվության բարձրացման։ Այստեղ անասունների կերի մեջ աչքի էր ընկնում ցանովի յոնջան կամ առվույտը։ Առավել բարենպաստ տարիներին չորս անգամ յոնջայի հունձ է կատարվել։ Ի. Շոպենի տվյալներով, իրանական տիրապետության վերջին տարիներին միայն Երևանի այգիներից տարեկան ստացվել է 500000 կապ առվույտ, Կրխբուլաղի գավառի խոտհարքերից՝ 15 խալվար, Զանգիբասարի գավառից՝ 150000 կապ չոր խոտ, Գառնիի գավառից՝ 54 խալվար առվույտ[207]։ Առվույտի մշակության վերաբերյալ արժեքավոր են Ադամ Օլեարիուսի հաղորդումները։ Ըստ դրանց Սեֆյան տիրապետության սահմաններում առվույտի ամենալավ բերքը աճում էր Երևանի շրջակայքում. այնտեղ մեկ անգամ առվույտ ցանելուց հետո, մոտ վեց տարի նույն վայրում աճում էր, իսկ հաջորդ տարում հարկավոր էր այդ տարածությունները վարել և կրկին ցանել[208]։

Յոնջան առատ էր աճում և Նախիջևանի խանության ցածրադիր վայրերում, ուր ցանովի յոնջայի մեկ հեկտար հողատարածության միջին բերքատվությունը կազմել է մոտ 600 փութ[209]։ Անասունների ձմեռային կերի մեջ նշանակալից էր դարմանը, որը ստացվում էր ցորենի և գարու ցողուն-

ներից։ Դարմանը մեծ չափերով ստացվում էր ցորենով ու գարով առատ երկրի նախալեռնային շրջաններից. «Եսուք ևս կարբեցի Աշուր եսավուլին երեք թուման փող, յորմէ և դարման գնեցինք գիտութեամբ Ղունկիանոս վարդապետին»,—հաղորդում է էջմիածնի հաշվեմատյաններից մեկը[210]։ Որպեսզի դարմանը չոր մնար, պահել են այն հատուկ մարագներում. «Մարագի կտիր ցխօղ բանորք, ԿԹ(69) մշակաց վարձն եսու...», կարդում ենք էջմիածնի վանքի մեկ այլ հաշվեմատյանում[211]։ Ձմեռային կերի մեջ անասունների կաթնատվության բարձրացման համար հատկապես կարևոր էր քուսբը, որը ստացվում էր քունջութից։ Այդ մասին է վկայում հետևյալ վկայությունը. «Քնջթի քուսբ առի ԺԸ (18) լդր, գինն եսու ԹՃ (900) դիան»[212]։ Նկատվում է, որ քուսբը համեմատաբար բարձր գին է ունեցել։

Անասնապահությունը ըստ գյուղական բնակչության զբաղվածության երկու տիպի էր՝ նստակյաց և կիսաքոչվոր։ Այն շրջաններում, որտեղ կային և փարթամ արոտավայրեր և խոտհարքներ (Արարատյան դաշտ, Գուգարք, Նախիջևանի ու Ղարաբաղի խանությունների հովտային շրջաններ) տարածված էր գլխավորապես նստակյաց անասնապահությունը։ Կիսաքոչվորական անասնապահությամբ մեծ մասամբ զբաղվում էին այն շրջաններում (Կարբի, Գառնի, Սուրմալու), որտեղ ալպյան և տաք գոտիները զուգորդում էին իրար։ Նստակյաց անասնապահությունը իր բնույթով խոշոր եղջերավոր էր։ Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ նստակյաց բնակչությունը, որի զբաղմունքի հիմնական ճյուղը երկրագործությունն էր, իր տնտեսությունում իբրև քաշող ուժ հիմնականում օգտագործել է խոշոր եղջերավոր անասուններ։ Կիսաքոչվորական անասնապահությունը սերտորեն կապված էր մանր եղջերավոր անասնապահության հետ։ Թե նստակյաց և թե կիսաքոչվոր անասնապահությունը երկրի բնակչության հիմնական զբաղմունքն էր։

Կիսաքոչվորական կյանք վարող տնտեսությունները, ինչպես նաև ցածրադիր գոտու նստակյաց բնակչության մի մասը գարնան կեսերին իրենց անասուններով տեղափոխ-

վում էին լեռնային շրջաններ (յայլաներ), որտեղ կլիման զով էր, իսկ անասունների համար՝ կերը առատ։ Ժամանակ առ ժամանակ նրանք իջնում էին յայլաներից իրենց տնտեսություններում երկրագործական աշխատանքներ կատարելու համար։ Իսկ վերջնականապես նրանք իջնում էին աշնան կեսերին, երբ սարերում սկսվում էին ցրտերը, իսկ գյուղերում՝ բերքահավաքը։

Քոչվորական վայրերը Արևելյան Հայաստանում ընդարձակ տարածություններ չէին գրավում, քանի որ արոտավայրերի հիմնական մասը օգտագործվում էր երկրի նստակյաց ու կիսանստակյաց բնակչության կողմից։ Այնուհանդերձ, ազգաբնակչության մեջ որոշ տոկոս կազմող մահմեդական ցեղերը զբաղվել են քոչվորական անասնապահությամբ։ Քոչվորական անասնապահության մեջ գերակշռում էր մանր եղջերավոր անասնապահությունն ու ձիաբուծությունը։ Արոտավայրերի յուրացումը, որը կատարվում էր անասունների ամառային ու ձմեռային տեղի համար, ինչպես նաև ջրի հարցի լուծումը ու հոտի պահպանումը քոչվորական անասնապահության մեջ պահանջում էին, որ նույն արոտավայրերը անցնեն միևնույն ցեղին սերնդից սերունդ։ Այսպես, Ի. Շոպենի վկայությամբ Կարադոլու քոչվորական ցեղը ձմեռային արոտավայրեր ուներ Քուռ գետի հովտում, իսկ ամառային՝ Ղարաբաղի ու Զանգեզուրի յայլաներում։ Ալպյան մարգագետիններով հարուստ Կոտայքի շրջանի լեռնային մասերը համարվում էին քոչվոր Զոբանյանների արոտատարածությունները, իսկ Գեղարքունիքի արոտավայրերի մի մասը զբաղեցնում էին մի քանի քրդական ցեղախմբեր։ Ապարանի գավառի արոտավայրերի մի մասը ծառայում էր Սեիդլի-ախսախլինցիների անասուններին և այլն[213]։

Հարկ է նշել, որ գյուղացիության անասնապահական տնտեսությունների տեսակարար կշիռը երկրի ողջ տնտեսական կյանքում այնքան էլ մեծ չի եղել։ Եվ ինչպես երկրագործության մեջ, այնպես էլ անասնապահության բնագավառում գերակշռողը կազմել են վանական-եկեղեցական, քիչ չափով նաև աշխարհիկ կալվածատիրական տնտեսություն-

ները։ Օրինակ, Փարպիի ս. Կարապետ վանքի վանահայր Հովհաննես վարդապետի կտակում ասվում է, որ վանահայրը հիշյալ վանքին իր անշարժ ունեցվածքի հետ միասին նվիրում է մեծ քանակությամբ ձիեր, ջորիներ, գոմեշներ, եզներ, կովեր ու ոչխարներ[214]։ Անասնապահությունը զգալի տեղ է գրավել հատկապես Էջմիածնի վանքի կալվածատիրական տնտեսությունում։ Բաթրինջ գյուղն, օրինակ, ոչ միայն կաթողիկոսության ամառանոցային վայրն էր, այլև, ինչպես տեղեկացնում է Սիմեոն Երևանցին «...ունեցեալ է սուրբ Աթոռս ի գեօղս այս զխոտհարքս և զարոտատեղս անասնոց»[215]։ Իսկ Առաքել Դավրիժեցին նկարագրելով Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի տնտեսական ձեռնարկումները հայտնում է, թե վերջինս շինարարական մեծ ծավալի աշխատանքներ կատարելուն զուգընթաց հավաքեց նաև «...ուղտք և ջորիք և ջոկք խաշանց և անդեոց»[216]։ Վանքապատկան տնտեսություններում անասնապահության զարգացման մասին հետաքրքրական փաստ է նաև այն, որ այստեղ կիրառվել է հովվի վարձու աշխատանք. «Ետու ես մեր նախրչի Կիրակոսին Ծ(50) դիան»,—կարդում ենք աղբյուրում[217]։

Խոսելով Արևելյան Հայաստանի իրանական տիրապետության վերջերին անասնապահության մթերատվության մասին Ի. Շոպենը չափազանցության մեջ ընկնելով գտնում է, թե խոշոր եղջերավոր անասունների 1/3 կթու էր[218]։ Նախ չկան ավատական ու գյուղացիական տնտեսություններում անասունների տեսակների բաշխվածությանը վերաբերող տեղեկություններ։ Բացի այդ, հաշվի առնելով երկրագործության տիրապետող սիստեմի մասին եղած տվյալները դժվար չէ ենթադրել, որ բանող անասունների գլխաքանակի մեծ մասը գտնվել է գյուղացիական տնտեսություններում, հետևապես վանական տնտեսություններում եղածը հազիվ թե ապահովեր այդքան բարձր մթերատվություն։

Անասնապահության հետ կապված տնտեսական կյանքի կարևոր բնագավառ էր ոչ միայն կաթնամթերքի պատրաստումը, այլև բրդի մշակությունը, որը անհրաժեշտ նախա-

պայման էր մանածագործական արհեստի զարգացման համար։ Ոչխարներին և խոյերին խուզում էին երկու անգամ՝ մայիսի վերջերին և օգոստոսի առաջին կեսին, իսկ այծերին ու գառներին մեկ անգամ՝ ամռան վերջերին. «Թվին ՌՄԴ (1755) օգոստոս ամիս։ Երկու մկրատ եառ սրելու ոչխար խուզելու վարձն ետու Բ(2) շահի»,—ասվում է Էջմիածնի վանքի հաշվեմատյանում[219]։ Որակյալ բրդով աչքի էին ընկնում հատկապես Նախիջևանի խանության և Շարուր-Դարալագյազի շրջանի ոչխարները։ «Այդ ոչխարների բուրդը,—հայտնում է Ադամ Օլեարիուսը,—երկար էր, փափուկ ինչպես մետաքսը և շատ ավելի թանկ արժեր, քան մնացածները»[220]։

Հարկ է նշել, որ անասնապահության առաջընթացին մեծապես խոչընդոտում էր պետության հարկային սիստեմը։ Գանձվող հարկերը զուգակցվելով ամեն տեսակի կամայականությունների ու բռնությունների հետ, հյուծում էին հայ գյուղացուն, քայքայում նրա տնտեսությունը։ Այդ հարկերից, ինչպես նշել ենք, գյուղացիության համար առավել ծանր էր գնալով աճող անասնահարկը (չոբանբեկի կամ քոդալ), որի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին[221]։ Իսկ Երևանի Քեյխոսրով խանի 1647 և 1649 թթ. հրամանագրերից տեղեկանում ենք, թե ինչքան մեծ չափերի են հասել նույնիսկ Էջմիածնի վանական տնտեսությունից գանձվող անասնահարկի գումարները[222]։

Հայ գյուղացու անասնապահական զբաղմունքի ճյուղերից էր և թռչնաբուծությունը։ Պահել են հավ, հնդկահավ, բադ, սագ։ Ի. Շոպենի վկայությամբ Երևանի խանը երկրի տարբեր գավառներից ամեն տարի ստացել է մոտ 20000 ձու և 10000 թև/հավ[223]։ Առավել նշանակալից էր և աղավնիների բուծումը, որոնց արտաթորանքը, ինչպես արդեն նշել ենք, համարվում էր ամենալավագույն պարարտանյութը երկրագործական կուլտուրաների մշակության բնագավառում։ Որոշ տեղեկություններ էլ վկայում են ճտերի բուծման մասին, որոնք բտած հավերի հետ միասին օգտագործվել է սննդի մեջ. «Հասան-Ալի խանի համար ճուտ էր առել թվանք-

չի Օվացիմ է(7) հատ. գինն եառ Բ(2) ապասի Բ շահի. ճուտերն Թեսլիմ տէր Պողոսին»,—կարդում ենք Էջմիածնի վանքի հաշվեմատյաններից մեկում[224]։ Թռչնաբուծությունը մեծ չափեր էր ընդունել հատկապես Արարատյան երկրում։ Եվ պատահական չէ, որ Զաքարիա Քանաքեռցին հայտնում է, թե «երկիրն Արարատեան... Թռչնովք լի է ու առատ»[225]։

Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի առանձին շրջաններում առանձնահատուկ նշանակություն են ունեցել գյուղատնտեսական օժանդակ մի շարք զբաղմունքներ, որոնցից առավել նշանակալից են եղել մեղվաբուծությունը, շերամապահությունն ու ձկնորսությունը։

Թեև մեղվաբուծությամբ զբաղվել են երկրի համարյա բոլոր շրջաններում, բայց նրա զարգացման համար առավել նպաստավոր բնակլիմայական պայմաններ կային անտառային ու ծաղկավետ վայրերում։ Գուգարքում, օրինակ, ինչպես վկայում են վրացական աղբյուրները «Մեղրը շատ է և սպիտակ ինչպես ձյունը»[226]։ Զանգեզուրում մեղվաբուծության զարգացման մասին է խոսում այն փաստը, որ Տաթևի վանքի եկամտացանկերը պատկերող սկզբնաղբյուրներում վանքապատկան համարյա բոլոր գյուղերը պարտավոր էին բնավճար ունտայի անվան տակ վանքին որոշ քանակությամբ մեղր վճարել[227]։

Մեղվապահության վերաբերյալ մեծ հետաքրքրություն է ներկայացնում XVI դարի վերջերում Ղարաբաղում ոմն Ալեքսիանոսի կազմած «Վասն մեղուաց» անունը կրող ձեռագրի հատվածը։ Ձեռագրի հեղինակը մեղվապահությամբ զբաղվողներին դիմում է խրատներով (թվով 24), որոնք վերաբերվում են քթոցավոր փեթակների խնամքին ու պահպանմանը։ Այդ խրատներից մի քանիսը. խրատ 1) Մեղվանոցի տեղը պետք է լինի չոր և քամիներից պաշտպանված։ Փեթակները պետք է դասավորել բռնը դեպի հարավ, որպեսզի առավոտներն արևը շուտ ընկնի, իսկ երեկոները ուշ անցնի. խրատ 6) Փեթակները դասավորել գետնից երկու թիզ բարձրության վրա. խրատ 7) Երբ գարունը բացվի, համբերիր մինչև ձյունը հավասար հալվի և ծաղիկները

ծաղկեն, ապա նոր միայն փեթակները ձմեռանոցից դուրս դիր. խրատ 9) Մեղուները ձմեռանոցից դուրս դնելուց երեք օր հետո բացել միջնատախտակները, ծուխ տալ և դանակով մաքրել փեթակի ներսի կեղտն ու մահացած մեղուները. խրատ 12) Գարնանը փեթակի մեջ միջնատախտակը պետք է մոտիկ դնել բնին, իսկ երբ մեղուները շատանան, միջնատախտակը աստիճանաբար ետ քաշել մինչև փեթակի վերջը. խրատ 24) Մեղվի ձմեռանոցը պետք է լինի ոչ շատ տաք և ոչ էլ շատ ցուրտ։ Մեղվի տեղը պետք է լինի մութ և չոր։ Եթե ձմեռանոցը տաք լինի, մեղուն կանհանգստանա, չի քնի, մեղրը կուտի ու սովամահ կլինի, իսկ եթե ձմեռանոցը լինի ցուրտ և լուսավոր, փեթակում մեղուները կկոտորվեն, իսկ երբ խոնավ՝ մեղրը կթթվի[228]։

Վանքերում և եկեղեցիներում առավել շատ գործածվել է մեղրամոմը թե որպես սրահները լուսավորելու միջոց և թե որպես մոմ ստանալու հիմնական հումք. «Ետու չորս լիտր մեղրէ մոմի. մէկ լիտր ԲՌԸՃ (2800) դինար, զոր տվաք հաճի Ահմատ խան Բէկին, որ խնդրեաց ի վանքես»,—կարդում ենք էջմիածնի վանքի ելք ու մուտքի մատյաններից մեկում[229]։ Գրիգոր Դարանաղցու հավաստմամբ Երևանի ս. Անանիայի վանքի առաջնորդ Մովսես Սյունեցին (հետագայում կաթողիկոս) վերամշակելով մեղրամոմը ստանում է սպիտակ մոմ, որը լայն պահանջարկ ուներ[230]։

XVI—XVII դարերում Իրանի հում մետաքսի առևտրի մենաշնորհի համար լուրջ պայքար էր մղվում եվրոպական պետությունների միջև[231]։ Այդ պայքարին իր ակտիվ մասնակցությունը ունեցավ նաև հայ վաճառականության ընտրանին՝ Ջուղայի և Ագուլիսի խոջայությունը։

Դեռևս XVI դարի 2-րդ կեսից Ջուղայի խոջայությունը Արևելքի ու Արևմուտքի միջև կատարվող փոխանակային առևտրում սկսում է խաղալ գլխավոր միջնորդի դերը։ Վերջիններս քարավանային ճանապարհներով հում մետաքսը տանում էին Հալեպ ու Զմյուռնիա և վաճառում այնտեղ եվրոպական վաճառականներին։ Ինչպես վկայում է Ծամախուց Լոնդոն ուղարկված իր մի նամակում մոսկովյան անգ-

լիական առևտրական ընկերության գործակատար Արթուր Էդվարդսը, Ջուղայի վաճառականությունը տարեկան 400—500 ջորու բեռ մետաքս է տեղափոխում Հալեպ, իսկ այնտեղից բերում 800—1000 ջորու բեռ մահուդ և վենետիկյան կերպասներ[232]: Հայ խոշայական կապիտալի ներկայացուցիչները շուտով առևտրական հենակետեր են ստեղծում ասիական ու եվրոպական մի շարք երկրներում[233]: Եվ իզուր չի գրում Ադամ Օլեարիուսը, թե «Ամենաշատ և ամենահարուստ վաճառականները Պարսկաստանում հայ քրիստոնյաներն են, որոնք ամենուր երթևեկում են երկրում և նրանից դուրս»[234]:

Սեֆյան տիրապետության սահմաններում հում մետաքսի արտադրության կարևոր կենտրոններից մեկը Ղարաբաղն էր: Ըստ Ադամ Օլեարիուսի և Շարդենի տեղեկությունների Ղարաբաղում տարեկան արտադրվել է 2000 հակ (հակ=6 փութ) հում մետաքս[235]: Օլեարիուսը միաժամանակ մանրամասնորեն նկարագրում է հում մետաքսի ստացման եղանակները: Այստեղ,—գրում է նա,—շերամապահության զարգացման հիմքն էր թթենին, ուստի և տարեցտարի ընդարձակում էին նրա տնկարանները: Հիմնականում աճեցնում էին կարճահասակ, անպտուղ թթենիներ, կամ էլ այնպիսիները, որոնց պտուղը քիչ էր, իսկ տերևները շատ: Շերամի որդերը պահվում էին հատուկ տաքացված ձեղնահարկերում, ուր կերակրվելով թթենու տերևներով շատ արագ մեծանում էին ու վերածվում բոժոժների: Երբ բոժոժները վերջնականապես ձևավորվում էին, դրանք չորացնում էին արևի տակ, որից հետո սկսում առանձին թելիկներով անջատել հում մետաքսը[236]:

Ձկնորսությունը հատկապես Սևանա լճին սահմանամերձ գյուղերի բնակչության համար հանդիսացել է ապրուստի հիմնական միջոցներից մեկը: Սևանա լճում հաշվվում էր մոտ 9 տեսակի ձկներ, որոնց մեջ ամենալավագույնը հանդիսացել են իշխանը կամ բախտակը և կողակը: Իշխանը երկրի ներսում վաճառքի է հանվել թարմ վիճակում. «Թ(9) ապասի Բ(2) շահի կէս եաու ԽԸ (48), բախտակ ձկան

միաբանից տնտեսբաշու ձեռօք»,—ասվում է Էջմիածնի վանքի հաշվեմատյաններից մեկում[237]։ Կողակը մեծ մասամբ օգտագործվել է աղ դրած վիճակում։ Ձկներով հարուստ էին նաև երկրի մեծ ու փոքր գետերը, որոնց շրջակա գյուղերի բնակչությունը երկրագործության ու անասնապահության հետ միասին տարվա առանձին ամիսների զբաղվել է ձկնորսությամբ։ Հակոբ Կարնեցու վկայությամբ, օրինակ, Արաքսում «...ելանեն ձկունք անթիւ և զանազան ազգի», որոնցից նա առանձնացնում է ճանարը[238]։ Արաքսից որսում էին նաև լոքո ու թառափ։ Հրազդան գետից որսել են իշխան և կողակ։ Նշանավոր էր Դեբեդի ջրերում ապրող կարմրախայտ ձկան որսը, որը վրացական աղբյուրների հավաստմամբ ուներ շատ համեղ միս[239]։ Մեսրոպ Թաղիադյանցի վկայությամբ կարմրախայտի որս կատարվել է և Արխաշան-Ամբերդի ջրերում[240]։ Գետերից ձուկ որսել են ջրի մեջ տեղադրված ու ամրացված փայտի կողովներով կամ «թարբերով». «...թարփ մի բոլոր»,—կարդում ենք վիմական արձանագրություններից մեկում[241]։ Որոշ տեղերում օգտագործվել են թունավոր խոտաբույսեր, ինչպես օրինակ փռնդատը, որի մասին Մեսրոպ Թաղիադյանցը հայտնում է հետևյալը. «Ապա կալեալ յառաջ մի ջրոյն դարձուցին 'ի վտակն մեծ, որպէս զի դադարեսցի ջուրն 'ի սաստիկ յիւրոյ ընթացից և ապա առեալ ի խոտոյ փռնդատ, աստի խրձունս 'ի ձեռս՝ մխեցին 'ի ջուր և հարին գերեսօք քարանց, մինչև փրփրեցաւ ջուրն և ձկունք արբեալք որպէս 'ի գինւոյ՝ ելին կիսամեռ յերեսս ջրոյն»[242]։

### 3. ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԱՆՐ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում ապրանքային արտադրության նախնական տեսակը, որը տակավին չէր անջատվել գյուղատնտեսությունից, հանդիսացել է տնայնագործական ու մանր ապրանքային արտադրությունը։

Տնային եղանակով գյուղատնտեսական հումքի վերա-

մշակումը արտադրության կարևոր ձևն էր, քանի որ նա էր ապահովում սննդի ու հագուստի ինչպես նաև արտադրության գործիքների նկատմամբ գյուղական բնակչության պահանջները։ «Միջնադարյան հասարակության մեջ,—գրում է Ֆ. Էնգելսը,—արտադրությունը գլխավորապես սպառման համար էր։ Նա առավելապես բավարարում էր միայն արտադրողի ու նրա ընտանիքի կարիքները»[243]։ Ուրեմն տնայնագործական արտադրությունը մի պարզ կոոպերացիա էր, որում ընտանիքի անդամները աշխատանքի տարբեր տեսակների կատարմամբ համատեղ աշխատանքով բավարարում էին սեփական պահանջմունքները։ Բամբակի թելերից, օրինակ, տնային վերամշակման ձևով գյուղացիները ստանում էին գործվածքներ ու հագուստ. «Գզողին որ ԻԴ (24) լիտր բամբակ էր գզել վարձ ետու մէկ հազար ԲՃ (200) դիան»,—կարդում ենք սկզբնաղբյուրում[244]։ Նույն սկզբնաղբյուրը տեղեկացնում է և բրդի վերամշակման մասին. «Բուրդ մանել ետու Է(7) լիտր Ե(5) շահով, որոյ վարձ ետու ԷՃԾ (750) դիան»[245]։ Բրդից պատրաստում էին հագուստ, իսկ նրա կոշտ տեսակից, ինչպես նաև այծի մազից գործում էին մեծ տարողունակության ջվալներ, զանազան տիպի պարաններ՝ անասուններին կապելու, բարձած սայլերի բեռն ամրացնելու և այլ նպատակներով։ Այն հանգամանքը, որ յուրաքանչյուր գյուղական ընտանիք առանձին գործածում էր սանդ ու երկանք վկայում է, որ կատարվում էին նաև հացահատիկային կուլտուրաների վերամշակման աշխատանքներ։ Բացի այդ, ցորենի և բրնձի ցողուններից պատրաստում էին ամառային գլխարկներ ու սալաներ։ Տնայնագործական եղանակով էր կատարվում և անասնապահական մթերքների վերամշակումը։ Պանրի, յուղի և ճրագուի ստացումը գյուղական կանանց գործունեության կարևոր ասպարեզն էր։ Վերամշակվում էր և մորթին ու կաշին։ Մորթուց պատրաստում էին մուշտակներ ու գլխարկներ, իսկ կաշվից տրեխներ, փալաններ, իսկ ավելի հաճախ լծափոկեր, որոնք գործածում էին արորի, գութանի, կամի ու սայլի օգտագործման ժամանակ. «Բ(2) կաշի փոկ քաշել տվաք ձեռամբ վա-

քիլ Այվազին, վարձն եառ Ե(5) շահի»,—կարդում ենք աղբյուրներից մեկում[246]։

Սկզբնաղբյուրներում խաղողի հնձանների մասին եղած առատ վկայությունները հավաստում են, որ տնայնագործական արտադրության կարևոր բնագավառներից էր գինեգործությունը։ Հնձանները կառուցում էին խաղողի այգիներին կից, որի համար նախ փոս էին փորում, ապա հատակը սալապատում ու պատրաստում ավազան։ Ավազաններում լցնում էին խաղողը, ոտքերով ճմլում ու ստանում քաղցու. «ԺԳ(13) ապասի Ա(1) շահի եառ Բօշի այգու ԼԲ (32) քաղորի կես շահով, ԺԶ(16) կթոց կրօղ և կոխաորի»,—կարդում ենք սկզբնաղբյուրներից մեկում[247]։ Այնուհետև քաղցուն լցնում էին նախօրոք ախտահանված ու մոմով յուղված կարասները. («...Բ(2) շահի եառ կարասների իւղելոյ»)[248], որտեղ մի քանի օր անց այն սկսում էր եռալ, այսինքն սկսում էր խմորվել։ Խմորվելուց հետո գինին դառնանում էր, աստիճանաբար պարզվում և օգտագործվում։ Գինու ստացման մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին։ Մասնավորապես խոսելով գինու օգտագործման վրա արգելք դնելու վերաբերյալ պետական հրամանի մասին, նա գրում է. «Եւ քանզի հրաման թագաւորին վասն արգելման գինւոյ էր, և այժմ ևս պարսիկք յայմանէ կոչմանէ սկսան ամբաստանութիւն առնել զքրիստոնեից, թէ նոքա գինարբու ազգք են և հանապազ գինեւ պղծեն զջուրն, զի յորժամ զխաղողն ճմլեն զքաղցուն գինի առնեն և զկնճիռն վարեն ի ջուրն որով պղծի ջուրն և յորժամ կամին լուանալ զկարաս գինւոյ, բերեալ դնեն ի մէջ առուին մեկ և երկու օր ի թրջոց, և ապա լուանան և լուացունք ջուրն դարձեալ թափի ի յառուն ի մէջ ջրոյն»[249]։ Պետական իշխանության կողմից գինեգործության վրա արգելք դնելու մեկ այլ հրամանի մասին է հաղորդում Զաքարիա Ագուլեցին։ Նա տեղեկացնում է, որ 1654 թ. Երևանի Մուհամմատ-կուլի-խանի կարգադրությամբ, մոտ 6—7 ամիս ոչ միայն արգելվում է գինու գործածությունն ու վաճառքը, այլև բռնագանձվում հատուկ հարկ[250]։ Որոշ տեղե-

ղություններ էլ վկայում են օղու ստացման մասին: Օղի ստանալու համար քաղցուն և ճմլելուց հետո մնացած չանչը միասին լցնում էին կարասները, որտեղ խմորվելուց հետո լցնում էին հատուկ պատրաստված պղնձյա ամանների մեջ (50—60 լ տարողունակությամբ), ամուր փակում բերանը և տաքացնում: Ստացված գոլորշին պղնձյա խողովակներով անցկացնում էին սառը ջրի միջով, որտեղ այն վեր էր ածվում հեղուկի ու դատարկվում, որը և հենց թորած օղին է. «Արաղ քաշելու է(7) մշակին վարձն է տուն»,—կարդում ենք աղբյուրներից մեկում[251]:

Մանր ապրանքային արտադրությունը ենթադրում է առաջին հերթին աշխատանքի հասարակական բաժանում, երբ առանձին արտադրողներ մասնագիտանում են որոշ տեսակի արդյունքներ արտադրելու մեջ, ինչպես նաև, ի տարբերություն տնայնագործական արտադրության, մանր ապրանքային արտադրությունը մի կողմով նաև փոխանակության համար արդյունքներ ստեղծող արտադրություն է: Մանր ապրանքային արտադրության տեսք ուներ ձեռքի աշխատանքի վրա հիմնված գյուղական արհեստը, որը արտադրանքի պատրաստումն էր սպառողի պատվերով: Ընդ որում, նյութը կարող էր պատկանել թե պատվիրատու սպառողին և թե իրեն՝ արհեստավորին, իսկ աշխատանքը վարձատրվում էր կամ բնամթերքով կամ փողով: Ինչպես վկայում են աղբյուրները, մանր ապրանքային արտադրությամբ զբաղվող անտեսությունները գլխավորապես տեղակայված էին ինչպես օգտակար հանածոներով հարուստ վայրերում, այնպես էլ տեղական ներքին շուկաներին մոտ շրջաններում: Այսպես, օրինակ, Ալավերդու և Ախթալայի պղնձահանքերին մոտ գտնվող բնակավայրերի բնակչության զգալի մասը զբաղված էր պղնձի հայթայթմամբ: «Այստեղ Միխանայում (իմա՝ Ախթալա),—հայտնում է XVII դարի վրացական աղբյուրներից մեկը,—հանում են մեծ քանակությամբ պղինձ»[252]: Պղնձի արդյունահանումն ու մշակումը կատարվում էր պարզ եղանակով. հանքաքարը արդյունահանվում էր միայն վերին շերտերից, որից ստացված պղնձի տոկոսը շատ քիչ

էր։ Արդյունահանված հանքաքարը մանրացնում էին ու այրում հատուկ հողային վառարաններում։ Այդ վառարաններում շերտ-շերտ պղնձաքար ու փայտ էին լցնում և տակից այրում, որից հետո պղնձաքարը խառնում էին մանր փայտածուխի հետ և նորից այրում այնքան ժամանակ, մինչև պղինձն անջատվեր ուրիշ նյութերից։ Այրված հանքաքարը, ձուլելու համար լցնում էին կավից կամ քարից պատրաստված հատուկ կաղապարների մեջ, որոնց վրա նախօրոք փորագրված էին ձուլվող իրերի պատկերները. «...որպէս պղնձնղէնն ի հուր հալեալ և թափեալ ի կաղապար ինչ՝ կերպարանի և ձև առնու»,—կարդում ենք ձեռագրերից մեկում[253]։ Ստացված մետաղը, կամ ձուլված իրը մասամբ առանց միջնորդների վաճառվում էր տեղում, որոշ դեպքերում էլ գյուղացիները դրանք տանում էին ուրիշ վայրեր ու փոխանակում իրենց անհրաժեշտ այլ ապրանքների հետ։ Անգլիացի Ջոն Նյուբերիի վկայությամբ նույն կերպ էին վարվում և Կողբի աղահանքերից աղի արտադրությամբ զբաղվող աղահատները[254]։

Գյուղական մանր ապրանքային արտադրությանն էր վերաբերում նաև քարահատությունը։ Քարահանքերը, որոնք շատ էին երկրում, բաժանված էին առանձին տեղամասերի և ով առաջինը մաքրում էր քարահանքի վերին շերտը, նա էլ դառնում էր այդ վայրից քար կտրողը։ Հատկապես շահավետ էր ջրաղացի քարեր կտրելը, որով, ինչպես վկայում է Էվլիա Չելեբին մասնագիտացել էին Սուրմալուի ու Կաղզվանի շրջանների բնակիչները[255]։ Հարություն Արարատեանի վկայությամբ «պատուական ջրաղացաքարերի» արտադրությամբ զբաղվում էին Արարատ լեռան հարավային ստորոտում գտնվող Առհաչ գյուղի բնակչությունը[256]։ Քարահատները միաժամանակ քար էին կտրում առանձին պատվիրատուների պահանջով, ստանալով առանձին վարձատրություն. «Ետու ես մէկ թուման վեց հազար ԲՃ(200) դինար փող մէկ հատ ջրաղացաքարի ձեռամբ աթոռակալ Ղունկիանոս վարդապետին»,—կարդում ենք Էջմիածնի վանքի հաշվեմատյաններից մեկում[257]։

Առանձին պատվիրատուների պահանջով են աշխատել և կիր հայթայթողները[258]։ Կիրը ոչ միայն որպես բուժանյութ է օգտագործվել, այլև հանդիսացել է որպես շինանյութ անհրաժեշտ պայման ամեն տեսակի կառուցումների համար։ Այսպես, նկարագրելով Հովհաննավանքում կատարվող շինարարական աշխատանքները, Առաքել Դավրիժեցին տեղեկացնում է, որ վանքի արագ վերանորոգումը մեծապես պայմանավորված էր շրջակա վայրերում մեծ քանակություն կազմող կրահանքերից հումքի արագ փոխադրման հետ[259]։ Նույն Դավրիժեցու վկայությամբ, 1665 թ. Աշտարակում Քասախ գետի վրա կառուցվում է կամուրջ «...ամուր և հաստատուն կրով»[260]։

Համեմատաբար բարձր գներով է վարձատրվել գաջ արտադրողների աշխատանքը. «ԺԸՌ (18000) դիան ետու գաջպաղ Պաղտասարին, Ղազարին և Սաֆռազին, որ սոմարն Ը(8) փօղով գաջ տան»,—կարդում ենք Էջմիածնի վանքի ելք ու մտքի մատյաններից մեկում[261]։

Փայտամշակությունը ևս գյուղական մանր ապրանքային արտադրության ճյուղերից մեկն էր, որը գյուղական բնակչությանը ապահովում էր երկրագործական գործիքներով։ Փայտամշակ գյուղական արհեստավորների աշխատանքը մեծ չափով տարածվել է վանական-եկեղեցական կառույցներում։ Օրինակ Էջմիածնի վանքի սառնատան կառուցման աշխատանքներին, ինչպես վկայում է աղբյուրը, մասնակցել են «...տախտակ քաշօղ խառատներ»[262], իսկ Հովհաննավանքի վերանորոգման ժամանակ, Առաքել Դավրիժեցու վկայությամբ, վանքի վանահայր Զաքարիա վարդապետը. «...ժողովեաց բազում վարպետս քարահատ և փայտատաշ, և զձեռն ի գործ էարկ սկսաւ նորոգել զվանքն»[263]։

Գյուղական մանր ապրանքաարտադրողների որոշ մասի հիմնական զբաղմունքը ներկերի արտադրությունն էր, որոնք ստացվում էին բուսական, մասամբ և կենդանական ծագում ունեցող նյութերից։

Որպես բուսական ներկ արժեքավոր էր հատկապես տորոնի արմատը, որով հիմնականում ներկում էին բրդյա

գործվածքները։ Ֆրանսիացի ուղեգրող Տավերնիեի վկայությամբ Գողթան գավառում արդյունահանվում էր Ռոնաս (Ronas) կարմրաներկի արմատը, որով կտավ էին ներկում[264]։ Սև գույնի ներկ ստանալու համար գործածել են ընկուզենու տերևը կամ արմատի հավելված մասը, որից ստացված ներկը, ինչպես վկայում են աղբյուրները անջնջելի էր ու չէր գունաթափվում[265]։ Գղթորից, ինչպես վկայում է աղբյուրը ստացել են թանաք. «ԽՃ (500) դիան եառ Ա(1) ապասի գխտորի վասն թանակ եփելոյ»[266]։ 1752 թ. գրված մի ձեռագրում էլ պահպանվել է գղթորից սև, կապույտ, շագանակագույն ու վարդագույն գույնի ներկեր պատրաստելու եղանակներ[267]։ Ադամ Օլեարիուսի վկայությամբ Ղարաբաղում որպես կարմիր գույնի ներկի ստացման հումք գործածում էին նաև կեղևը[268]։

Կենդանական ծագում ունեցող ներկերից ամենալավագույնը իսպանացի ուղեգրող Կլավիխոյի հավաստմամբ Որդան կարմիրն էր, որն ստանում էին Արարատ լեռան հյուսիս-արևելյան ստորոտին աճող սեզ խոտի վրա ապրող որդերից[269]։

Գյուղական մանր ապրանքային արտադրության տեսք ուներ կավի հայթայթումն ու վերամշակումը, որը ապահովում էր բնակչությանը կարասներով, թոնիրներով, կժերով, փոքր չափսերի ամաններով ու կենցաղային այլ առարկաներով։ Պատրաստված բրուտագործական իրերի մի մասը երկրի ներսում կամ փոխանակվել է կամ էլ վաճառվել. «Բրուտ Դիլանչուց ԳՃ(300) աման առինք մեծ ու փոքր»,— կարդում ենք Էջմիածնի վանքի հաշվեմատյաններից մեկում[270]։ Հատկապես մեծ պահանջարկ է ունեցել գինու կարասների արտադրությունը, որով մասնագիտացել էին մասնավորապես Արարատյան դաշտավայրում Յուվա գյուղի բնակչությունը։

